

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱԲՈՒԶՅԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 343.9 (07)
ԳՄԴ 67.51 ց 7
Գ 125

*Ուսումնական ձեռնարկը հրատարակվում է ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
երաշխավորությամբ*

Գրախոսներ՝ ի. գ. թ., դոցենտ Ա.Ռ. Մարգարյան

ի. գ. թ., դոցենտ Տ.Վ. Սիմոնյան

Գաբուզյան Ա.
Գ 125 Հանցավոր վարքագծի մոտիվացիա /Ա.Գաբուզյան – Եր.:
Հեղինակային հրատ., 2017. – 96 էջ:

Բուհական դասընթացի ծրագրին համապատասխան ձեռնարկում լուսաբանվում են հանցավոր վարքագծի մոտիվացիայի հասկացությունը, էությունը, փուլերը, տեսակները և հանցագործությունների կանխման հիմնախնդիրները: Որպես ձեռնարկ տպագրության է երաշխավորված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների համար: Կարող է օգտակար լինել իրավապահ և դատական մարմինների աշխատողների, իրավաբանների և կրիմինալոգիայի հարցերով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 343.9 (07)
ԳՄԴ 67.51 ց 7

ISBN 978-9939-0-2228-4

© Գաբուզյան Ա.Ղ., 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԹԵՄԱ 1. ՀԱՆՑԱԿՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ	
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ	6
§1. Մարդկային վարքագծի մոտիվացիայի հասկացությունը	6
§2. Պահանջումը	9
§3. Դրդապատճառ	15
§4. Դրդապատճառների գիտակցվածության հիմնախնդիրը	23
§5. Մարդկային արարքի բազմամոտիվացվածությունը: Դրդապատճառների պայքարը	26
§6. Մոտիվացիայի արտաքին և ներքին պայմանները	29
§7. Դրական և բացասական մոտիվացիա	30
§8. Մոտիվացիայի փուլային բնույթը: Կրճատ մոտիվացիա	30
§9. Անձի ուղղվածությունը	33
§10. Անձի մոտիվացիոն հատկությունները և մոտիվացիոն ոլորտը	34
ԹԵՄԱ 2. ՀԱՆՑԱԿՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱ	38
§1. Հանցավոր վարքագծի դրդապատճառները	38
§2. Նպատակադրումը	43
§3. Նպատակին հասնելու միջոցների ու եղանակների ընտրությունը	45
§4. Հնարավոր հետևանքների կանխատեսումը	47
§5. Վճռի ընդունումը	48
ԹԵՄԱ 3. ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԸ	51
ԹԵՄԱ 4. ՀԱՆՑԱԿՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՕՔՅԵԿՏԻՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՐՏԱՑՈՒՄ	56
ԹԵՄԱ 5. ԿՐԻՄԻՆԱԼ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	61
ԹԵՄԱ 6. ՀԱՆՑԱԿՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ	80
ԹԵՄԱ 7. ՀԱՆՑԱԿՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄԸ	87
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	94

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանցավորության մակարդակի աճը, հանցավորության բացասական միտումները, հանցավոր վարքագծի նոր դրսևորումները դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ մշակելու անհրաժեշտություն են առաջացնում: Հանցավորության, դրա առանձին տեսակների և առանձին հանցագործությունների կանխման, հանցավոր վարքագծի հավանական կանխատեսման արդյունավետությունը կախված է սոցիալական այդ երևույթի պատճառների և նպաստող պայմանների խոր իմացությունից: Այս տեսանկյունից անչափ կարևոր նշանակություն ունի հանցավոր վարքագծի մոտիվացիայի ուսումնասիրությունը:

Հանցավոր վարքագծի մոտիվացիան օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլումն է: Հանցավոր վարքագծի մոտիվացիայում խտացված ձևով արտացոլվում են օբյեկտիվ իրականության մեջ տեղի ունեցող այն երևույթները, որոնք էական դեր են կատարում հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում: Մոտիվացիան է, որ ցույց է տալիս հանցավոր վարքագծի կրիմինալոգիական էությունը: Մարդկային վարքագծի, այդ թվում՝ հանցավոր վարքագծի մոտիվացիայի ձևավորման վրա ազդեցություն են ունենում ոչ միայն հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական, տնտեսական, բարոյահոգեբանական, մշակութային, իրավական, կազմակերպակառավարչական գործընթացները, այլև մարդու հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Մոտիվացիայում արտացոլվում են ոչ միայն ներկայիս անմիջական հանցածին հանգամանքները, այլ նաև մարդու կենսագործունեության անցյալի պայմանները, մարդու անձնային առանձնահատկությունները: Այդ է պատճառը, որ մոտիվացիայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի խոր և ամբողջական պատկերացում կազմելու հանցավոր վարքագծի պատճառների մասին, ինչն իր հերթին կարող է նպաստել հանցավոր վարքագծի կանխատեսման և անհատական կանխարգելման արդյունավետությանը:

Սույն ուսումնական ձեռնարկում փորձ է արվել ներկայացնելու հանցավոր վարքագծի և դրա առանձին տեսակների մոտիվացիոն

առանձնահատկությունները, մոտիվացիայի տարրերը, հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ուղորտը, մոտիվացիայի դերը անհատական հանցավոր վարքագծի կանխատեսման և կանխման գործում:

Կարծում ենք, որ ձեռնարկը կարող է օգտակար լինել հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմը ավելի խոր ընկալելու, անհատական հանցավոր վարքագծի կանխատեսման և կանխման միջոցառումներն ավելի արդյունավետ կազմակերպելու ու իրականացնելու համար:

ԹԵՄԱ 1. ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ

§1. Մարդկային վարքագծի մոտիվացիայի հասկացությունը

Մարդկային վարքագծի մոտիվացիայի և դրդապատճառների հիմնախնդիրը հոգեբանության հանգուցային հիմնախնդիրներից է: Վարքագծի դրդապատճառներն ու նպատակները հոգեկան արտացոլման ընդհանրական ձևեր են: Որտեղից են ի հայտ գալիս դրանք, ինչ են իրենցից ներկայացնում: Այս հարցերի պատասխանները անչափ կարևոր են մարդկային վարքագծի իմաստն ու պատճառները բացահայտելու համար:

Ներկայումս թե հոգեբանության մեջ, թե կրիմինոլոգիայում գերիշխող է այն տեսակետը, որ մարդկային վարքագծի սուբյեկտիվ պատճառը մոտիվացիան է: Հենց մոտիվացիան է այն ներքին, սուբյեկտիվ ուժը, որը կանխորոշում է մարդու վարքագիծը: Բայց ինչ է իրենից ներկայացնում մոտիվացիան: Այս հարցի շուրջ ոչ հոգեբանության մեջ, ոչ էլ կրիմինոլոգիայում միասնական կարծիք չկա:

Ներկայացնենք մոտիվացիայի առավել տարածված հասկացությունները:

Ս. Լ. Ռուբինշտեյնը մոտիվացիան համարում է հոգեկանի միջոցով իրականացվող դետերմինացիա¹: Պարզ ասած, մոտիվացիան օբյեկտիվ իրականության հոգեկանի միջոցով արտացոլման հետևանքով ձևավորված մարդկային վարքագծի սուբյեկտիվ պատճառն է:

Հոգեֆիզիոլոգ Պ. Վ. Սիմոնովը մոտիվացիան համարում է կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքահամակարգային գրգռում, որը դրդում է մարդուն պահանջմունքների բավարարմանն ուղղված արարքներ կատարելու²:

Պ. Մ. Յակոբսոնը մոտիվացիան համարում է այնպիսի հոգեկան երևույթների համակցություն, որոնցով որոշվում է մարդու վարքա-

¹ Ст'у Рубинштейн С. Л. Человек и мир // Методологические и теоретические проблемы психологии. М., 1969, էջ 370:

² Симинов П. В. Мотивация. БСЭ. Т. 17., էջ 61:

գիծը³: Նույն կարծիքին են Կ. Մադսենը և Ժ. Գոդֆրուան:

Կրիմինոլոգ Ն. Ֆ. Կուզնեցովան մոտիվացիան համարում է դրդապատճառների համակարգ (հազվադեպ մեկ դրդապատճառ), որը հանդես է գալիս որպես մարդու վարքագծի պատճառ⁴:

Մ. Շ. Մագոմեդ – Էմինովը մոտիվացիան դիտում է որպես կոնկրետ վարքագծի հոգեկան կարգավորման գործընթաց⁵:

Ի. Ա. Ջիջարյանը մոտիվացիան համարում է դրդապատճառի գործողության գործընթաց և գործունեության կոնկրետ ձևերի ծագումը, ուղղությունն ու իրականացման եղանակները որոշող մեխանիզմ⁶:

Յ. Յեկկաուզենը մոտիվացիան դիտում է որպես հնարավոր տարբեր արարքների միջև ընտրության, տվյալ դրդապատճառին հատուկ նպատակներին հասնելու համար կատարվող արարքի կարգավորման, այդ արարքին ուղղություն տվող և այդ ուղղությունը ապահովող գործընթաց⁷:

Վ. Ա. Իվաննիկովը մոտիվացիա ասելով հասկանում է յուրահատուկ հոգեկան գործընթաց, որն իր մեջ ընդգրկում է դրդապատճառի գնահատումը, նպատակադրումը, նպատակին հասնելու միջոցների ընտրությունը, գործողությունների պլանավորումը, հետևանքների գնահատումը, հաջողության հասնելու հավանականության գնահատումը, սեփական հնարավորությունների և ֆունկցիոնալ վիճակի հաշվառումը⁸: Նման ձևով է հասկանում մոտիվացիան նաև Վ. Վ. Լունենը: Նա մոտիվացիան համարում է հոգեկան գործընթաց, որն անցնում է որոշակի փուլեր՝ 1) պահանջմունքի արդիականացում, 2) դրդապատճառի ձևավորում, 3) նպատակադրում, 4) նպատակին հասնելու ուղիների ու միջոցների ընտրություն, 5) հնարա-

վոր արդյունքի (հետևանքների) կանխատեսում, 6) որոշման ընդունում, 7) արարքի նկատմամբ հսկողություն և արարքի ճշգրտում, 8) առաջացած հետևանքների վերլուծություն, 9) զղջում կամ պաշտպանական դրդապատճառի ձևավորում⁹ (հարկ է նշել, որ վերջին երկու փուլերը չեն ընդունվում հոգեբանների և կրիմինոլոգների գերակշիռ մասի կողմից, որովհետև դրանք արդեն կատարված արարքից հետո ձևավորվող հոգեբանական գործընթացներ են և չեն կարող համարվել տվյալ արարքի սուբյեկտիվ պատճառ: Այլ հարց է, որ դրանք փաստորեն կարող են սկիզբ դնել նոր արարքի կատարման: Օրինակ՝ զղջումը կարող է մղել անձին իր արարքից առաջացած հետևանքների վերացմանն ուղղված գործողություններ կատարելուն):

Չնայած մոտիվացիայի վերաբերյալ առկա տեսակետների բազմազանությանը, դրանք ունեն նաև ընդհանրություններ, որոնք հանգում են հետևյալին՝ 1) մոտիվացիան մարդկային վարքագծի սուբյեկտիվ պատճառն է, 2) մոտիվացիան մարդու և արտաքին միջավայրի փոխներգործության արդյունքում ձևավորվող հոգեկան երևույթ է, 3) մոտիվացիան չի նույնանում դրդապատճառի (շարժառիթի) հետ, չնայած վերջինս մոտիվացիայի միջուկն է: Դրդապատճառը բնորոշվում է որպես արարքի կատարմանը մղող ուժ: Կարելի է ենթադրել, թե հենց դրդապատճառի ծագումն է մարդկային վարքագծի սկիզբը: Բայց դրդապատճառը իդեալական երևույթ է: Մատերիալիզմի տեսանկյունից այն չի կարող համարվել արարքի սկիզբ: Դրդապատճառը չի առաջանում դատարկ տեղում, ոչնչից (չնայած այս հարցը վեճերի տեղիք տալիս): Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ արդիականացված պահանջմունք: Ուստի, մարդկային վարքագծի պատճառների ուսումնասիրությունը պետք է սկսել հենց պահանջմունքներից (չնայած պահանջմունքներն էլ դատարկ տեղում չեն առաջանում, այլ մարդու գործունեության արդյունք են, այն հասարակական հարաբերությունների ընդհանրացում, որոնցում գործում է մարդը):

³ Տե՛ս Կոբսոն Ս. Մ. Психологические проблемы мотивации поведения человека. М., 1969, էջ 12:

⁴ Տե՛ս Կուզնեցովա Ն. Փ. Мотивация преступлений и тенденции ее изменения. // Вопросы советской криминологии., М., 1976, էջ 3:

⁵ Տե՛ս Մագոմեդ-Քեմինով Մ. Շ., Мотивация и контроль за действием. М., 1991, էջ 11:

⁶ Տե՛ս Թեորետիկական խնդիրները և խնդիրները անհատի. М., 1974, էջ 48:

⁷ Տե՛ս Կեքխաուզեն Մ. Մ. Мотивация и деятельность. М., 1986, էջ 7:

⁸ Տե՛ս Իվաննիկով Վ. Ա. Анализ мотивации с позиций теории деятельности // Национальный психологический журнал., 2014, N1, էջ 49-50:

⁹ Տե՛ս Լունեև Վ. Վ. Мотивация преступного поведения., М., 1991, էջ 33-39:

§2. Պահանջմունք

1. Պահանջմունքի վերաբերյալ նույնպես հոգեբանության մեջ միասնական կարծիք չկա: Միակ ընդհանրությունն այն է, որ բոլորը պահանջմունքը համարում են մարդուն ակտիվության մղող ուժ: Ինչպիսի գործունեություն էլ որ իրականացնի մարդը, ինչպիսի արարք էլ որ նա կատարի (այդ թվում հանցավոր), վերջին հաշվով նպատակաուղղված է այս կամ այն պահանջմունքի բավարարմանը:

Այնուամենայնիվ համառոտ քննարկենք պահանջմունքի հասկացության վերաբերյալ առկա հիմնական տեսությունները:

Հոգեբանների մեծ մասը պահանջմունքը դիտում են իբրև *կարիք*: Կարիքն իր հերթին հասկացվում է որպես օրգանիզմի և մարդու համար անհրաժեշտ ինչ որ բանի պակաս (դեֆիցիտ): Իհարկե կարիքն ու պահանջմունքը խիստ կապված են, բայց շատ հոգեբաններ գտնում են, որ նույնացնել դրանք (համենայն դեպս միշտ) չի կարելի: Այս կապակցությամբ Յու. Վ. Շարովը, Վ. Ս. Մագունը և մի շարք այլ հոգեբաններ նշում են, որ մարդու պահանջմունքները կապված են ոչ միայն դեֆիցիտի, այլ նաև ինչ որ բանի ավելցուկի հետ, որը վնասակար է օրգանիզմի համար¹⁰: Նման դեպքերում առաջանում է օրգանիզմի կենսագործունեության համար վնասակար ինչ որ բանի ավելցուկից ձերբազատվելու պահանջմունք: Բացի այդ, պահանջմունքը կարող է առաջանալ ինչ որ օբյեկտի գայթակղիչ ազդեցությունից, երբ չկա ոչ դեֆիցիտ ոչ էլ ավելցուկ (օրինակ՝ երեխայի մեջ ցանկություն է առաջանում ստանալ գեղեցիկ փաթեթավորված կոնֆետը): Այս կապակցությամբ հարկ է նշել Ա. Մասլոուի մոտեցումը պահանջմունքների վերաբերյալ: Վերջինս առանձնացնում է մի քանի կարգի պահանջմունքներ. 1) «դեֆիցիտ»․ սրանք այն պահանջմունքներն են, որոնց չբավարարելը օրգանիզմում դատարկ տեղեր է առաջացնում: Այդ դատարկությունները պետք է լցվեն, որպեսզի օրգանիզմը նորմալ կենսագործի (սննդի պահանջմունք, շնչելու պահանջմունք և այլն), 2) բացի սովորական, վիտալ կարիքներից առանձնացվում են անվտանգության, սիրո, հարգանքի, հասարակության կողմից ընդունվելու կարիքները, 3) զարգանալու, աճի,

ինքնակատարելագործվելու պահանջմունքներ, երբ մարդը ցանկանում է անընդմեջ իրագործել իր պոտենցիալ հնարավորությունները, ընդունակությունները և այլն: Ընդ որում, Մասլոուն նշում է, որ անձի ձևավորումն ու զարգացումը կախված են նրանից, թե որ պահանջմունքների բավարարման վրա է սևեռվում մարդը՝ դեֆիցիտի չեզոքացման, թե ինքնազարգացման¹¹:

Հոգեբանության մեջ տարածված է նաև այն տեսակետը, որ պահանջմունքը մարդու գիտակցության մեջ այն առարկայի արտացոլումն է, որը կարող է չեզոքացնել կարիքը (դեֆիցիտը): Ընդ որում, շատ հոգեբաններ պահանջմունք են համարում ոչ միայն այդ առարկայի արտացոլումը, դրա կերպարը գիտակցության մեջ, այլ նաև հենց այդ առարկան: Հարկ է նշել, որ պահանջմունքի նկատմամբ նման մոտեցումը ոչ մի քննադատության չի դիմանում: Նախ՝ այդ դեպքում պատճառը (պահանջմունքը) և հետևանքը (առարկան) փաստորեն տեղերով փոխվում են: Երկրորդ՝ պետք է նշել, որ միևնույն կարիքը կարող է բավարարվել տարբեր առարկաների միջոցով: Ուստի, առարկան պետք է համարել ոչ թե պահանջմունք, այլ պահանջմունքի բավարարման միջոց: Եթե մարդուն շատ առարկաներ են շրջապատում, ապա խոսքը ոչ թե պահանջմունքների շրջանակի ընդլայնման, այլ պահանջմունքների բավարարման միջոցների ու եղանակների հարստացման մասին (եթե երեխան դադարում է խաղալ որևէ խաղալիքով և ձեռքն է վերցնում մյուսը, դա վկայում է ոչ թե խաղալու պահանջմունքի վերացման մասին, այլ այն մասին, որ երեխային ձանձրացրել է այդ խաղալիքով իր պահանջմունքը բավարարելը):

Իսկ ինչու են այդ դեպքում շատերը առարկան նույնացնում պահանջմունքի հետ: Բանն այն է, որ ժամանակի ընթացքում մարդն սկսում է ճանաչել այն առարկաները, որոնք կարող են բավարարել իր այս կամ այն պահանջմունքը, և ստերեոտիպային իրադրություններում, կարիքի ի հայտ գալու հետ միասին, ասոցիացիայի մեխանիզմով նրա գիտակցության մեջ ի հայտ են գալիս այն առարկաները, որոնք ընդունակ են բավարարելու պահանջմունքը:

Միևնույն ժամանակ, նույնիսկ չափահասների մեջ հաճախ ասոցիատիվ կապը պահանջմունքի և առարկայի միջև կարող է բացա-

¹⁰ Ст' у Магун В. С. Потребности и психология социальной деятельности личности. М., 1983, էջ 5:

¹¹ Ст' у Маслоу А. Мотивация и личность. СПб, 1999, էջ 77-105:

կայել (դա լինում է այն դեպքերում, երբ մարդը հայտնվում է անորոշ իրադրությունում):

Պահանջմունքի վերաբերյալ հոգեբանության մեջ տարածված մյուս տեսակետի համաձայն պահանջմունքը *անհրաժեշտություն* է¹²: Անհրաժեշտությունը բնորոշվում է որպես անխուսափելի, պարտադիր կարիք: Որպեսզի անհրաժեշտությունը պահանջմունք արտացոլի այն պետք է տվյալ պահին արդիական լինի մարդու համար, վերածվի կարիքի: Բայց նույնիսկ այդ դեպքում անհրաժեշտության և պահանջմունքի միջև հարաբերակցությունը կարող է տարբեր լինել և ոչ միշտ համընկնել: Կյանքում հաճախ է լինում, որ մենք չենք ցանկանում այն ինչն անհրաժեշտ է մեզ, և հակառակը, անում ենք ինչ որ բան, առանց պահանջմունք զգալու (օրինակ՝ ուտում ենք առանց ցանկության, որովհետև անհրաժեշտ է ուտել): Ուստի, անհրաժեշտությունը կարող է մղել ակտիվության, չհանդիսանալով պահանջմունք, այլ արտացոլելով կամ պարտքի զգացում կամ նպատակահարմարություն:

Վերջապես, հոգեբանների մի մասն էլ պահանջմունքը դիտում են իբրև *վիճակ*¹³, մասնավորապես, օրգանիզմի և անձի լարվածության վիճակ: Իրոք, կարիքի զգացումը, կարիքի ի հայտ գալը, վկայում են անձի և օրգանիզմի վիճակի փոփոխության մասին: Այլ հարց է, որ չի կարելի պահանջմունքը նույնացնել պահանջմունքային վիճակի հետ: Կարիքի զգացողությունը ինքը պահանջմունք չէ. այդ վիճակը կամ զգացողությունը առաջանում են պահանջմունքի անբավարարվածությունից: Ուստի, թեև պահանջմունքային վիճակը ստիպում է անձին փնտրելու իր «տառապանքի» պատճառը, այն պահանջմունքը, որը պետք է բավարարել, և այդ առումով մղում է ակտիվության, այնուամենայնիվ, այդ վիճակը ածանցյալ է պահանջմունքից:

Ընդհանրացնելով վերոգրյալը անենք մի շարք եզրակացություններ, որոնք անհրաժեշտ են դրդապատճառի և մոտիվացիայի քննարկմանն անցնելու համար:

Առաջին՝ պահանջմունքը խիստ կապված է կարիքի հետ: Բայց

կարիքը պետք է հասկանալ ոչ միայն որպես ինչ որ բանի պակաս (դեֆիցիտ), այլ ավելի լայն իմաստով՝ որպես անհրաժեշտություն, ցանկալիություն:

Երկրորդ՝ պահանջմունքից չի կարելի անջատել պահանջմունքային վիճակը, որն արտացոլում է կարիքի ծագումը և ազդանշան է մարդու համար՝ բավարարելու ծագած ցանկությունը:

Երրորդ՝ պահանջմունքի ծագումը այն մեխանիզմն է, որը մարդուն մղում է ակտիվության՝ այն նպատակի ընտրությանը և դրան հասնելուն, որը կարող է բավարարել տվյալ պահանջմունքը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ պետք է տարբերել «անձի պահանջմունք» և «օրգանիզմի պահանջմունք» հասկացությունները: Սա պայմանավորված է հետևյալով՝ 1) օրգանիզմի ոչ անեն կարիք է, որ կարող է ակտիվության մղել անձին և դառնալ պահանջմունք (օրինակ՝ օրգանիզմը կարիք ունի հանքանյութերի, ճարպերի, վիտամինների), 2) գիտակցված օրգանական պահանջմունքները (թթվածնի կարիքը, սննդանյութերի կարիքը) արտացոլվում են գիտակցության մեջ ոչ միայն որպես զգացողություն, այլ նաև որպես լարվածություն, ապրում և դրանից լիցքաթափվելու ցանկություն (հաճախ էլ հակառակը՝ լարվածությունը ուժեղացնելու ցանկություն, եթե այդ ապրումները դրական հույզեր են առաջացնում): Դրա համար էլ անձի պահանջմունքը ոչ թե պարզապես կարիքի գիտակցումն է զգացողության ձևով, այլ հաճախ՝ ցանկության կամ ապրումների ձևափոխված կարիք: Մարդը ոչ թե սպիտակուցների, ճարպերի կարիք է զգում, այլ սննդի, ընդ որում, որոշակի եղանակով պատրաստված:

2. Բացի հիմնարար, ֆունդամենտալ պահանջմունքներից (սննդի, հաճույքի, սեռական և այլն) առանձնացվում են այսպես կոչված երկրորդային պահանջմունքները (կվազիպահանջմունքներ): Խոսքը սոցիալական որոշակի պահանջմունքների մասին է, որոնք առաջանում են մարդու սոցիալիզացիայի, այդ թվում՝ դաստիարակության ընթացքում:

Հոգեբանության մեջ նշվում է, որ տարիների ընթացքում մարդու մեջ ձևավորվում է սկզբնական, հիմնարար, կենսաբանական պահանջմունքները որոշակի եղանակով բավարարելու պահանջմունք: Դա կարող է լինել, օրինակ, սեղանը որոշակի ձևով զարդարելու, հագուստի որոշակի ձևի պահանջմունք և այլն: Ընդ որում,

¹² Ст'у Ломов Б. В. Методологические и теоретические проблемы психологии. М., 1984, 205:

¹³ Ст'у Додонов Б. И. Эмоции как ценность. М., 1978, էջ 54:

սկզբնական պահանջումներին ավելանում է գեղագիտական կողմը, որը ժամանակի ընթացքում կարող է վերածվել ինքնուրույն պահանջումների: Բայց միևնույն է, նույնիսկ այդ դեպքում երկրորդային պահանջումները չեն կարող փոխարինել առաջնային պահանջումներին: դրանք միայն սպասարկում են վերջիններիս: Գեղագիտական պահանջումները հիմնվելով առաջնային պահանջումների վրա, վերջիններիս հետ միասին մարդուն մղում են ակտիվության: Բայց, մարդկային ակտիվության հիմնական մղիչ ուժը վերջին հաշվով մնում են առաջնային պահանջումները: Դրա համար էլ կարելի է համաձայնել Ա. Պիեռոնի այն մտքի հետ, թե մարդու նույնիսկ ամենաբարդ գործունեության մոտիվացիան սկզբունքորեն հանգում է առաջնային պահանջումների բավարարմանը¹⁴:

3. Մարդու պահանջումները ենթարկվում են որոշակի դասակարգման:

Այսպես, առանձնացվում են *նյութական* (սննդի, հագուստի, բնակարանի կայլն), *հոգևոր* (շրջապատը և ինքն իրեն ճանաչելու, ստեղծագործելու, գեղագիտական և այլն) և *սոցիալական* (շփվելու, աշխատելու, շրջապատի կողմից ընդունվելու, ինքնահաստատման և այլն) պահանջումներ:

Նյութական պահանջումները համարվում են հիմնարար, առաջնային պահանջումներ, որոնք ընկած են մարդու կենսագործունեության հիմքում: Այս պահանջումները ձևավորվել են մարդու ֆիզիոգենետիկական, հասարակական-պատմական զարգացման ընթացքում:

Հոգևոր և սոցիալական պահանջումները արտացոլում են մարդու հասարակական բնույթը, նրա սոցիալիզացիան: Պետք է նշել սակայն, որ նյութական պահանջումները նույնպես մարդու սոցիալիզացիայի արդյունք են: Նույնիսկ սննդի պահանջումները սոցիալականացված բնույթ ունի: Մարդու համար միևնույն չէ թե ինչ և ինչպես է ուտում: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ որոշ հոգևոր կամ սոցիալական պահանջումներ ներկայումս շատ հոգեբանների կողմից դիտվում են իբրև բնածին պահանջումներ (օրինակ՝ ինքնահաստատման, իր նմանների հետ շփվելու պահանջումները և այլն):

Հոգեբանության մեջ գոյություն ունեն նաև պահանջումներ

այլ դասակարգումներ: Ա. Պետրովսկին առանձնացնում է բնական և մշակութային պահանջումները: Բնական պահանջումները կարող են լինել նյութական, իսկ մշակութային պահանջումները ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր¹⁵:

Որոշ հոգեբաններ (մանավանդ արևմտյան) ոչ թե դասակարգում են պահանջումները, այլ տալիս են դրանց ցանկը: Այսպես, Գ. Մյուրեյը առանձնացնում է հետևյալ պահանջումները՝ ագրեսիայի, աֆիլյացիայի (շփվելու), պաշտպանվելու, խաղալու, վնասից խուսափելու, անհաջողությունից խուսափելու, մեղադրանքից խուսափելու, ճանաչողական, անկախության, օգնության, հովանավորչության, կարգ ու կանոնի, իմաստավորման, իր վրա ուշադրություն հրավիրելու, հակազդման, սեռական, ստեղծագործական, հարգանքի և այլն:

Է. Ֆրոմմը գտնում է, որ մարդուն հատուկ են հետևյալ սոցիալական պահանջումները՝ մարդկային կապերի («մենք»-ի զգացում, որևէ խմբի պատկանելիություն, մենակությունից խուսափելու ցանկություն), ինքնահաստատման, ինքնագիտակցման (իրեն որպես անկրկնելի անհատականություն գիտակցելու), կապվածության (փոխադարձ ջերմ զգացումների), խոնարհման օբյեկտի (մշակույթի և գաղափարախոսության հետ առնչություն):

Ա. Մասլոուն առանձնացնում է պահանջումների հետևյալ խմբերը՝ 1) ֆիզիոլոգիական, 2) անվտանգության, 3) սոցիալական կապերի, 4) ինքնահարգանքի, 5) իքնասկտուալացման: Ցածրակարգ պահանջումները (ֆիզիոլոգիական, անվտանգության) նա համարում է կարիքի, իսկ բարձրակարգերը՝ աճի պահանջումներ: Ընդ որում, մարդու բոլոր պահանջումները գտնվում են աստիճանակարգված կապի մեջ: Առավել բարձրակարգ պահանջումները կարող են բավարարվել միայն այն դեպքում, երբ բավարարված են ցածրակարգերը (այս մոտեցումը քննադատվում է, որովհետև շատ են օրինականները, երբ մարդը ցածրակարգ, առաջնային պահանջումների բավարարումն անտեսում է ավելի բարձրակարգ պահանջումների բավարարման համար, թեև պետք է նշել, որ այդ դեպքերը ավելի շուտ բացառություն են, քան օրինաչափաու-

¹⁵ Ст'у Петровский А. В., Ярошевский М. Г. Психология. М., 2002, էջ 58-73:

¹⁴ Մեջբերումն ըստ՝ Ильин Е. П. Мотивация и мотивы. СПб, 2002, էջ 204:

յուն)¹⁶:

4. Պահանջմունքները անհատական առանձնահատկություններ ունեն. տարբեր մարդկանց մեջ դրանք տարբեր կերպ են արտահայտված: Կենսաբանական պահանջմունքների համար կարևոր նշանակություն կարող է ունենալ ասեմք մարմնի կառուցվածքը, խառնվածքի տիպը: Օրինակ՝ շարժման պահանջմունքը ավելի արտահայտված է ատլետիկ կազմվածքով մարդկանց մեջ: Կամ՝ տղամարդկանց ավելի հատուկ են ռիսկի զգացողությունը, մրցակցության, հարգանքի, իշխանության պահանջմունքները, իսկ կանանց համար՝ շփման, ուրիշների նկատմամբ հոգ տանելու:

Պահանջմունքների համառոտ վերլուծությունը թույլ է տալիս անցնելու մոտիվացիայի մյուս տարրի (փուլի) դրդապատճառի վերլուծությանը:

§3. *Դրդապատճառ*

Ինչպես արդեն նշել ենք, դրդապատճառը վարքագծի մղիչ ուժն է: Այն մարդու վարքագծի իմաստն է, հիմնավորումը: Բայց ինչ է իրենից ներկայացնում դրդապատճառը: Հոգեբանների մեջ այս հարցի շուրջ միասնական կարծիք գոյություն չունի:

Հարկ է նշել, որ հոգեբանության մեջ դրդապատճառի հասկացությունը տրվում է մոնիստական դիրքերից: Այսինքն՝ դրդապատճառ է համարվում ինչ որ մեկ կոնկրետ հոգեկան երևույթ: Հոգեբանների մի մասը դրդապատճառ է համարում պահանջմունքը, մյուսները՝ նպատակը, երրորդները դրդապատճառը համարում են մտադրություն և այլն: Վերջին ժամանակներս որոշ հոգեբաններ քննադատության են ենթարկում դրդապատճառի բացատրության մոնիստական մոտեցումը և գտնում են, որ դրդապատճառը չի կարելի հանգեցնել մեկ հոգեկան երևույթի. դրդապատճառը բարդ, ընդհանրական հոգեկան երևույթ է, որի մեջ արտացոլվում են և պահանջմունքները, և նպատակը, և այլ հոգեկան երևույթներ:

Քննարկենք դրդապատճառի վերաբերյալ առկա տարբեր մոտեցումները:

¹⁶ Ст' u Маслоу А. Եշվ. աշխ., էջ 77-105:

1. *Դրդապատճառը որպես պահանջմունք*

Շատ հոգեբաններ պահանջմունքը համարում են արարքի կատարմանը մղող ուժ: Եթե այդպես է, ուրեմն հենց արդիականացված պահանջմունքն է վարքագծի դրդապատճառը: Եվ իրոք, պահանջմունքը մեծ չափով բացատրում է այն, թե ինչու է մարդը ակտիվություն դրսևորում: Բայց, մի բան է ակտիվության մղել, մեկ այլ բան՝ մղել կոնկրետ վարքագծի, կոնկրետ արարքի: Պահանջմունքի ծագումը, պահանջմունքային վիճակի առաջացումը չի կարող բացատրել ակտիվության նպատակաուղղվածությունը, պահանջմունքի բավարարման այս կամ այն եղանակի ընտրությունը: Եթե նույնիսկ պահանջմունքը ակտիվության մղող ֆունկցիա է կատարում, միևնույն է այն չի կարող պատասխանել հետևյալ հարցերին՝ ինչու է ընտրվում պահանջմունքի բավարարման հենց այդ օբյեկտը և ոչ թե մեկ ուրիշը, ինչու է պահանջմունքը բավարարվում հենց այդ և ոչ թե այլ եղանակով: Չէ որ միևնույն պահանջմունքը կարող է բավարարվել տարբեր եղանակներով ու միջոցներով:

Դրդապատճառի նույնացումը պահանջմունքի հետ հանգեցնում է մի շարք սխալների: Մասնավորապես, փոխանակ խոսվի պահանջմունքի բավարարման մասին, խոսվում է դրդապատճառի բավարարման մասին, փոխանակ խոսվի բնածին և ձեռք բերովի պահանջմունքների մասին, խոսվում է դրդապատճառների մասին:

Այնուամենայնիվ, անջատել պահանջմունքը դրդապատճառից հնարավոր չէ: Պահանջմունքը դրդապատճառի մի մասն է: Պահանջմունքն է սկիզբ դնում դրդապատճառի ձևավորմանը: Ինչպես արդեն նշել ենք, մարդկային յուրաքանչյուր արարք վերջին հաշվով նպատակաուղղված է որոշակի պահանջմունքի բավարարմանը: Այլ հարց է, որ պահանջմունքի և դրդապատճառի միջև կարող են գոյություն ունենալ միջնորդավորված հարաբերություններ: Բանն այն է, որ պահանջմունքը դրդապատճառ է դառնում միայն առարկայանալուց հետո, այսինքն՝ բավարարման համար հարմար առարկա գտնելուց հետո:

2. *Դրդապատճառը որպես նպատակ*

Որոշ հոգեբաններ դրդապատճառ են համարում նպատակը: Նպատակն այն է ինչին ձգտում են, կամ այն ինչը պետք է իրականացնել: Նպատակ կարող են հանդիսանալ ինչպես առարկան, օբյեկտը, այնպես էլ արարքը, գործունեությունը: Այստեղից էլ որոշ հո-

գեբաններ գտնում են, որ ակտիվության մղող ուժին ուղղություն է տալիս հենց այն օբյեկտը (առարկան), որը կարող է բավարարել պահանջումները: Ուստի, պահանջումների բավարարման համար հարմար օբյեկտի (առարկայի) նշանակությունն էլ անձին մղում է նպատակաուղղված, կոնկրետ վարքագծի:

Ինչպես արդեն նշեցինք, իրոք պահանջումները նպատակաուղղված վարքագծի չի մղում. այն միայն չկազմակերպված ակտիվություն է առաջացնում: Բայց, կոնկրետ առարկան կամ օբյեկտը, որը պետք է բավարարի տվյալ պահանջումները, նույնպես չեն կարող դրդապատճառ համարվել: Նախ՝ միևնույն նպատակը կարող է տարբեր պահանջումներ բավարարել: Ուստի, եթե նպատակը համարենք դրդապատճառ, չենք կարող պատասխանել այն հարցին թե ինչու է անձը կատարում հենց այդ արարքը: Երկրորդ՝ դրդապատճառը բնութագրվում է այնպիսի հատկություններով ինչպիսիք են ուժն ու կայունությունը: Դժվար թե այս հատկությունները բնութագրական են նպատակին (օբյեկտին, առարկային): Նպատակը (օբյեկտը, առարկան) կարող են գայթակղիչ լինել, բայց ոչ կայուն և ուժեղ:

3. *Դրդապատճառը որպես մղիչ ուժ:*

Հոգեբանների մի մեծ խումբ դրդապատճառը համարում է մղիչ ուժ:

Իրոք, դրդապատճառը մղում է ինչ որ բան անելու կամ ձեռնպահ մնալու ինչ որ բան անելուց: Բայց, «մղում» հասկացության ոչ հստակ օգտագործումը հանգեցրել է նրան, որ շատերը դրդապատճառ են համարում ոչ միայն մղումը այլև յուրաքանչյուր պատճառ, որը ձևավորում է այդ մղումը: Այստեղից էլ դրդապատճառ են համարվում բոլոր այն երևույթները, որոնք խթանում են մարդկային վարքագիծը: Ընդ որում, ֆիզիոլոգները, կենսաբանները, բիսեվիոդիստ հոգեբանները դրդապատճառ են համարում հիմնականում արտաքին խթանիչները: Մինչդեռ Գ. Օլպորտը արդարացիորեն նշում է, որ մարդուն գործունեության մղող օբյեկտները կարող են լինել նաև տվյալ պահին բացակայող (երևակայության կամ պատկերացումների մեջ գտնվող) օբյեկտները¹⁷: Փաստորեն, մարդկային վարքագծի մղիչներ կարող են լինել բազմաթիվ երևույթներ, ընդ որում, թե արտաքին, թե ներքին: Բայց, դրանցից ոչ բոլորն են, որ կարող են

դրդապատճառ համարվել: Հարց է ծագում. ինչը կարող է չափանիշ հանդիսանալ մոտիվացիոն և ոչ մոտիվացիոն դետերմինանտների սահմանազատման համար: Որոշ հոգեբանների համար այդպիսի չափանիշ է արարքի պատճառի և արարքի կատարման եղանակի սահմանազատումը: Մոտիվացիոն են համարվում միայն արարքի պատճառները: Սակայն, հարկ է նշել, որ արարքի կատարման եղանակն էլ որոշ դեպքերում մոտիվացիոն նշանակություն ունի: Շատ հոգեբաններ էլ գտնում են, որ արարքի մոտիվացիոն և ոչ մոտիվացիոն պատճառների, այսինքն՝ մղումի և խթանի սահմանազատումը նպատակահարմար է իրականացնել մարդու պատասխան ռեակցիաների մեխանիզմի միջոցով: Այսինքն՝ ինչպիսին է ռեակցիան՝ կամային, թե ոչ կամային: Այստեղից էլ հետևում է, որ դրդապատճառը ոչ թե ամեն տեսակի մղումն է այլ ներքնապես գիտակցված մղումը, որն արտացոլում է մարդու պատրաստակամությունը որևէ արարք կատարելու: Ստացվում է, որ խթանը մղում է արարքի կատարման ոչ թե անմիջականորեն, այլ դրդապատճառի միջոցով: Դրդապատճառն առաջանում է խթանից, իսկ արարքի կատարման մղիչ ուժ է հանդիսանում ներքնապես գիտակցված մղումը՝ դրդապատճառը:

Այնուամենայնիվ, շատ հոգեբաններ գտնում են, որ դրդապատճառը չի կարելի մղում համարել (թեկուզ գիտակցված), որովհետև մղիչ ուժով օժտված է նաև պահանջումները: Մղումը զուրկ է որևէ բովանդակությունից, այն ցույց է տալիս միայն արարքի պատճառների էներգետիկ կողմը, օրգանիզմի (մարդու) ներքին լարված վիճակը, որը հանգեցնում է ակտիվության, բայց չի պատասխանում այն հարցերին թե ինչու, ինչի համար է անձը կատարում տվյալ արարքը: Բացի այդ, դրդապատճառը կարող է հանգեցնել պասիվության, անգործության, մինչդեռ մղումը անպայման ենթադրում է ակտիվություն: Վերջապես, մարդկային վարքագծի դրդապատճառները ոչ միշտ են գիտակցված. դրանք հաճախ ենթագիտակցական իսկ որոշ դեպքերում նույնիսկ անգիտակցական բնույթ են կրում:

4. *Դրդապատճառը որպես մտադրություն:*

Մտադրությունը ցույց է տալիս ենթադրվող արարքների իմաստը, արտացոլում է դրանց կամային բնույթը: Իմանալով մարդու մտադրությունների մասին կարելի է պատասխանել այն հարցին, թե ինչի է ձգտում հասնել անձը, ինչ և ինչպես է ուզում անել: Մտադ-

¹⁷ St' u Олпорт Г. Функциональная автономия мотивов. М., 2002, էջ 19:

րությունն ընդգծում է մարդու ձգտումները, նրա ընդունած որոշման իմաստը: Նշանակում է մտադրությունը թույլ է տալիս բավականաչափ խորությամբ հասկանալու անձի արարքի հիմնավորումը: Այս է պատճառը, որ որոշ հոգեբաններ թեև ուղղակի չեն նույնացնում դրդապատճառն ու մտադրությունը, բայց գտնում են, որ մտադրությունն օժտված է մղիչ ուժով և սերտորեն կապված է մոտիվացիայի հետ: Հարկ է նշել սակայն, որ մտադրությունը չի բացահայտում արարքի սկզբնական, առաջնային պատճառը և չի պատասխանում այն հարցին թե ինչու է անձը ակտիվություն դրսևորում: Բացի այդ, շատ դեպքերում մտադրությունը կարող է և մղում չպարունակել, որովհետև մարդու նպատակը հեռավոր է (օրինակ՝ մարդը կարող է հայտարարել, որ ցանկանում է արձակուրդներին ինչ որ տեղ գնալ: Այս դեպքում մտադրությունն առկա է, բայց դժվար է ասել, որ կա ներքին լարվածություն, ակտիվության մղում):

5. Որոշ հոգեբաններ գտնում են, որ **դրդապատճառները անձի կայուն հատկություններ են** (դիրքորոշումներ): Անձնային դիրքորոշումները (նախապատվությունները, հակումները, արժեքները, աշխարհահայացքը, իդեալները) մասնակցում են կոնկրետ դրդապատճառի ձևավորմանը:

Այս մոտեցումը ևս քննադատվում է: Նախ՝ շատ անձնային հատկություններ ավելի շուտ պահանջմունք են (օրինակ՝ գործունեության ձգտելը, նոր տպավորություններ ստանալու պահանջմունքը և այլն), քան դրդապատճառ: Միևնույն ժամանակ, անձի կայուն հատկությունները (հետաքրքրությունները, հակումները, աշխարհահայացքը և այլն) կարող են ազդել մարդու արարքների հիմնավորման վրա, այսինքն՝ ընդգրկվել մարդու արարքների հիմնավորման մեջ և փաստորեն էական դեր կատարել մոտիվացիայի գործընթացի և դրդապատճառի ձևավորման մեջ:

6. *Դրդապատճառը որպես վիճակ.*

Շատ հոգեբաններ դրդապատճառը համարում են ներքին հոգեկան վիճակ, որը ստիպում է մարդուն գործել կամ անգործության մատնվել: Այս հոգեբանների թվին կարելի է դասել նաև նրանց, ովքեր դրդապատճառ են համարում հույզերը, որովհետև վերջիններս էլ իրենցից որոշակի հոգեվիճակ են ներկայացնում: Փաստորեն, դրդապատճառը դիտվում է իբրև ներքին լարվածության վիճակ, տառապալից վիճակ, զգացողություն: Օրինակ՝ սննդի պահանջ-

մունքը կարող է դառնալ գործունեության դրդապատճառ, եթե արդիականանում է և վերածվում քաղցի զգացողության (կամ հոգեվիճակի): Հենց քաղցի զգացումն էլ դրդապատճառ է հանդիսանում, որովհետև ստիպում է մարդուն ակտիվանալ և կոնկրետ գործունեություն ծավալել: Բայց, հարկ է նշել, որ մարդը կարող է գործունեություն իրականացնել նաև այլ դեպքերում, երբ քաղցի հոգեվիճակը (զգացումը) բացակայում է: Բանն այն է, որ մարդն ընդունակ է կանխատեսելու ապագան: Եթե տվյալ պահին մարդը քաղցած չէ, ապա նա կանխատեսում է, որ ապագայում կունենա այդպիսի հոգեվիճակ և հնարավոր տառապանքներից խուսափելու համար նախապես անհրաժեշտ գործողություններ է կատարում: Փաստորեն, մարդուն կարող է ակտիվության մղել ոչ միայն անմիջականորեն ապրվող հոգեվիճակը, այլև կանխատեսվող վիճակը: Ընդ որում, հարկ է նշել, որ այս հանգամանքը ցույց է տալիս, որ մարդն իր անմիջական մղումների ու հույզերի գերին չէ (համենայն դեպս ոչ միշտ), որ նորմալ զարգացած անձնավորության հոգեկան ակտիվությունը ունի պրոսպեկտիվ բնույթ, այսինքն՝ ուղղված է ապագային: Մարդուն հասկանալու համար բավական չէ իմանալ թե ինչպիսի անցյալ և կենսափորձ ունի նա, ինչպիսի փոխհարաբերությունների մեջ է մտել այլ անձանց հետ: Դրանք անկասկած կարևոր են, բայց շատ դեպքերում ավելի կարևոր է իմանալ, թե մարդն իր երևակայության մեջ ինչպիսին է տեսնում իր ապագան, ինչ ծրագրեր, կանխատեսումներ ու հեռանկարներ ունի:

7. *Դրդապատճառը որպես ձևակերպում.*

Այսպիսի մոտեցում է դրսևորում լեի հոգեբան Կ. Օբուխովսկին: Նա գտնում է, որ դրդապատճառը նպատակի և դրան հասնելու միջոցների ձևակերպումն է¹⁸: Փաստորեն, Օբուխովսկին դրդապատճառը դիտում է որպես մի գործոն, որը հնարավորություն է տալիս մարդուն ձևակերպելու իր գործունեությունն սկսելու որոշումը:

Օբուխովսկու մոտեցումը նման է Վ. Մյասիշչևի, Վ. Իմեդաձեի և մի շարք այլ հոգեբանների հայացքներին, ովքեր դրդապատճառը համարում են արարքի հիմնավորում: Բայց, պետք է նշել, որ նման մոտեցման դեպքում խոսքը միայն դրդապատճառի բովանդակային կողմի մասին է, և աչքաթող է արվում էներգետիկ կողմը, այն հան-

¹⁸ St' u Обуховский К. Психология влечений человека. М., 1971, էջ 36:

զամանքը, որ դրդապատճառը ակտիվության մղող ուժ է:

Համառոտ ընդհանրացնենք դրդապատճառի վերաբերյալ տեսակետները:

Նախ՝ պետք է նշել, որ ոչ ամեն մի գործոն, որը կարող է խթանել մարդու արարքը կամ որոշակի նշանակություն ունենալ արարքի ընթացքի և արդյունքների համար, կարող է դրդապատճառ համարվել: Հակառակ մոտեցման դեպքում, օրինակ, արյան մեջ ալկոհոլի առկայությունը, կամ օրգանիզմում ազոտի մակարդակի բարձրացումը, կամ նպատակին հասնելու ճանապարհին արգելքի առկայությունը կարող են համարվել դրդապատճառ: Մինչդեռ արարքի դետերմինացվածությունը ոչ միշտ է նշանակում մոտիվացվածություն: Դետերմինացված է նաև կենդանիների ակտիվությունը, դետերմինացված է մարդու ոչ կամային ակտիվությունը, բայց դրանք մոտիվացված ակտիվություն չեն: Մոտիվացիան ներքին դրդապատճառ է, որն իհարկե կարող է պայմանավորված լինել նաև արտաքին ազդակներով, անձին շրջապատող միջավայրով: Բայց, արտաքին միջավայրը մարդու վրա ազդում է ֆիզիկապես, մինչդեռ մոտիվացիան հոգեկան գործընթաց է, որը արտաքին ազդեցությունը վեր է ածում ներքին մղման:

Երկրորդ՝ շատ հոգեբաններ գտնում են, որ մարդկային արարքը (վարքագիծը) մեկ պատճառով բացատրելու փորձերը սխալ են: Ըստ այդմ էլ սխալ է նաև դրդապատճառ համարել մեկ երևույթ: Մարդկային վարքագիծը որոշվում է բազմաթիվ դետերմինանտներով: Այս տեսակետից անհրաժեշտ է քննարկել դրդապատճառի բացատրության հիմնական մոտեցումները:

Եթե դրդապատճառ է համարում պահանջմունքը, ապա խոսքը միայն մղիչ ուժի մասին է (ինչու է կատարվում արարք), որը ուղղվածություն (նպատակաուղղվածություն) չունի:

Եթե դրդապատճառ է համարվում նպատակը (պահանջմունքի բավարարման առարկան), ապա խոսքը արարքի ուղղվածության մասին է (ինչի համար է կատարվում արարքը), բայց չի բացատրվում արարքի պատճառը:

Եթե դրդապատճառ է համարվում արարքի հիմնավորումը, ապա խոսքը արարքի պատճառի, իմաստի մասին է, բայց այդ դեպքում աչքաթող է արվում էներգետիկ, մղիչ կողմը: Եվ հակառակը, եթե դրդապատճառը համարվում է մղիչ ուժ, հոգեվիճակ, ապա խոսքը

միայն էներգետիկ կողմի մասին է:

Դրդապատճառի վերը նշված բացատրությունները բոլորն էլ ճիշտ են, ուղղակի դրանք արտացոլում են դրդապատճառի միայն մի կողմը: Այս է պատճառը, որ որոշ հոգեբաններ գտնում են, թե դրդապատճառը պետք է դիտել իբրև բարդ, համակարգային երևույթ, որն արտացոլում է վերը նշված բոլոր կողմերը:

Նախ՝ նշվում է, որ դրդապատճառի մեջ միասնություն են կազմում գիտակցական, կամային և հուզական տարրերը: Ընդ որում, որոշ դեպքերում դրդապատճառի մեջ գերակշռում են գիտակցական, մյուս դեպքերում՝ հուզական տարրերը:

Երկրորդ՝ նշվում է, որ դրդապատճառն ունի իր սահմանները, որը սկսվում է պահանջմունքից և վերջանում մտադրությամբ: Ընդ որում, դրդապատճառը բաղկացած է մի քանի ենթահամակարգերից՝ 1. պահանջմունքային, 2. «ներքին գտման», 3. նպատակային:

Պահանջմունքային ենթահամակարգի մեջ է մտնում պահանջմունքը իր բոլոր դրսևորումներով՝ կենսաբանական պահանջմունքներ, սոցիալական պահանջմունքներ, պարտքի զգացում (պարտականություն):

«Ներքին գտման» ենթահամակարգի մեջ են մտնում նախապատվությունները (հետաքրքրություններ, հակումներ), բարոյական վերահսկողությունը (պաշտոնապես հռչակվող և ոչ պաշտոնական), սեփական հնարավորությունների գնահատումը, տվյալ պահին սեփական վիճակի գնահատումը, նպատակին հասնելու պայմանների գնահատումը, արարքի հետևանքների կանխատեսումը:

Նպատակային ենթահամակարգի մեջ են մտնում պահանջմունքային նպատակը, արարքը, պահանջմունքի բավարարման գործընթացը: Փաստորեն, նշված բոլոր ենթահամակարգերը և դրանց առանձին տարրերը արարքի դրդապատճառն են (պատճառ): Ընդ որում, մարդու վարքագիծը ճիշտ հասկանալու և գնահատելու համար պետք է ուշադրություն դարձնել բոլոր ենթահամակարգերին ու տարրերին, հակառակ դեպքում հնարավոր են սխալներ:

Քանի որ դրդապատճառը բարդ, համակարգային երևույթ է՝ բաղկացած մի քանի ենթահամակարգերից, ապա կարելի է խոսել նաև դրդապատճառի ձևավորման փուլերի մասին: Այդ փուլերը հետևյալն են՝ 1) ներքին խթան (պահանջմունք), 2) խթանի ընդունում (ներքին լարվածություն, հոգեկան որոշակի վիճակ, զգացու-

ղություն, ծագած զգացողությունից ազատվելու ցանկություն, վերացական նպատակի ձևավորում), 3) ներքին ընտրողական ակտիվություն (պահանջմունքի բավարարման առարկայի գիտակցում, նպատակին հասնելու պայմանների գնահատում, հակումներ, հետաքրքրություններ, բարոյական վերահսկողություն (իդեալներ, համոզմունքներ, արժեքներ, դիրքորոշումներ), սեփական հնարավորությունների գնահատում), 4) կոնկրետ նպատակի ընտրություն և մտադրության ձևավորում (պահանջմունքի բավարարման առարկայի ընտրություն, արարքի արդյունքների կանխատեսում, նպատակին հասնելու միջոցների ընտրություն, մտադրության ծագում, նպատակին հասնելու մղում), 5) արարք¹⁹:

Փաստորեն, դրդապատճառը դիտվում է որպես նշված բոլոր հոգեկան գործընթացների արդյունք: Այդ դեպքում դրդապատճառի ձևավորման հոգեկան գործընթացն էլ մոտիվացիան է: Այս տեսանկյունից ճիշտ կլինի դրդապատճառը համարել ոչ թե մոտիվացիայի միջուկ, հիմնական տարր, այլ մոտիվացիայի արդյունք: Նկարագրված հոգեկան գործընթացի (մոտիվացիայի) հետևանքով ձևավորվում է արարքի (վարքագծի) դրդապատճառը, որը փաստորեն բարդ մի երևույթ է, և ներառում է թե արդիականացված պահանջմունք, թե նպատակ, թե նպատակին հասնելու միջոցների ընտրություն, թե անձնային հատկություններ, թե մտադրություն ու մղում:

§4. *Դրդապատճառների գիտակցվածության հիմնախնդիրը*

Այս հիմնախնդիրը նույնպես միանշանակ լուծում չի ստացել:

Հոգեբանների մի մասը գտնում է, որ դրդապատճառը միշտ գիտակցված է: Վ. Օբուխովսկին նշում է, որ մարդը արարք է կատարում միայն այն ժամանակ, երբ կարողանում է լեզվական ձևակերպում տալ արարքի դրդապատճառին, այսինքն՝ նպատակին և դրան հասնելու միջոցներին (ինչպես տեսնում ենք, Օբուխովսկին յուրովի է հասկանում դրդապատճառը, հանգեցնելով այն նպատակին ու դրան հասնելու միջոցներին):

Նույն կարծիքին է Վ. Կովալյովը: Նա գտնում է, որ մարդը միշտ գիտակցում է իր արարքների պատճառները, պահանջմունքներն ու

դրդապատճառները²⁰:

Հոգեբանների մեծ մասը ներկայումս գտնում է, որ մարդկային արարքների դրդապատճառները կարող են լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված կամ ենթագիտակցական: Այդ կարծիքին են Ա. Լեոնտևը, Ս. Բուբինշտեյնը:

Մ. Վ. Մատյուխինան գտնում է, որ մոտիվացիոն գործընթացները կարող են ունենալ տարբեր աստիճանի գիտակցվածություն՝ լիովին գիտակցված դրդապատճառներից մինչև ոչ լրիվ գիտակցված կամ չգիտակցված դրդապատճառներ²¹:

Հարկ է նշել, որ չի կարելի արարքի դրդապատճառ համարել այն, ինչ նշում է ինքը՝ արարքը կատարողը: Նախ՝ մարդկանց հիմնականում բնորոշ է իրենց արարքների դրդապատճառները ներկայացնել իրենց համար նպաստավոր լույսի ներքո, արդարացնել իրենց արարքները: Բացի այդ՝ մարդը շատ հաճախ իրոք հասու չէ իր արարքի իրական, խոր, իմաստային դրդապատճառներին: Հոգեբանության մեջ այս տեսակետից առանձնացնում են դրդապատճառների երկու համակարգ՝ 1) գիտակցության մակերեսին գտնվող դրդապատճառներ, որոնք հանդես են գալիս հույզերի, ցանկությունների ձևով (վախ, գայրույթ, վրեժ, խանդ, ուրիշին օգնելու ցանկություն և այլն), 2) խոր, իմաստային դրդապատճառներ, որոնք հիմնականում ենթագիտակցական բնույթ ունեն և չեն գիտակցվում կամ լիովին չեն գիտակցվում արարքը կատարողի կողմից (այդպիսի դրդապատճառները կարող են շատ բազմազան լինել՝ սեփական սոցիալական կամ կենսաբանական ստատուսը պաշտպանելու ցանկություն, բացասական հույզերից ձերբազատվելու ցանկություն, ինքնահաստատում և այլն): Հետաքրքիր օրինակ է բերում Ե. Իլյինը: Մեկը օգնում է մի անծանոթի: Եթե օգնություն ցույց տվողին հարցնեն թե ինչու նա արեց այդ, վերջինս կարող է ամենատարածված պատասխանները տալ՝ «նա վատ վիճակում էր», «ուրիշ ոչ ոք չէր օգնում», «խղճացի նրան» և այլն: Իրականում օգնություն ցույց տվողի վարքագծի ներքին մղում (դրդապատճառ) կարող է լինել նրա չցուցադրվող բարոյականությունը:

²⁰ Ст' у Ковалев В. И. Мотивы поведения и деятельность. М., 1988, էջ 42:

²¹ Ст' у Матюхина М. В. Мотивация учения младших школьников. М., 1984, էջ 61:

¹⁹ Ст' у Ильин Е. П. Мотивация и мотивы. СПб, 2011, էջ 116-120:

Դրդապատճառների գիտակցվածության հիմնախնդրին հետաքրքիր լուծում է տալիս Ե. Իլյինը: Ինչպես արդեն նշել ենք, նա դրդապատճառը դիտում է որպես համակարգային երևույթ, որի մեջ մտնում են մի շարք ենթահամակարգեր՝ պահանջմունքային, ներքին գտման և այլն: Այս տեսակետից դրդապատճառի բովանդակության մեջ են մտնում և պահանջմունքը, և նպատակը, և մտադրությունը: Ուստի, դրդապատճառի որոշ տարրեր կարող են գիտակցվել, իսկ որոշները՝ ոչ: Մասնավորապես, պահանջմունքային վիճակը կարող է «գիտակցվել» որոշակի հոգեվիճակի, զգացողության ձևով: Բայց, նույնիսկ այդ իրավիճակը չի կարելի լիովին գիտակցված համարել, որովհետև կարելի է զգալ որոշակի վիճակ, ապրել կարիքի բավարարման զգացողություն, բայց չհասկանալ թե կոնկրետ ինչ է պետք²²: Նույնիսկ արարքի նպատակները, որոնք հիմնականում գիտակցվում են, կարող են հաճախ ոչ լրիվ և հստակ պատկերացվել: Նպատակադրման գործընթացը հիմնականում ենթագիտակցական գործընթաց է: Ընդ որում, հարկ է իմանալ, որ քիչ թե շատ լրիվ գիտակցվում են արարքի կոնկրետ, մոտակա նպատակները, բայց հեռավոր, ստրատեգիական նպատակները տվյալ պահին հիմնականում չեն գիտակցվում (ենթագիտակցական են): Օրինակ՝ կոնկրետ պահին կաշառք վերցնելիս նպատակ կարող է լինել նյութական օգուտ ստանալը, տվյալ պահին փող ձեռք բերելը: Բայց այդ կոնկրետ արարքը կարող է ունենալ հեռավոր, ստրատեգիական իմաստ ունեցող նպատակներ՝ բարձրացնել սեփական սոցիալական ստատուսը, պահպանել արդեն ձեռք բերածը, հասնել իշխանության և այլն: Կոնկրետ արարքը կատարելիս ամեն անգամ չէ, որ անձը գիտակցում է իր այդ նպատակները:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է հավաստել, որ մարդկային վարքագծի դրդապատճառները չի կարելի միանշանակ գիտակցված կամ չգիտակցված համարել: Դրդապատճառի որոշակի տարրեր հստակ գիտակցվում են, մյուսները ենթագիտակցական բնույթ են կրում: Ընդ որում, հիմնականում ենթագիտակցական բնույթ են կրում արարքի խոր, իմաստային դրդապատճառները:

²² Ст' и Ильин Е. П. Мотивация и мотивы. СПб, 2011, էջ 102.

§5. Մարդկային արարքի բազմամոտիվացվածությունը: Դրդապատճառների պայքարը

Երկար ժամանակ հոգեբանության մեջ տիրապետում էր այն կարծիքը, որ մարդկային կոնկրետ արարքը պայմանավորված է մեկ դրդապատճառով՝ մեկ դրդապատճառ մեկ արարք:

Վերջին ժամանակներս շատ հոգեբաններ այն տեսակետն են արտահայտում, որ մարդկային վարքագիծը, մարդու գործունեությունը պայմանավորված է միաժամանակ մի քանի դրդապատճառներով: Ընդ որում, մի քանի դրդապատճառներով վարքագիծը (գործունեությունը) կարող է արտահայտվել երկու ձևով՝ 1. վարքագիծը պայմանավորվում է հավասար ուժգնություն ու նշանակություն ունեցող մի քանի դրդապատճառներով (օրինակ՝ ուսումնական գործունեությունը կարող է նպատակամղված լինել բավարարելու անձի մի շարք պահանջմունքներ՝ լավ մասնագետ դառնալ, զարգացնել ընդունակությունները, հետ չմնալ ընկերներից և այլն), 2. իմաստային, խոր դրդապատճառը զուգակցվում է խթան-դրդապատճառներով, որոնք միայն խթանում են տվյալ արարքի կատարումը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ մարդկային արարքում մեկ դրդապատճառ է, որ հիմնական, գլխավոր դերն է կատարում: Մնացած դրդապատճառները զուգակցվում են դրա հետ: Անչափ կարևոր է իմանալ նաև, որ մարդկային արարքի բազմամոտիվացվածությունը, թեև հիմնականում ենթադրում է մի քանի զուգամիտվող, իրար չհակադրվող դրդապատճառների առկայություն, այնուամենայնիվ, չի բացառվում նաև հակադիր դրդապատճառների առկայությունը: Վերջին դեպքում խոսքը դրդապատճառների ամբիվալենտության մասին է: Սա շատ կարևոր է հատկապես հանցավոր վարքագծի մոտիվացիայի բացահայտման համար, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրդապատճառների պայքարի խնդիրը ավելի արդիական է հենց հանցավոր վարքագծի կապակցությամբ, և հենց հանցավոր վարքագծում է, որ դրդապատճառների պայքարը հասնում է առավել սրության (իհարկե ոչ բոլոր դեպքերում):

Իսկ ինչ է իրենից ներկայացնում դրդապատճառների պայքարը:

Այս հարցի կապակցությամբ հոգեբանության մեջ տարբեր մոտեցումներ կան:

Վ. Վունդտը դրդապատճառների պայքարը կապում է ընտրությամբ:

յան գործընթացի²³, իսկ Վ. Շտեռնը՝ մարդու կողմից վճռականության դրսևորման գործընթացի հետ:

Ա. Ֆ. Լազուրսկին գտնում է, որ դրդապատճառների պայքարի պատճառ է այն իրադրությունը, երբ մարդու մեջ որևէ ցանկության կամ մղման հետ միաժամանակ ծագում են այլ՝ դրան հակադիր ցանկություններ, որոնք դժվարացնում են առաջինի իրագործումը²⁴: Օրինակ՝ հակադրություն է առաջանում պարտքի զգացման և հարազատների նկատմամբ սիրո ու որևէ նպատակի հասնելու ցանկության միջև:

Ընդ որում, Լազուրսկին գտնում է, որ դրդապատճառների պայքարը նպաստում է ապագա արարքի առավել մանրակրկիտ քննարկմանը (չնայած հաճախ դրդապատճառների պայքարը կարող է այնպիսի լարվածության հասնել, որ հետագայում մարդը բոլորովին այլ արարք է կատարում քան նախապես մանրակրկիտ քննարկվածը):

Շատ հոգեբաններ ներկայումս գտնում են, որ «դրդապատճառների պայքար» հասկացությունը այդքան էլ ճիշտ չի արտացոլում անձի ներքին հոգեկան գործընթացների էությունը: Ն. Լեվիտովը գտնում է, որ «դրդապատճառների պայքար» հասկացության օգտագործումը կարծես թե նշանակում է, որ մարդու գիտակցության մեջ իրար են բախվում մարդուց անկախ գոյություն ունեցող դրդապատճառներ, որի արդյունքում մի դրդապատճառը հաղթում է մյուսին և մարդը արարք կատարելու վճիռ է ընդունում: Մինչդեռ, դրդապատճառների պայքարը ներքին պայքար է, այսինքն՝ անձի կոնֆլիկտ ինքն իր հետ: Ոչ թե դրդապատճառներն են պայքարում, այլ անձն է պայքարում ինքն իր հետ: Ընդ որում, հարցը միայն նրանում չէ, որ մարդը վերջիվերջո նախապատվությունը տալիս է մի դրդապատճառի (չնայած դա շատ կարևոր է), այլ նաև նրանում, որ անհրաժեշտ պահին մարդու բոլոր դրդապատճառները, այդ թվում նաև նպատակներն ու դրանց հասնելու տարբեր միջոցները, որոնց միջև պետք է ընտրություն կատարել, լինեն նրա գիտակցության (ենթագիտակցության) մեջ: Բացի այդ, պետք է իմանալ, որ հաճախ ընդհանրապես ոչ մի ընտրություն չի կատարվում. վճիռն ընդունվում է

առանց որևէ ընտրության, իսկ այդ վճիռն արդարացնելու համար հետագայում այն ռացիոնալացվում է²⁵:

Ընդունելով Լեվիտովի այս դատողությունները շատ հոգեբաններ գտնում են, որ մարդու մեջ պայքարում են ոչ թե դրդապատճառները, այլ դրդապատճառների տարբեր կոմպոնենտները՝ ցանկությունները, դիրքորոշումները, մղումները: Այդ պայքարը ընթանում է մոտիվացիայի ընթացքում, երբ դրդապատճառը դեռևս ձևավորված չէ: Եթե դրդապատճառն արդեն ձևավորվել է, ապա հարկ չկա պայքարելու. մնում է իրագործել այն:

Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ մարդը կարող է գործել հակառակ որևէ ցանկության, մղման, պահանջումների, եթե դրա համար կան շատ ուժեղ փաստարկներ (հանցավոր վարքագծում դրդապատճառների պայքարի այդպիսի օրինակ է հանցանք կատարելու ցանկության և քրեական պատասխանատվության նկատմամբ վախի զգացման միջև կոնֆլիկտը, հանցանք կատարելու ցանկության և բարոյական պարտքի զգացման միջև կոնֆլիկտը): Բայց, չի կարելի գործել հակառակ դրդապատճառի: Եթե դրդապատճառն արդեն ձևավորված է, այսինքն՝ առկա են արդիականացված պահանջումները, այն բավարարելու ցանկությունը, ընտրված են նպատակին հասնելու միջոցները և անձը վճիռ է ընդունել ու մտադրությունն առկա է, ապա մնում է իրագործել այն (այս դեպքում միայն էքստրենալ, օբյեկտիվ, անձի կամքից անկախ իրադրության հանկարծակի փոփոխությունն է, որ կարող է անձին հետ պահել մտադրությունից: Քրեական իրավունքում այդպիսի իրավիճակի արտացոլում կարող է հանդիսանալ հանցագործությունից հրաժարվելը):

Հարկ է նշել, որ դրդապատճառների պայքարը կարող է ընթանալ ինչպես գիտակցական այնպես էլ ենթագիտակցական մակարդակներում:

Վերջապես, հարկ է նշել, որ դրդապատճառների պայքարում հաղթում է այն դրդապատճառը, որն առավել արդիական է անձի համար, առավել կարևոր, և որը առավել համապատասխանում է անձի արժեքային կողմնորոշումներին, աշխարհահայացքին, դիրքորոշումներին: Իզուր չէ, որ ասում են «ինչպիսին անձի դրդապատճառներն են այնպիսին էլ անձն է»:

²³ Ст' у Вундт В. Очерки психологии. СПб, 1987, էջ 39:

²⁴ Ст' у Лазурский А. Ф. Очерк науки о характерах. М., 1995, էջ 48:

²⁵ Ст' у Левитов Н. Д. О психических состояниях человека. М., 1964, էջ 39:

§6. Մոտիվացիայի արտաքին և ներքին պայմանները

Հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել էքստրինսիվ (արտաքին գործոններով պայմանավորված) և ինտրինսիվ (ներքին գործոններով՝ անձի պահանջմունքներով, դիրքորոշումներով, ցանկություններով, մղումներով պայմանավորված) մոտիվացիաները:

Սրա հետ կապված, հոգեբանության մեջ վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք միայն պահանջմունքն է մոտիվացիայի աղբյուր: Շատ հոգեբաններ գտնում են, որ մոտիվացիան կարող է պայմանավորված լինել նաև արտաքին գործոններով, որ շատ դրդապատճառներ սկիզբ են առնում ոչ թե պահանջմունքներից այլ արտաքին միջավայրի ազդեցությունից: Միևնույն ժամանակ, շատ հոգեբաններ գտնում են, որ ապրելով հասարակության մեջ մարդը չի կարող իր արարքներում լիովին ազատ լինել շրջապատող միջավայրի ազդեցությունից: Մարդու այդ կախվածությունը միջավայրից կարող է լինել մի քանի տեսակի՝ 1) ռեֆերենտային կախվածություն, երբ մարդն առանց մտածելու ընդօրինակում է իր համար էտալոն հանդիսացող սոցիալական խմբի ապրելակերպը, նորմերը, 2) սոցիալական ստատուսի բարձրացման ցանկություն, 3) ինֆորմացիոն կախվածություն, որն առաջանում է այն ժամանակ, երբ մարդը ձգտում է որևէ նպատակի, անհրաժեշտ ինֆորմացիայի բացակայության պայմաններում (նման դեպքերում մարդը հարկադրված օգտագործում է այն ինֆորմացիան, որին տիրապետում է մեկ այլ անձ), 4) իշխանական կախվածություն. ենթակայի կախվածությունը պետից:

Այսպիսով, մոտիվացիան կարող է ուժեղ ճնշում «զգալ» արտաքին միջավայրից: Բայց, դա չի նշանակում, որ մարդը գործում է արտաքին մոտիվացիայի կամ արտաքին դրդապատճառների ազդեցության տակ: Մոտիվացիան և դրդապատճառները միշտ ներքին, անձնական բնույթ ունեն: Այլ հարց է, որ հաճախ արտաքին իրադրությունը խթանում է մոտիվացիայի ձևավորումը, ուժգնացնում այն: Դրա համար էլ ճիշտ է խոսել ոչ թե արտաքին և ներքին մոտիվացիայի, այլ մոտիվացիայի արտաքին և ներքին պայմանների, խթանների մասին (հանցավոր վարքագծի մոտիվացիայի արտաքին պայման կարող է հանդիսանալ օրինակ գույքի վատ պահպանությունը: Ակնհայտ է, որ գույքի վատ պահպանությունը չէ, որ հափշտակության դրդապատճառ է: Բայց, արտաքին այդ պայմանը կարող է խթանել մոտիվացիայի ձևավորումը):

§7. Դրական և բացասական մոտիվացիա

Հոգեբանների մեծ մասը գտնում է, որ մոտիվացիայի կարևորագույն առանձնահատկություններից մեկը նրա երկմոդալ՝ դրական-բացասական կառուցվածքն է²⁶: Մոտիվացիայի այդ երկմոդալությունը արտահայտվում է մի կողմից անձի մղումներում և անմիջականորեն բավարարվող պահանջմունքներում, մյուս կողմից՝ անհրաժեշտության, պարտքի մեջ: Ընդ որում, պահանջմունքների բավարարման դեպքում խոսքը դրական մոդալության, իսկ անհրաժեշտության, պարտքի դեպքում՝ բացասական մոդալության մասին է: Ըստ էության խոսքն արարքի կատարման և դրան նախորդող ժամանակահատվածում դրսևորվող հուզական վիճակների մասին է: Պահանջմունքների բավարարմանն ուղված արարքի ժամանակ, երբ անձը կանխատեսում է դրանց բավարարումը, առկա են դրական հույզերը, իսկ պարտքի կատարման դեպքում՝ բացասական հույզերը: Սա շատ կարևոր է հանցավոր վարքագծի մոտիվացիայի առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից: Բանն այն է, որ հանցավոր վարքագիծը մեծ մասամբ պայմանավորված է դրական մոդալության մոտիվացիայով, չնայած, չի բացառվում, որ հանցանքի կատարումը պայմանավորված լինի պարտքի զգացումով:

§8. Մոտիվացիայի փուլային բնույթը: Կրճատ մոտիվացիա

Նախորդ շարադրանքում նշվեց, որ մոտիվացիան, որպես գործընթաց անցնում է մի շարք փուլեր՝ 1. պահանջմունքի արդիականացում, 2. դրդապատճառի ձևավորում, 3. նպատակադրում, 4. նպատակին հասնելու եղանակների ու միջոցների ընտրություն, 5. հնարավոր արդյունքների կանխատեսում, 6. վճռի ընդունում: Սակայն, չի կարելի պատկերացնել, թե մոտիվացիայի այս փուլերը հերթականությամբ հաջորդում են մեկը մյուսին և յուրաքանչյուր նախորդ փուլ իր տեղը զիջում է հաջորդին: Ավելի շուտ դրանք «կու-

²⁶ Ст' u Асеев В. Г. Мотивация поведения и формирования личности. М., 1976:

տակվում են» իրար վրա, յուրաքանչյուր նոր փուլի ժամանակ ավելի ու ավելի բարդ հոգեբանական միավորում կազմելով: Ընդ որում, զուտ մղիչ ֆունկցիայից, յուրաքանչյուր նոր փուլի հետ մեկտեղ անցում է կատարվում նոր ֆունկցիաների՝ զտման, կարգավորման, ուղղություն տվող:

Կարևոր է իմանալ, որ թեև արդիականացված պահանջումներն է, որ ակտիվության հիմք է և էներգիա է հաղորդում ակտիվությանը, այնուամենայնիվ, մոտիվացիայի հետագա փուլերը հսկայական նշանակություն են ստանում արարքի կատարման հիմնավորման մեջ: Մասնավորապես, նպատակին հասնելու միջոցների և ուղիների ընտրության ժամանակ մարդը մեծ ծավալի և բարդ մտավոր աշխատանք է կատարում, որն էլ կանխորոշում է նրա ապագա վարքագիծը: Այս տեսակետից շատ կարևոր նշանակություն ունի հնարավոր արդյունքների կանխատեսման փուլը, որի ժամանակ հաշվի են առնվում արարքի բարոյական չափանիշները, հնարավոր արդյունքների հետևանքները շրջապատի և հենց իր՝ արարքը կատարողի համար:

Չարկ է իմանալ նաև, որ գործելու կամ չգործելու ընտրությունը, ինչպես նաև կոնկրետ նպատակի և պահանջումների բավարարման եղանակի ընտրությունը մեծ չափով կապված է վճռի ընդունման հետ, որը հաճախ մարդու համար տառապալից մի գործընթաց է և շոշափում է նրա աշխարհայացքային ու բարոյական դիրքորոշումները: Իզուր չէ, որ մարդկային գործունեության բարդ ձևերի, այդ թվում նաև հանցագործության կապակցությամբ նշվում է, որ մարդը գտնվում է բարոյական ընտրության առջև:

Նշանակում է, մոտիվացիայի յուրաքանչյուր հաջորդ փուլ, ներառելով արդեն ձևավորված նախորդ փուլերը, ավելի է մոտեցնում անձին վճռի ընդունման և արարքի կատարման, ավելի է կոնկրետացնում ու առարկայական դարձնում ապագա արարքը: Միևնույն ժամանակ, մոտիվացիայի յուրաքանչյուր հաջորդ փուլ իր վրա է կրում նախորդ փուլերի կնիքը (նախորդ փուլի մեջ արդեն սկիզբ է դրվում հաջորդին): Այսպես, թեև պահանջումների, նպատակի և դրան հասնելու եղանակների ու միջոցների միջև խիստ որոշակի, կոշտ և միանշանակ կապեր չկան, բայց արդիականացված պահանջումների բովանդակությունը մեծ չափով կանխորոշում է նպատակի ընտրությունը, իսկ նպատակն էլ իր հերթին՝ դրան հասնելու եղանակներն ու

միջոցները: Օրինակ՝ պրեստիժային պահանջումները կապված են կենցաղի, հանգստի, ապրելակերպի՝ տվյալ հասարակությունում առկա որոշակի ձևերի հետ, որոնք իրագործվում են որոշակի առարկաների (նպատակների) միջոցով (արտասահմանյան մակնիշի մեքենա, շքեղ բնակարան և այլն): Վերջինս էլ պայմանավորում է դրանց հասնելու միջոցների ու եղանակների ընտրությունը (անձի սուբյեկտիվ և օբյեկտիվ հնարավորությունների շրջանակում):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մոտիվացիայի և դրա առանձին փուլերի ձևավորման վրա ազդեցություն են թողնում կենսաբանական, հոգեբանական, սոցիալ-հոգեբանական և սոցիալական գործոնները: Այսպես, օրինակ, վճռի ընդունման փուլը ամեն ինչից բացի կանխորոշվում է նաև գրգռման և արգելակման գործընթացների, արարքի կողմնորոշիչ և կատարողական փուլերի հարաբերակցությամբ: Մասնավորապես, զգուշավոր մարդկանց մեջ գերակշռում է կողմնորոշիչ փուլը, և հակառակը՝ իմպուլսիվ մարդկանց մեջ գերակշռում է կատարողական փուլը: Իսկ դա նշանակում է, որ իմպուլսիվ մարդիկ վճիռը կարող են ընդունել առանց բավարար հիմնավորման, առանց բավարար չափով թեր և դեմ կողմերը հաշվի առնելու (աֆեկտիվ ռեակցիա), իսկ զգուշավորներն էլ կարող են ուշացնել անհրաժեշտ վճռի ընդունումը (վերջինս հաճախ պատճառ է դառնում անզգույշ հանցագործությունների):

Խոսելով մոտիվացիայի փուլերի մասին, հարկ է նշել նաև, այսպես կոչված, «կրճատ» մոտիվացիայի մասին, երբ մոտիվացիայի ոչ բոլոր փուլերը կամ դրդապատճառի ոչ բոլոր ենթահամակարգերն են առկա: Ավելի ճիշտ դրանք առկա են, բայց ընթանում են սրընթաց, աղճատված, իսկ «ներքին զտման» ենթահամակարգը, որը շատ կարևոր է վճռի ընդունման համար, գրեթե ի սպառ բացակայում է: Վճիռը ընդունվում է առանց երկար-բարակ ծանր ու թեթև անելու: Փաստորեն «ներքին զտման» ենթահամակարգը չի գործում, կամ գործում է աղճատված: Վճիռը ընդունվում է հենց առաջին մղումը ծագելու պահին: Մղման և արարքի միջև շատ կարճ ժամանակ է անցնում: Այսպիսի մոտիվացիան հատուկ է աֆեկտիվ, իմպուլսիվ արարքներին, ինչպես նաև ստերեոտիպային արարքներին (երբ մարդը սիստեմատիկաբար նույն արարքը կատարելով և իրադրությանը նույն ձևով արձագանքելով, միշտ համանման իրադրություններում նույն կերպ է գործում: Նման դեպքերում էլ մոտիվացիան

«կրճատ» է, որովհետև «ներքին գտման» ենթահամակարգը լիովին չի գործում):

§9. Անձի ուղղվածությունը

Անձի ուղղվածությունը մոտիվացիոն կազմավորումների ամբողջությունն է կամ համակարգը: Որոշ հոգեբաններ անձի ուղղվածությունը համարում են պահանջմունքների համակարգ, մյուսները՝ մղումների, ցանկությունների, հակվածությունների, իդեալների համակարգ: Պետք է իմանալ սակայն, որ անձի ուղղվածությունը միայն նշված մոտիվացիոն կազմավորումների համակարգը չէ: Անձի ուղղվածության մյուս կարևոր կողմն այն է, որ դա որոշում է մարդու գործունեության ուղղվածությունը, կողմնորոշում է այն, կանխորոշում է արարքների միտումները և վերջին հաշվով որոշում է մարդու սոցիալական դեմքը: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ անձի ուղղվածությունը ներկայացնում է դրդապատճառների կայուն և դոմինանատ համակարգ, որը որոշում է նրա վարքագծի ուղղվածությունը²⁷: Անձի ուղղվածությունը կարող է արտահայտվել այլ մարդկանց, հասարակության, ինքն իր նկատմամբ վերաբերմունքի մեջ: Ըստ այդմ առանձնացնում են անձի ուղղվածության հետևյալ տեսակները՝ հումանիստական, եսասիրական, դեպրեսիվ և սուիցիդալ: Հումանիստական ուղղվածությունը բնութագրվում է հասարակության և ինքն իր նկատմամբ դրական վերաբերմունքով: Այս ուղղվածության մեջ առանձնացնում են երկու ենթատեսակ՝ ալտրոիստական և անհատապաշտական: Առաջինի դեպքում վարքագծի հիմնական դրդապատճառը այլ անձանց կամ հանրության շահերն են: Երկրորդի դեպքում անձի համար առավել կարևոր են ինքը, իր շահերը: Այլ անձինք այդ դեպքում չեն անտեսվում, սակայն նրանց արժեքը սեփական անձի արժեքավորության համեմատ պակաս է:

Եսասիրական ուղղվածությունը բնութագրվում է սեփական անձի նկատմամբ դրական իսկ այլոց նկատմամբ բացասական վերաբերմունքով:

Դեպրեսիվ ուղղվածությունը բնութագրվում է նրանով, որ

²⁷ Ст'у Божович Л. И. Изучение мотивации поведения детей и подростков. М., 1972, էջ 18:

մարդն իրեն զգում է ոչ մի արժեք չներկայացնող, իսկ հասարակության նկատմամբ հանդուժողական վերաբերմունք է դրսևորում:

Սուիցիդալին ուղղվածության դեպքում մարդը բացասական վերաբերմունք ունի թե իր, թե հասարակության նկատմամբ²⁸:

Մարդու ուղղվածության այսպիսի տեսակների առանձնացումը հնարավորություն է տալիս բնորոշելու այն ոչ միայն որոշակի գործոնների համակարգով, այլև որևէ մի գործոնով, օրինակ, անձնային կամ կոլեկտիվիստական դիրքորոշմամբ:

Այսպիսով, անձի ուղղվածության մեջ կարևորը որևէ պահանջմունքի, շահի, իդեալի, հետաքրքրության գերակայությունն է: Միայն երկարաժամկետ մոտիվացիոն դիրքորոշում համարվող պահանջմունքի, շահի, իդեալի, հետաքրքրության կայուն գերակայությունն է, որը որոշում է կյանքի առանցքային գիծը: Սրանից հետևում է, որ անձի ուղղվածությունը մոտիվացիոն գործընթացում հեշտացնում է տվյալ իրադրությունում որոշակի վարքագիծ իրականացնելու, արարքներ կատարելու վճիռ ընդունելը, որոշում կայացնելը:

§10. Անձի մոտիվացիոն հատկությունները և մոտիվացիոն ոլորտը

Շատ հոգեբաններ գտնում են, որ դրդապատճառները դառնում են անձի կայուն հատկություններ և բնութագրում են նրան:

Մյուսները գտնում են, որ ավելի ճիշտ է խոսել ոչ թե դրդապատճառների այլ պահանջմունքների մասին: Պահանջմունքներն են ժամանակի ընթացքում դառնում անձի կայուն հատկություններ: Իրոք, խիստ արտահայտված, դոմինանտ (պահանջմունքների համակարգում գերակա տեղ գրավող) պահանջմունքները կարող են բնութագրել անձին (որկրամոլությունը անձին բնութագրում է որպես որկրամոլ, հետաքրքրասիրությունը՝ որպես հետաքրքրասեր և այլն): Բայց, առավել հաճախ անձի հատկություններ են դառնում դրդապատճառների ձևավորման նախընտրելի ձևերը: Դրդապատճառների ձևավորման այս ձևերը լինում են արտաքին և ներքին: Արտաքին գործոններով պայմանավորված մոտիվացիոն հատկու-

²⁸ Ст'у Фелдштейн Д. И. Проблемы возрастной и педагогической психологии. М., 1993:

յուններն են՝ զիջողականությունը, հնազանդությունը, ուրիշների պահանջներին անտրտունջ ենթարկվելու հակումը, ռեակտիվությունը (օրինակ՝ ազարտը) և այլն: Ներքին գործոններով պայմանավորված մոտիվացիոն հատկություններ են՝ նախաձեռնող լինելը, համառությունը, անզիջում լինելը և այլն:

Կարելի է առանձնացնել անձի այնպիսի մոտիվացիոն հատկություններ, որոնք կապված են վճռի ընդունման, «ներքին զտման» ենթահամակարգի աշխատանքի հետ: Դրանք են դոգմատիկ լինելը, ինքնասիրահարվածությունը, եսասիրությունը, անվճռականությունը, թեթևամտությունը, ավանտյուրիզմը, շահամոլությունը, ինքնավստահությունը, համառությունը, շրջահայացությունը, հեռատեսությունը, ինքնուրույնությունը և այլն²⁹:

Մոտիվացիոն հատկությունների և մոտիվացիայի միջև գոյություն ունի երկկողմ կապ: Ամրապնդված մոտիվացիան նպաստում է մոտիվացիոն հատկությունների ձևավորմանը, իսկ մոտիվացիոն հատկությունները հետագայում ազդում են մոտիվացիայի գործընթացի վրա:

Սրա հետ կապված շատ կարևոր է նշել, որ մոտիվացիոն բնույթ ունեն անձի ոչ բոլոր հատկությունները. որոշ հատկություններ ունեն մոտիվացիոն իսկ որոշները ավելի շատ գործիքային բնույթ³⁰: Մոտիվացիոն բնույթ ունեն, օրինակ, հավակնությունների մակարդակը, հաջողության հասնելու կամ անհաջողությունից խուսափելու ձգտումը, շփման կամ վանելու մոտիվացիան, ազդեսիվությունը:

Հավակնությունների բարձր մակարդակի դեպքում անձն իր առջև բարդ և դժվար հասանելի նպատակներ է դնում, և եթե օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չի կարողանում հասնել դրանց, ապա կարող է ազդեսիվ վարքագիծ դրսևորել: Հավակնությունների ցածր մակարդակի դեպքում անձն իր առջև թեթև, հեշտ հասանելի նպատակներ է դնում: Այսպիսի անձինք աչքի են ընկնում զիջողականությամբ, հնազանդությամբ, իներտությամբ, սոցիական ինֆանտիլիզմով, դանդաղ են կողմնորոշվում: Նման դեպքերում վճռի ընդունման գործընթացը դանդաղում է և կարող է հանգեցնել անզգույշ հանցանքների կատարման, որովհետև ծայրահեղ իրադ-

րություններում անձը չի կարողանում արագ կողմնորոշվել և ճիշտ վճիռ կայացնել:

Հաջողության ձգտում ունեցող անձինք միջին բարդության կամ դրանից մի փոքր ավելի բարդ խնդիրներ են դնում: Սրանց հատուկ են անորոշ իրադրություններում վճռականությունը, համառությունը, խելամիտ ռիսկի դիմելու հակվածությունը, հավակնությունների միջին մակարդակը, որը հաջողության հասնելու դեպքում բարձրանում է, իսկ անհաջողության դեպքում՝ իջնում: Միջին բարդության խնդիրների դեպքում հաջողության կամ անհաջողության հասնելը հավասարապես հնարավոր են, ուստի ամեն ինչ կախված է անձից: Նման անձինք իրենց ընդունականությունները ստուգելու կամ մրցման ժամանակ իրենց չեն կորցնում:

Անհաջողությունից խուսափելու ձգտում ունեցող անձը իր առջև կամ շատ թեթև կամ շատ բարդ խնդիրներ է դնում: Առանձնացնում են անհաջողությունից խուսափելու երեք տեսակ՝ 1) սեփական աչքերում արժեզրկվելու վախ, 2) շրջապատի աչքերում արժեզրկվելու վախ, 3) «Ես»-ի արժեզրկման հետ չկապված վախ³¹: Ակնհայտ է, որ նշված վախերը և դրանք չեզոքացնելու մեխանիզմները կարող են կապված լինել նաև հանցավոր վարքագծի հետ: Մասնավորապես, հակասոցիալական ուղղվածություն ունեցող շրջապատողների աչքերում արժեզրկվելու վախը կարող է հարկադրել անձին հանցավոր արարք կատարելու՝ այդ շրջապատում իր հեղինակությունը հաստատելու կամ այն չկորցնելու համար:

Բացի մոտիվացիոն հատկություններից անհրաժեշտ է խոսել նաև անձի մոտիվացիոն ոլորտի մասին (վերջինս ավելի մեծ կրիմինոլոգիական նշանակություն ունի):

Մոտիվացիոն ոլորտը անձի հոգեկան կառուցվածքի «կենտրոնն» է: Մոտիվացիոն ոլորտը իրենից ներկայացնում է տվյալ անձի մեջ առկա բոլոր մոտիվացիոն երևույթների՝ պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների, վարքագծի ստերեոտիպերի հիերարխիկ ամբողջություն:

Մոտիվացիոն ոլորտը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով ինչպիսիք են լայնությունը, ճկունությունը, հիերարխիկութ-

²⁹ Ст' у Ильин Е. П. Գշվ. աշխ., էջ 177-178:

³⁰ Ст' у Олпорт Г. Функциональная автономия мотивов. М., 2002, էջ 31:

³¹ Ст' у Birney R. C., Burdick H., Teevan R. C. Fear of failure. N.Y., 1969, էջ 39:

յունը³²:

Մոտիվացիոն ոլորտի լայնությունն ասելով հասկանում են մոտիվացիոն գործոնների՝ պահանջմունքների, հետաքրքրությունների, նպատակների բազմազանությունը: Որքան բազմազան են մոտիվացիոն գործոնները, այնքան ավելի զարգացած է մոտիվացիոն ոլորտը, ուստի նաև ինքը՝ անձը: Մոտիվացիոն ոլորտի աղքատությունը կյանքը դարձնում է ձանձրալի, անլիարժեք, իսկ մարդն էլ հոգեպես թերի զարգացած է լինում: Բայց, պետք է նշել, որ մոտիվացիոն ոլորտի չափից ավելի բազմազանությունն էլ դրական երևույթ չէ: Մասնավորապես, երբ անձը միաժամանակ բազմաթիվ հետաքրքրություններ է դրսևորում, վտանգ է առաջանում, որ ոչ մեկով էլ խորությամբ չի զբաղվի:

Մոտիվացիոն ոլորտի ճկունությունն ասելով հասկանում են միևնույն պահանջմունքի բավարարման միջոցների բազմազանությունը (ակնհայտ է, որ որքան անձի զինանոցում բազմազան են նույն պահանջմունքի բավարարման միջոցները, այնքան մեծ է հավանականությունը, որ նա կընտրի իրավունքի նորմերին համապատասխան վարքագիծ):

Մոտիվացիոն ոլորտի հիերարխիկությունը անձի գիտակցության (ենթագիտակցության) մեջ այս կամ այն պահանջմունքի, մոտիվացիոն դիրքորոշման, արժեքների նշանակալիության արտացոլումն է, որին համապատասխան էլ որոշ մոտիվացիոն կազմավորումներ դրդապատճառի ձևավորման ժամանակ դոմինանտ, իսկ մյուսները՝ երկրորդական նշանակություն են ստանում:

Փաստորեն, անձի մոտիվացիոն ոլորտից է կախված նրա վարքագիծը: Ուստի, մոտիվացիոն ոլորտի նպատակաուղղված ձևավորումը ըստ էության անձի և նրա ապագա գործունեության ձևավորումն է:

³² Ст' у Немов Р.С. Психология. М., 1994.

ԹԵՄԱ 2.

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՐԱ

§1. Հանցավոր վարքագծի դրդապատճառները

1. Իրավագիտության մեջ վաղուց փորձեր են արվում գտնելու հանցավոր վարքագծի դրդապատճառների առանձնահատկությունները: Հիմնական խնդիրը հետևյալն է. 1) ինչո՞վ են տարբերվում հանցավոր վարքագծի դրդապատճառները սոցիալապես օգտակար կամ չեզոք վարքագծի դրդապատճառներից և արդյո՞ք տարբերվում են 2) ինչպի՞սի սոցիալական գնահատական կարելի է տալ հանցագործությունների դրդապատճառներին:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ հանցագործությունների դրդապատճառների սոցիալական գնահատականի հարցում միասնական կարծիք չկա: Որոշ քրեագետներ գտնում են, որ հանցագործությունների բոլոր դրդապատճառները հանրորեն վտանգավոր են: Մյուսները գտնում են, որ հանցագործությունները կարող են կատարվել ինչպես հանրորեն վտանգավոր այնպես էլ հանրորեն չեզոք և նույնիսկ օգտակար դրդապատճառներով: Վերջապես կան քրեագետներ, որոնք գտնում են, թե հանցագործությունների դրդապատճառները հիմնականում հանրորեն չեզոք են:

Վերջին ժամանակներս որոշ քրեագետների կողմից այն միտքն է արտահայտվում, որ դրդապատճառի սոցիալական գնահատականը կախված է նրանից, թե ինչպիսի հասարակական հարաբերությունների համակարգի մեջ է այն ընդգրկված, ինչպիսի հասարակական հարաբերությունների է հակադրվում: Այլ կերպ ասած, դրդապատճառի սոցիալական էությունը կարելի է բացահայտել միայն քննարկելով այն արարքի սոցիալական էությունը, որը կատարվում է այդ դրդապատճառով: Ուստի, միևնույն վերացական բովանդակությամբ դրդապատճառով կարող է կատարվել ինչպես հանրորեն օգտակար, այնպես էլ չեզոք և վտանգավոր արարք: Վերջին դեպքում դրդապատճառն ինքն էլ ուրեմն հանրորեն վտանգավոր է: Ուրեմն դրդապատճառի սոցիալական գնահատականը կախված է դրանով կատարվող կոնկրետ արարքի սոցիալական էությունից (վերացական «վրեժի» դրդապատճառը կարծես թե հակասոցիալական բովանդակություն ունի, բայց, այդ դրդապատճառը կարող է մղել

հանրորեն օգտակար արարքի: Օրինակ՝ ատելությունը և վրեժի զգացումը հայրենիքի թշնամիների նկատմամբ մղում է անձին հերոսական արարքի):

Եթե այդպես է, ապա ոչ մի վերացական վերցված դրդապատճառի չի կարելի միանշանակ գնահատական տալ և դասել հակասոցիալական կամ օգտակար դրդապատճառների թվին. դրդապատճառների սոցիալական նշանակությունը հարաբերական է³³:

Հանցավոր վարքագծի դրդապատճառների առաջին առանձնահատկությունը դրանց հարաբերական հակասոցիալական բնույթն է:

Հարկ է նշել, սակայն, որ այս տեսակետը որոշ հոգեբանների կողմից քննադատության է ենթարկվել: Մասնավորապես, Ե. Պ. Իլյինը գտնում է, որ որոշ կրիմինոլոգների այն կարծիքը, թե վերացական վերցված դրդապատճառը սոցիալապես չեզոք է, և որ միևնույն դրդապատճառով կարող են կատարվել ինչպես վտանգավոր, այնպես էլ չեզոք և օգտակար արարքներ, այն մոլորության արդյունք է, որ դրդապատճառը խիստ նեղ է հասկացվում: Իրոք դրդապատճառը սոցիալապես չեզոք է, որովհետև արտաքնապես նման միևնույն դրդապատճառով կարող են կատարվել սոցիալական տեսանկյունից հակադիր արարքներ: Բայց ամբողջ հարցն այն է, որ դրդապատճառների նմանությունը միայն արտաքին է: Եթե դրդապատճառը հասկանում ենք որպես բարոյ, համակարգային երևույթ, որի կառուցվածքի մեջ մտնում են պահանջումները, նպատակը, նպատակին հասնելու միջոցները, «ներքին գտման» ենթահամակարգը, անձի դիրքորոշումներն ու արժեքային կողմնորոշումները, և եթե դրդապատճառը արարքի իմաստն է, հիմնավորումը, ապա հանցավոր վարքագծի դրդապատճառը չի կարող հարաբերականորեն վտանգավոր լինել. այն միշտ էլ կրիմինալ, հանրորեն վտանգավոր բնույթ ունի: Մանվանդ, եթե նկատի ունենանք, որ արարքի կատարման մտադրությունը, վճռի ընդունումը դրդապատճառի տարրերից են, ապա ակնհայտ է, որ հանցագործության դրդապատճառը միշտ էլ կրիմինալ է (հանցանք կատարելու մտադրությունը չի կարող չեզոք կամ օգտակար լինել)³⁴:

³³ Ст' у Лунеев В. В. Мотивация преступного поведения. М., 1991, էջ 41-99:

³⁴ Ст' у Ильин Е. П. Նշված աշխ. էջ 289:

Այստեղ պետք է որոշակի հստակեցում մտցնել: Անձի պահանջումները, նույնիսկ որոշակի նպատակները առանձին վերցված կրիմինալ բնույթ չունեն. դրանց կրիմինալ և վտանգավոր բնույթ են հաղորդում դրդապատճառի մյուս տարրերը, հիմնականում նրանք, որոնք կապված են «ներքին գտման» ենթահամակարգի հետ (հիմնականում միջոցների ընտրությունը): Փաստորեն, անձը իր պահանջումներին բավարարման, նպատակներին հասնելու համար ընտրում է սոցիալապես վտանգավոր միջոցներ ու եղանակներ, դրանով իսկ իր շահերը հակադրելով հասրակական շահերին:

Դրդապատճառների սոցիալական գնահատականի հարցը կարևոր նշանակություն ունի կանխիչ-դաստիարակչական գործունեության համար: Այդ գործունեությունը պետք է ուղղված լինի ոչ թե վերացական «օգտակար» պահանջումներին, նպատակների ձևավորմանը, այլ նրան, որ անձի մեջ ձևավորվի պահանջումների բավարարման և նպատակներին հասնելու սոցիալապես օգտակար միջոցների ու եղանակների ճկուն համակարգ, սեփական ցանկությունները հասարակության շահերի հետ ճիշտ համամասնության մեջ պահելու ունակություն:

2. Հանցավոր վարքագծի դրդապատճառների հաջորդ առանձնահատկությունը, որն ընդգծվում է կրիմինոլոգիական գրականության մեջ, **բնական, նյութական պահանջումների գերակայությունն է հոգևոր պահանջումների նկատմամբ:**

Այս փաստը հաստատված է բազմաթիվ հետազոտություններով³⁵:

Հոգևոր պահանջումները համարվում են առավել բարձր և սոցիալապես նշանակալից քան բնական և նյութական պահանջումները: Եմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքում հաստատված այն փաստը, որ հանցանք կատարող անձանց մեջ գերիշխում են բնական և նյութական պահանջումները, թույլ է տալիս եզրակացնելու, որ հանցավոր վարքագծի մոտիվացիայում էական դեր է կատարում անձի սահմանափակվածությունը: Նշանակում է, եթե անձին հաղորդակից դարձնեն հոգևոր արժեքներին, նրան ներարկեն հոգևոր հետաքրքրություններ, ապա դա կփոխի նրա սոցիալական կողմնորոշումը: Դեռևս Դեմոկրիտն էր ասում, որ սխալի

³⁵ Ст' у Влияние социальных условий на преступность. М., 1983, էջ 66-67:

պատճառը լավի մասին չհիմնալն է:

Խոր հոգևոր պահանջումներին բացակայությունը փոխարինվում է իրադրության մղումներով և կվազիպահանջումներով, ինչը մեծ կրիմինալ նշանակություն ունի:

Հանցավոր վարքագծի մոտիվացիան պրագմատիկ բնույթ ունի: Այն ուղված է հիմնարար պահանջումների բավարարմանը (դեպքերի մոտ 80 %- ուն):

Ասվածը չի նշանակում, թե հոգևոր պահանջումները չեն կարող ընկած լինել հանցավոր վարքագծի հիմքում (էսթետ Եսասերի սոցիալական տիպը վաղուց է հայտնի): Բայց, որպես կանոն, հանցավոր վարքագծի մոտիվացիայում հոգևոր պահանջումները հանդես են գալիս պրիմիտիվ, ցածրակարգ ձևերով՝ զվարճանալու, նշակույթի արժեքներ ձեռք բերելու ցանկություն և այլն:

3. Հանցավոր վարքագծի դրդապատճառների երրորդ առանձնահատկությունը, որը նշվում է կրիմինոլոգիական գրականության մեջ, **տենչանքի տիպի մղումների գերակայությունն է պարտքի տիպի դրդապատճառների նկատմամբ:**

Արդեն խոսվել է դրական և բացասական մոտիվացիաների մասին (դրական հույզեր պարզևող և բացասական հույզեր պարզևող):

Տենչանքի տիպի մղումները դրական մոդալություն ունեցող դրդապատճառներ են, իսկ պարտքի կատարման հետ կապված դրդապատճառները՝ բացասական:

Թեև հանցավոր վարքագծի դրդապատճառների մեջ գերիշխում են դրական մոդալություն ունեցող տենչանքի մղումները, դա ամենևին էլ չի նշանակում թե հանցանք կատարող անձանց մեջ բացակայում է կոնֆլիկտը ցանկալիի և պարտքի կատարման անհրաժեշտության զգացման միջև: Բայց, պարտքի բարոյական դրդապատճառը չեզոքացվում է մտածողության ստերեոտիպների միջոցով՝ «մենակ ես չեմ, բոլորն էլ այդպես են անում», «առաջին ու վերջին անգամ եմ անում», «իրադրությունն է պահանջում այդպես վարվել», «այլ ելք չկա» և այլն:

Կրիմինոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տենչանքի, պահանջումների բավարարմանն ուղղված մղումները հանցագործության դրդապատճառ են հանդիսանում դեպքերի մոտ 3/4-ում: Իսկ այն դեպքերում, երբ հանցավոր վարքագծի դրդապատճառ է պարտքի կատարումը, վերջինս հասկացվում է խեղաթյուր-

ված, սահմանափակ ձևով՝ ծառայության կեղծ հասկացված շահեր, կրիմինալ խմբի ազդեցություն, ռեֆերենտային խմբի կարծիքի հետ նույնանալու ցանկություն և այլն:

4. Չորրորդ առանձնահատկությունը՝ **հանցավոր վարքագծի մոտիվացիայում «տակտիկական բնույթի» դրդապատճառների գերակայությունն է «հեռանկարային, ստրատեգիական բնույթի» դրդապատճառների նկատմամբ:**

Մարդկային վարքագծի դրդապատճառները տարբերվում են ժամանակային պարամետրերով. որոշ դրդապատճառներ ուղղված են դեպի այժմեական շահերը, մյուսները՝ դեպի հեռավոր ապագան (հեռանկարային դրդապատճառներ): Ընդ որում, հոգեբանությունը ապացուցել է, որ որքան դրդապատճառների ժամանակային գոտին մոտիկ է տվյալ պահին, այնքան «կարճ» է մոտիվացիան, այնքան մեծ է նրա դինամիկական և փոքր՝ բովանդակային նշանակությունը, և հակառակը՝ որքան հեռու է դրդապատճառի ժամանակային գոտին, այնքան մեծ է մոտիվացիայի բովանդակային և փոքր՝ դինամիկական նշանակությունը: Իսկ դա արտացոլում է անձի սոցիալական էությունը:

Հանցավոր վարքագծում գերակայում է «կարճ» մոտիվացիան: Միայն խոշոր և առանձնապես խոշոր չափերի հափշտակությունների, կոռուպցիոն հանցագործությունների ժամանակ է, որ կարելի է խոսել հեռանկարային, ստրատեգիական մոտիվացիայի մասին: Բայց, նույնիսկ այդ դեպքում մոտիվացիան պայմանականորեն կարելի է հեռանկարային անվանել, որովհետև հանցավորը, համեմայն դեպս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների շրջանակում, դրական ապագա չունի:

5. Հանցավոր վարքագծի դրդապատճառների հինգերորդ առանձնահատկությունն այն է, որ դրանք մարդկային **հասարակության արժեքների համակարգում ցածր տեղ են զբաղեցնում** (իհարկե ընդհանուր փիլիսոփայական, բարոյական տեսանկյունից: Իրական կյանքում, կոնկրետ հասարակությունում այդ դրդապատճառներից որոշները միայն խոսքով են քննադատվում ու պախարակվում, իսկ գործնականում հասարակության մեծ մասի համար հանդիսանում են արժեք):

§2. Նպատակադրումը

Նպատակադրումը, որը մոտիվացիայի բաղկացուցիչ փուլերից է, իր մեջ ընդգրկում է նպատակների ձևավորման, դրանց ընտրության և ընտրված նպատակի նկատմամբ վերաբերմունքի որոշման գործընթացները³⁶:

Կոնկրետ արարքի նպատակների ձևավորումն ու ընտրությունը այդ նպատակները կյանքից, կենսափորձից, հիշողությունից, գիտելիքներից և երևակայությունից ստանալու գիտակցական գործընթաց է, որն իրագործվում է արդիականացված պահանջմունքի ու առկա իրադրության պահանջներին համապատասխան:

Նպատակի ընտրության անմիջական դետերմինանտ է հավանությունների մակարդակը: Հավանությունների բարձր մակարդակի դեպքում ընտրվում են դժվար նպատակներ, իսկ հավանությունների ցածր մակարդակի դեպքում՝ հեշտ նպատակներ: Եվ դա կանխորոշում է նպատակին հասնելու միջոցների ընտրությունը:

Յուրաքանչյուր մարդ, ունենալով կյանքի հասարակական պայմանների, այդ թվում, քրեական օրենսգրքի կողմից տրված հնարավորությունների շրջանակ, ընտրում է այնպիսի նպատակներ, որոնք համապատասխանում են նրա մոտիվացիոն վիճակին: Իսկ նպատակի ընտրությունից հաճախ կախված է դրան հասնելու ուղիների ու միջոցների բնույթը:

Նպատակը, դրդապատճառի նման, իդեալական, սուբյեկտիվ երևույթ է: Բայց, «նպատակ» հասկացության մեջ առավել հստակ է ներկայացվում ապագա արարքի առարկայական ասպեկտը: Օրինակ՝ շահադիտական դրդապատճառը կարող է կոնկրետանալ ինչ-որ մեկի ձեռքի ժամացույցին տիրանալու նպատակի մեջ: Փաստորեն, նպատակադրման գործընթացում առավել ակնհայտ է դառնում ապագա արարքի հակասոցիալական բնույթը:

Հարկ է նշել, որ դրդապատճառը և նպատակը երկու հարաբերակցական հասկացություններ են: Եվ, չնայած դրանց միջև խիստ կանխորոշված և կոշտ կապ չկա, այնուամենայնիվ, որոշակի դրդապատճառներ կապվում են որոշակի նպատակների հետ: Այսպես, բնական և նյութական պահանջմունքների բավարարման ցանկութ-

յունը նպատակադրման գործընթացում կապվում է կենցաղային որոշակի առարկաների, պրեստիժային արժեքների, ցուփ ու շվայտ կյանք վարելու հետ և այլն: Այս նպատակները հիմնականում ներքին բնույթ ունեն, այսինքն՝ բխում են անձից, նրա մեջ առկա արդիականացված պահանջմունքներից:

Դրա հետ մեկտեղ, շատ հանցանքներ կատարվում են արտաքին, կոմունիկատիվ (հաղորդակցման) նպատակների համար: Դա հատկանշական է հիմնականում խմբակային հանցագործություններին (խմբի կազմում հանցանք կատարողների մոտ կեսը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ղեկավարվում են կազմակերպչի կամ այլ հանցակիցների կողմից տրված նպատակներով):

Արտաքին նպատակադրումը նկատվում է նաև միայնակ գործող հանցագործի մոտ, երբ ծանոթներից, կինոֆիլմներից, գրքերից և տեղեկատվության այլ աղբյուրներից վերցված նպատակները անփոփոխ կամ «կատարելագործված» ձևով ընկալվում են անձի կողմից և դառնում արարքին ուղղություն տվող ուժ:

Շատ կարևոր է իմանալ, որ արտաքին նպատակադրման դեպքում մոտիվացիոն գործընթացը ընթանում է նպատակից դեպի դրդապատճառ: Այլ կերպ ասած, սոցիալապես պարսավելի նպատակի ընտրությունը կատարվում է այն դեպքում, երբ այդ նպատակը անձի մոտիվացիոն ոլորտում «գտնում» է իր դրդապատճառը (պահանջմունքը, մղումը): Եթե արտաքին նպատակը խիստ հակասում է անձի արժեքային համակարգին, ապա այն չի կարող ընտրվել նրա կողմից³⁷:

Հանցավոր վարքագծի դրդապատճառների «տակտիկական», «կարճ» բնույթը իր կնիքն է թողնում նաև նպատակների վրա: Հանցավոր վարքագծի մոտիվացիային հատուկ են առօրեական, այժմեական, անմիջական, ոչ հեռանկարային նպատակները: Հանցավոր վարքագծի նպատակները մեծ մասնաբաժնով իրադրության բնույթ են կրում, իսկ անձն էլ փաստորեն իր հոգեկան վիճակի և առկա իրադրության «ստրուկն» է հանդիսանում: Նպատակի գիտակցական ընտրությունը փոխարինվում է հուզականով, որում նշանակալից դեր են խաղում վարքագծի ստերեոտիպներն ու նախկին համանման իրադրություններից մնացած աֆեկտիվ հետքերը: Նպատակի

³⁶ Ст' у Психологические механизмы целеобразования. М., 1977, էջ 184:

³⁷ Նշվ. աշխ., էջ 128:

ընտրության ճակատագիրը որոշվում է անձի դիրքորոշումներով, սովորույթներով, ստերեոտիպներով:

Պետք է իմանալ նաև, որ որոշ դրդապատճառներ չեն կապվում ռացիոնալ-առարկայական նպատակների հետ, այլ միաձուլվում են արարքին, տեղափոխվում են արարքի կատարման գործընթացի վրա: Այսպիսի մոտիվացիան կոչվում է պրոցեսուալ, իսկ նպատակները՝ պրոցեսուալ նպատակներ: Նման դեպքերում անձին բավարարվածություն է պատճառում զուտ արարքի կատարումը (նման մոտիվացիան, որպես կանոն անվանում են «չհասունացած»): Պրոցեսուալ է օրինակ խաղային մոտիվացիան (խաղը ինքնին բավարարվածություն է պատճառում և ռացիոնալ նպատակներ չի հետապնդում): Պրոցեսուալ մոտիվացիան կարող է հատուկ լինել նաև որոշ հանցագործությունների: Օրինակ՝ անձը բավականություն է ստանում լավ մտածված խարդախության, ֆինանսական մեքենայության բուն գործընթացից, այդքան էլ չհետաքրքրվելով վերջնական արդյունքով:

§3. Նպատակին հասնելու միջոցների ու եղանակների ընտրությունը

Քանի որ դրդապատճառը (ճիշտ կլինի ասել պահանջմունքը) մինչև մոտիվացիայի մյուս տարրերի հետ միանալը սոցիալապես չեզոք է, իսկ նրանով կանխորոշված նպատակը միշտ չէ, որ խստորեն կապված է հակասոցիալական արարքի կատարման հետ, ապա նպատակին հասնելու եղանակների ու միջոցների ընտրությունը անձին բերում է երկընտրանքի առջև՝ նպատակին հասնել իրավաչափ կամ հակաիրավական միջոցներով: Նպատակին հասնելու եղանակների ու միջոցների ընտրության դեպքում ապագա արարքի սոցիալական բնույթը վերջնականապես պարզ է դառնում:

Կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ նպատակների մի զգալի մասին կարելի էր հասնել օրինական միջոցներով, իսկ այն նպատակները, որոնց չէր կարելի հասնել օրինական միջոցներով, հենց իրենց՝ դատապարտյալների վկայությամբ, կարող էին հետաձգվել, կամ սուբլիմացիայի ենթարկվել, փո-

խակերպվել սոցիալապես ընդունելի նպատակների³⁸:

Այդ դեպքում հարց է ծագում, թե ինչու են ընտրվում նպատակներին հասնելու սոցիալապես պարսավելի, հանցավոր ուղիները: Սա կախված է բազմաթիվ գործոններից՝ անձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորություններից, ստեղծված իրադրությունից, անձի գիտելիքներից, կենսափորձից, սոցիալական դերից, ինտելեկտուալ և ֆիզիկական հնարավորություններից, հոգեբանական վիճակից և այլն:

Նպատակին հասնելու հանցավոր միջոցը անձի կողմից ընտրվում է այն դեպքում, երբ դա նրան թվում է նպատակին հասնելու առավել կարճ, արդյունավետ միջոց: Բացի այդ, հանցավոր միջոցն ընտրվում է այնտեղ, որտեղ առկա են հանցագործությանը նպաստող պայմաններ, իրավունքի նորմերից ու բարոյականությունից շեղվող վարքագծի օրինակներ, որտեղ տիրում է անպատժելիության մթնոլորտ³⁹:

Նպատակին հասնելու հանցավոր միջոցներ ընտրած մարդկանց համար ասում են, որ նրանք շատ բան են ցանկանում, բայց քչի են ընդունակ: Որպես կանոն, հանցանք կատարող անձանց հատուկ է անսահմանափակ սպառման ցանկությունը: Այդ դեպքում ձևավորվում են այնպիսի նպատակներ, որոնք օբյեկտիվորեն ընդհանրապես չեն կարող բավարարվել օրինական միջոցներով: Հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, երբ ձևավորված նպատակները չեն կարող օրինական ճանապարհով բավարարվել ոչ թե ընդհանրապես, այլ տվյալ պահին, տվյալ իրադրությունում: Միևնույն ժամանակ, նպատակին հասնելու եղանակների ու միջոցների ընտրությունը կարող է սահմանափակվել ոչ միայն օբյեկտիվ իրադրությամբ, այլ նաև անձի սուբյեկտիվ հնարավորություններով՝ գիտելիքների մակարդակով, ընդունակություններով, կենսափորձով, նույնիսկ կենսաբանական հատկանիշներով:

Անձի սահմանափակվածությունը, ընդհանուր և իրավական անգրագիտությունը, անպատիժ մնալու թեթևամիտ հույսը այն երևույթներն են, որոնք նպաստում են նպատակին հասնելու հան-

³⁸ St' u Лунеев В. В. Նշվ. աշխ. էջ 77:

³⁹ St' u Ратинов А. Р. Лиость преступника и проблема ценностей. / Вопросы борьбы с преступностью. М., 1978, էջ 113:

ցավոր եղանակների ու միջոցների ընտրությամբ:

Չարկ է նշել նաև այն պարադոքսալ իրավիճակների մասին, երբ բոլոր առկա ուղիները անձի համար հղի են անցանկալի հետևանքներով (օրինակ, կատարել անօրինական հրամանը կամ հրաժարվել դրա կատարումից): Այսպիսի երկընտրանքը բարոյագիտության մեջ կոչվում է բարոյական կոնֆլիկտ: Նման երկընտրանքի մեջ են գտնվում ազատագրկման վայրերից ազատված շատ անձիք, ովքեր չունեն բնակարան, աշխատանք և գոյատևելու միակ միջոցը տեսնում են նոր հանցանքի կատարման մեջ:

Փաստորեն, այն կարծիքը, թե բարոյական կոնֆլիկտը կարելի է չեզոքացնել միայն մարդու մեջ ճիշտ ընտրություն կատարելու ընդունակություն ձևավորելով, այդքան էլ ճիշտ չէ: Անհրաժեշտ է նաև փոփոխություններ իրականացնել օբյեկտիվ պայմանների մեջ:

§4. Հնարավոր հետևանքների կանխատեսումը

Թեև կանխատեսման փուլը մոտիվացիոն գործընթացում դիտարկվում է միջոցների ընտրության փուլից հետո, այնուամենայնիվ պետք է իմանալ, որ կանխատեսման գործընթացը առկա է մոտիվացիայի բոլոր փուլերում՝ պահանջմունքի արդիականացման, նպատակի ձևավորման փուլերում անձը արդեն իսկ կշռադատում է իր հնարավորությունները և այն ապագա արդյունքը, որը կարող է առաջանալ նպատակին հասնելուն ուղղված արարքի իրագործման դեպքում:

Հանցագործի մոտիվացիան իր մեջ կարող է ընդգրկել 1. սեփական արարքի, 2. նպատակին հասնելու ինչպես նաև հանցագործության հետքերը թաքցնելու հնարավոր միջոցների, եղանակների, գործիքների, 3. իրեն հակադրվող կամ աջակցող այլ անձանց վարքագծի, 4. հանցագործությանը նպաստող կամ խոչընդոտող բնական և սոցիալական երևույթների, 5. արարքի ցանկալի և ոչ ցանկալի, ուղղակի կամ անուղղակի, մոտակա և հեռավոր հետևանքների, 6. հնարավոր քրեական պատասխանատվության և իր կամ ուրիշների համար բացասական հետևանքների կանխատեսումը:

Ընդ որում, կանխատեսման վերջին տարրերը ավելի ու ավելի քիչ են վերլուծվում անձի կողմից:

Կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ

պատժից խուսափելու հույսը, իր համար բացասական հետևանքների առաջացմանը չհավատալու հակվածությունը շատ հանցագործությունների մոտիվացիայի էական հատկանիշներից են (հարկ է նշել, որ պատժից խուսափելու հույսը հիմնվում է ոչ միայն սուբյեկտիվ այլ նաև օբյեկտիվ փաստերի վրա)⁴⁰:

Այն հանգամանքը, որ հանցանք կատարող անձի կողմից ավելի քիչ են վերլուծության ենթարկվում իր արարքի հնարավոր բացասական հետևանքները (քրեական պատասխանատվությունն ու պատիժը, սեփական ընտանիքի համար անբարենպաստ հետևանքները և այլն) վկայում է այն մասին, որ այստեղ էական դեր են կատարում անձի անձնային հատկությունները, մասնավորապես, խիստ եսասիրությունը, եսակենտրոնությունը: Եսասիրական շահի «նեղ անցքից» նկատվում է միայն այն, ինչը համապատասխանում է անձի գերակայող, արդիականացված պահանջմունքին, մոտեցնում է նրան բաղձալի նպատակին:

Կանխատեսման գործընթացի խեղաթյուրումները պայմանավորված են նաև անձի ինտելեկտուալ առանձնահատկություններով. գիտելիքների պակաս, սոցիալական կյանքի իրական գործընթացներից, իրավապահ մարմինների աշխատանքից անտեղյակություն և այլն:

Կանխատեսման գործընթացը ավելի է խեղաթյուրվում էքստրեմալ, կոնֆլիկտային իրադրություններում, ստրեսային վիճակում, ավկոհուլային կամ թմրանյութային հարբածության ժամանակ:

§5. Վճռի ընդունումը

Վճռի ընդունումը ապագա վարքագծի մոդելն է, ապագա հանցագործության մտապատկերը: Այն հանցանքի կատարմանը անձի պատրաստ լինելն է:

Հանցանք կատարելու վճռի ընդունումը հարաբերականորեն գիտակցված կամաարտահայտության ակտ է, ուղեղի վերլուծական

⁴⁰ St' u Ратинов А. Р., Ефремова Г. X. Правовая психология и преступное поведение. Красноярск, 1988, էջ 142:

աշխատանքի արդյունք⁴¹: Բայց, վճռի ընդունման գործընթացի գիտակցվածության աստիճանը, կախված վարքագծի ստերեոտիպային կամ ոչ սովորական բնույթից, կարող է տարբեր լինել: Ստերեոտիպային վարքագծի դեպքում վճռի ընդունումն իրականացվում է վայրկյանների ընթացքում. գիտակցությունն այս դեպքում ամբողջությամբ չի ընդգրկվում մոտիվացիոն գործընթացի մեջ:

Վճռի ընդունման դինամիկան կախված է նաև անձի առանձնահատկություններից՝ հիմնականում գրգռման և արգելակման գործընթացների, գործունեության կողմնորոշիչ և կատարողական փուլերի փոխհարաբերակցությունից: Ապացուցված է, որ զգուշավոր մարդկանց մոտ կողմնորոշիչ փուլը գերակայում է կատարողականի նկատմամբ, իսկ իմպուլսիվ մարդկանց մոտ՝ հակառակ պատկերն է նկատվում⁴²: Նշված փուլերի հավասարակշռությունը նկատվում է այն դեպքում, երբ գրգռման ու արգելակման գործընթացները հավասարակշռված են: Ասվածը վկայում է այն մասին, որ վճռի ընդունումը միայն գիտակցական գործընթաց չէ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ծանր հանցանքների կատարման շատ դեպքերում վճիռն ընդունվում է հուզական մակարդակի վրա: Թեև վճռի ընդունումը վճռական նշանակություն ունի վարքագծի իրականացման համար, որովհետև դա փաստորեն նշանակում է, որ անձն արդեն պատրաստ է հանցանք կատարելու, այնուամենայնիվ, պետք է իմանալ, որ վճռի ընդունման մոտիվացիոն փուլը կախված է մոտիվացիայի նախորդ փուլերից, իր վրա է կրում դրանց կնիքը:

Ճշգրտելով և ամրագրելով արդիականացված պահանջմունքը, արարքի ելակետային մղումը, նպատակն ու դրան հասնելու միջոցները, կանխատեսման արդյունքները, վճռի ընդունումն իր մեջ է ներառում մոտիվացիայի բոլոր փուլերը, անձի հատկություններն ու առկա սոցիալական իրադրությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե անձը գիտակցելով իր պահանջմունքը օրինական միջոցներով բավարարելու անհնարինությունը, չի խոչընդոտում դրա արդիականացմանը և

ընդգրկվում է նպատակի ու դրան հասնելու միջոցների ընտրության, կանխատեսման գործընթացների մեջ, ապա արմատական, բեկումնային երևույթների բացակայության պայմաններում վճռի ընդունումը կանխորոշվում է:

Հանցանք կատարելու վճռի մեջ արտացոլվում են հետևյալ առանձնահատկությունները՝ 1) անձի գիտակցված հակադրումը հասարակությանը (հակադրվելու աստիճանը կարող է տարբեր լինել, որովհետև վճիռը կարող է լինել իմպուլսիվ, զգուշավոր և այլն), 2) երկընտրանքի դադարումը, 3) անձի կողմից կոպիտ ինտելեկտուալ սխալի կատարումը (սխալ այն իմաստով, որ նույնիսկ հանցավորի համար ամենաբարենպաստ արդյունքի դեպքում, օբյեկտիվորեն բացառվում են նրա կյանքի և գործունեության դրական հեռանկարները, թեկուզ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների շրջանակում):

⁴¹ Ст'ю Анохин П. К. Проблемы принятия решения в психологии и физиологии. // Вопросы психологии. М., 1974, էջ 21:

⁴² Ст'ю Никифоров Г. С. Самоконтроль как механизм надежности человека-оператора. Л., 1977, էջ 55-56:

ԹԵՄԱ 3.

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԸ

Մարդու վարքագծի նկատմամբ դետերմինիստական մոտեցումը թույլ է տալիս եզրակացնելու, որ հանցավոր վարքագիծը պայմանավորված է սոցիալական միջավայրի կրիմինոգեն ազդեցությամբ: Բայց, պետք է իմանալ, որ այդ ազդեցությունը «կուտակողական» բնույթ ունի. յուրաքանչյուր հաջորդ կրիմինոգեն ազդեցությունը ներգործում է անձի վրա յուրահատուկ ձևով՝ միջնորդվելով նախորդ ազդեցությունների արդյունքում ձևավորված անձնային առանձնահատկություններով:

Նշանակում է, հասկանալ հանցավոր վարքագծի պատճառները անհնար է առանց հանցանք կատարող անձանց ուսումնասիրության: Ընդ որում, անհրաժեշտ է ուսումնասիրել ու բացահայտել այն առանձնահատկությունները, որոնք միշտ ընդգրկված են հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում, որոնք իրենց մեջ խտացնելով սոցիալական միջավայրի կրիմինոգեն ազդեցությունները, միևնույն ժամանակ հանցավոր վարքագծի սուբյեկտիվ պատճառներ են:

Այս առումով ավելի հեռանկարային է անձի մոտիվացիոն ոլորտի ուսումնասիրությունը: Դա պայմանավորված է նրանով, որ մոտիվացիոն ոլորտը անձի հոգեկան կառուցվածքի միջուկն է և կենտրոնական դեր է կատարում հանցավոր վարքագծի մեխանիզմում:

Հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտը իրենից ներկայացնում է արդիական և պոտենցիալ, գիտակցված և անգիտակցական (ենթագիտակցական), բնական և մշակութային, նյութական և հոգևոր մղումների, պահանջմունքների, հետաքրքրությունների, սովորությունների, արժեքների և այլ սուբյեկտիվ դետերմինանտների համակարգ:

Հարկ է նշել, որ հակասական իրականությունը անձի մեջ ձևավորում է հակասական դրդապատճառներ, բայց դրանց համակցությունը անձն և հեղինեղուկ երևույթ չէ, այլ հարաբերականորեն կայուն և հիերարխիկ համակարգ է ներկայացնում: Որոշ մղումներ (պահանջմունքներ), հարաբերություններ ու կապեր գլխավոր և գերակայող դեր են կատարում, մյուսները՝ երկրորդական: Անձի հիմնա-

կան ուղղվածությունը (դիրքորոշումը) որոշվում է գլխավոր և գերակայող պահանջմունքներով: Եվ այն ինչը առավել նշանակալից է մարդու համար, վերջին հաշվով դառնում է նրա գործունեության դրդապատճառ ու նպատակ: Այս տեսակետից մարդիկ իրարից տարբերվում են ոչ այնքան իրենց պահանջմունքների քանակով, որքան դրանց ներդաշնակության աստիճանով, մոտիվացիոն ոլորտում այս կամ այն պահանջմունքի ծավալով և, որ ամենակարևորն է, այն տեղով, որ այդ պահանջմունքը, սուբյեկտի նախապատվությունների հետ կապված, զբաղեցնում է մոտիվացիոն ոլորտում:

Ընդ որում, հարկ է իմանալ, որ յուրաքանչյուր անձի մոտիվացիոն ոլորտը քիչ թե շատ աղեկվատ արտացոլում է անձի «սեփական» հասարակական հարաբերությունների համակարգը, որում նա ընդգրկված է իր նախկին, ներկա, իսկ որոշ դեպքերում էլ ապագա գործունեության ընթացքում: Իսկ դա նշանակում է, որ հանցանք կատարող անձի մոտիվացիոն ոլորտը չի կարող իր վրա կրիմինոգեն առանձնահատկություններ չկրել:

Կրիմինոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդպիսի առանձնահատկություններ են **1) պահանջմունքների աններդաշնակ համակարգը**, երբ որոշակի պահանջմունքներ խիստ գերակայում են մյուսների նկատմամբ, **2) պահանջմունքների խեղաթյուրված համակարգը**, երբ որոշ պահանջմունքներ խեղաթյուրված կամ ուռճացված են (նյութական արժեքների կուտակման ձգտում, ալկոհոլիզմ, թմրամոլություն և այլն):

Ինչպես արդեն նշել ենք, մոտիվացիոն ոլորտի կարևոր ցուցանիշներից է դրա լայնությունը: Այս տեսանկյունից **հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտը աչքի է ընկնում աղքատությամբ և սահմանափակությամբ:**

Նախ, հանցանք կատարող անձանց մեծ մասի մեջ լրիվ բացակայում կամ սաղմնային վիճակում են գտնվում ծագումով մշակութային և ձևով հոգևոր պահանջմունքները (բարոյական, գեղագիտական, ստեղծագործական, իմացաբանական, գիտական և այլն): Այսպիսի մոտիվացիոն դատարկությունը խիստ վտանգավոր է: Այն իմաստազրկում է կյանքը, ապակողմնորոշում և բարոյազրկում է մարդուն, մոտիվացիան իջեցնում է նեղ անձնական, առօրեական մղումների մակարդակին: Իզուր չէ, որ հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտին հատուկ են նյութական, կենսաբանական

բնույթի մղումներն ու պահանջումները: Պահանջումները համակարգի այսպիսի շեղումը հատուկ է ոչ միայն հանցանք կատարող անձանց. դա նկատվում է նաև օրինապահ քաղաքացիների մոտ: Բայց, վերջիններիս մոտ այդ շեղումները փոխկապակցված, համակարգային բնույթ չունեն:

Երկրորդ, հանցանք կատարող անձանց հատուկ է **պահանջումները համակարգի ոչ հստակ հիերարխիկությունը**: Առաջին անգամ հանցանք կատարողների մեծ մասին հատուկ է պահանջումները հիերարխիկության ոչ բարձր աստիճանը: Սա ավելի շատ նկատվում է անչափահասների և երիտասարդների մոտ: Պատճառը նշված անձանց սոցիալական անհասունությունն է, այն հանգամանքը, որ պահանջումների, դիրքորոշումների համակարգը դեռևս - լիովին ձևավորված չէ: Իսկ դա բարոյական անկայունության և վերջին հաշվով հանցավոր վարքագծի հիմք է հանդիսանում:

Չանցանք կատարող անձանց և օրինապահ քաղաքացիների տարբերությունը առավել հստակ երևում է մոտիվացիոն ոլորտի ընդհանուր կառուցվածքից և դրանում գերակայող պահանջումների սոցիալական բովանդակությունից:

Բանն այն է, որ մոտիվացիոն ոլորտի սահմանափակությունը կամ հիերարխիկության ցածր աստիճանը դեռևս չեն վկայում անձի հակասոցիալական ուղղվածության և արժեքային կողմնորոշումների մասին: Դրա համար պետք է իմանալ թե անձի մոտիվացիոն ոլորտում որ պահանջումներն են հիմնական, գլխավոր, գերակայող, ինչպես են մոտիվացիոն ոլորտում հարաբերակցվում անձնական ու հասարակականը, նյութականն ու հոգևորը, իրադրութայինն ու կայունը, կենսաբանականն ու սոցիալականը:

Անձի մոտիվացիոն ոլորտի կառուցվածքային ցուցանիշ է պահանջումների մասնաբաժինը, դրանց հարաբերակցությունը մոտիվացիոն ոլորտում: Մեկ կամ մի քանի պահանջումների գերակայությունը մոտիվացիոն ոլորտին հաղորդում է հարաբերականորեն կայուն բնույթ և արտացոլում է անձի սոցիալական ուղղվածությունը (շահադիտական, բռնի-ազդեցիկ և այլն): Մոտիվացիոն ոլորտի այդպիսի որոշակիություն նկատվում է կրկնահանգազորների մոտ: Երիտասարդ հանցագործների մոտիվացիոն ոլորտը կայուն չէ, իրադրութային է, փոփոխական:

Չանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտի «հակա-

դիր» բևեռների ուսումնասիրությունները բացահայտել են հետևյալ առանձնահատկությունները՝

1. անձնականի **չափազանց** հակադրումը հասարակականին,

2. վարքագծի մեջ կենսաբանական դետերմինանտների (պահանջումների) գերակա դերը, ինչը վկայում է ոչ բավարար սոցիալիզացիայի մասին,

3. հավակնությունների **խիստ** ցածր կամ բարձր մակարդակը (ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցածր հավակնությունների ունեցող մարդիկ նախընտրում են զգուշավոր վարքագիծ, դժգոհ են իրենցից, տառապում են անլիարժեքության բարդությամբ, ինչը նպաստում է պատասխանատվության զգացման թուլացմանը: Բարձր հավակնություններ ունեցող մարդիկ նախընտրում են ռիսկի հետ կապված, ավանտյուրիստական վարքագիծ, ազդեցիկ են, իրենց անհաջողությունների մեջ հակված են մեղադրելու ուրիշներին),

4. նյութական պահանջումների գերակայությունը հոգևորների նկատմամբ,

5. բնական պահանջումների գերակայությունը սոցիոմշակութային պահանջումների նկատմամբ,

6. մղման և հաճույքի մոտիվացիայի գերակայությունը պարտքի կատարման վրա հիմնված մոտիվացիայի նկատմամբ,

7. իրադրութային, այժմեական, տակտիկական մոտիվացիայի գերակայությունը հեռանկարայինի, ստրատեգիականի նկատմամբ⁴³:

Յուրաքանչյուր անձի մոտիվացիոն ոլորտում կարող են առկա լինել նշված շեղումներից մեկը կամ մի քանիսը, բայց անձի ուղղվածությունը որոշվում է նշված շեղումների համակարգի առկայությամբ:

Խոսելով հանցանք կատարող անձի մոտիվացիոն ոլորտի մասին, անհրաժեշտ է անդրադառնալ նաև նրա հոգեբանական հատկություններին (ինտելեկտուալ, հուզական և կամային): Ոչ բավարար ինտելեկտուալ զարգացվածությունը, իր արարքի հետևանքները կանխատեսելու ամբողջությամբ կանխատեսելու անկարողությունը, հուզական անկայունությունը, անհավասարակշռությունը,

⁴³ Ст' у Лунеев В. В. Уշվ. աշխ., էջ 135-139:

ծայրահեղ իրադրություններում արարքը գիտակցաբար կարգավորելու ոչ բավարար ունակությունը, ինչպես նաև բացասական բնութագրիչները (անկարգապահություն, թեթևամտություն, ագրեսիվություն և այլն), այս կամ այն չափով բնութագրական են հանցանք կատարող անձանց մի զգալի մասին:

Հանցանք կատարած անձանց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց մի մասին բնութագրական են տարբեր տեսակի ակցենտուացիաները (որոշ բնութագրական գծերի խիստ արտահայտվածությունը), որոնք կրմինոգեն նշանակություն ունեն: Մասնավորապես, շիզոֆրենիային ակցենտուացիան, որն արտահայտվում է ինքնամոտրոսությամբ, հուզական սառնությամբ, կարեկցանքի բացակայությամբ, կամ պարանոիդ ակցենտուացիան, որն արտահայտվում է դյուրագրգռությամբ, աֆեկտիվ վիճակներով, հիվանդագին կասկածանքությամբ և նեղացկոտությամբ, վերջապես էպիլեպտոիդ ակցենտուացիան, որն արտահայտվում է կոնֆլիկտայնությամբ, իմպուլսիվությամբ, արարքի թույլ կառավարմամբ:

Ինչ վերաբերում է խառնվածքի տեսակին, ապա այն չի կանխորոշում վարքագծի հանցավոր ձևի ընտրություն, սակայն էական դեր է կատարում հանցագործության եղանակների ձևավորման մեջ և վարքագծի դինամիկական բնութագրում: Խառնվածքի տեսակը իր կնիքն է թողնում մարդու ամբողջ վարքագծի վրա (սանգվինիկի համար՝ աշխատանքի հանդեպ արագ սառելը, երբ այն կորցնում է հետաքրքրությունը, խուլերիկի համար՝ աֆեկտիվությունը, բռնկվող լինելը, ֆլեգմատիկի համար՝ դանդաղկոտությունը, մելանխոլիկի համար՝ ճնշվածությունը, թափփվածությունը մեծապես պայմանավորում են նրանց վարքագծի առանձնահատկությունները)⁴⁴:

⁴⁴ Ст'ю Русалов В. М. Предметный и коммуникативный аспекты темперамента человека. // Психологический журнал, 1989, N1., էջ 12:

ԹԵՄԱ 4.

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՕԲՅԵԿՏԻՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՐՏԱՑՈՒՄ

Հանցավոր վարքագծի մոտիվացիայի և հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս անցում կատարել հանցավոր վարքագծի արտաքին պատճառների բացահայտմանը: Վերջիններս գտնվում են անձին շրջապատող սոցիալական իրականության, սոցիալական հարաբերությունների մեջ: Հետևաբար, այստեղ խոսք կգնա մոտիվացիայի արտաքին պայմանների մասին:

Յուրաքանչյուր մարդկային արարք ունի իր պատճառները, որոնք գտնվում են ոչ միայն մարդու մեջ, այլ նաև նրան շրջապատող սոցիալական միջավայրում (թեև անհատական հանցագործության պատճառները մարդու մեջ են, բայց, այնուամենայնիվ, դրանց ձևավորման հիմքում ընկած են արտաքին միջավայրի գործոնները): Հարկ է իմանալ, որ հանցավոր վարքագծի կապը սոցիալական պայմանների հետ բազմանշանակ է և հավանական, իսկ այս կամ այն պատճառի ազդեցությունը հանցավոր վարքագծի վրա հնարավոր է բացահայտել միայն մեծաքանակ դիտարկումների միջոցով: Հանցավոր վարքագծի պատճառների բացահայտումը դժվարանում է նաև այն պատճառով, որ սոցիալական միջավայրի ազդեցությունները միջնորդավորվում են մարդու գիտակցությամբ, իսկ մարդկային գիտակցությունը ոչ թե պասիվորեն արտացոլում է օբյեկտիվ իրականությունը, այլ «ստեղծում» է այն:

Կրիմինոլոգիայում ընդունված է այն տեսակետը, որ կրիմինոգեն գործոնները ազդում են հանցավորի վրա ինֆորմացիոն ճանապարհով: Բայց, պետք է իմանալ, որ մոտիվացիան, որպես օբյեկտիվ պատճառների սուբյեկտիվ արտացոլում, չի կարելի սահմանափակել ինֆորմացիայի շրջանակներում: Արտաքին՝ օբյեկտիվ միջավայրի սուբյեկտիվ պատկերը մարդու մեջ ձևավորվում է ոչ միայն արտաքին ինֆորմացիայի շնորհիվ, այլ նաև մարդու հոգեկանի միջոցով, որն իր «ուղղումներն» է մտցնում, ուստի հաճախ հանգեցնում է իրականության խեղաթյուրված կամ ոչ լիովին ադեկվատ արտացոլման: Դրա համար էլ հանցավոր վարքագծի պատճառները

զուտ սոցիալական կամ զուտ կեսաբանական-հոգեբանական երևույթներով բացատրելու փորձերը մատնված են անհաջողության. ոչ սոցիալականը, ոչ էլ կենսաբանականը չեն կարող ճակատագրական դեր կատարել մարդկային վարքագծի պատճառական մեխանիզմում:

Այն դրույթը, որ մարդու գիտակցությունը օբյեկտիվ իրականության ուղղակի արտացոլումը չէ, անչափ կարևոր նշանակություն ունի: Հակառակ դեպքում կարելի է հանգել այն սխալ եզրակացության, թե նպատակաուղղված դաստիարակությամբ կարելի է ամեն ինչի հասնել: Փորձը ցույց է տալիս, որ դա այդպես չէ:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մարդուն դաստիարակում են ոչ միայն և ոչ այնքան իր ծնողների կամ դաստիարակների ցուցումները, խրատները, այլ իր ողջ կյանքը, կյանքի ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները, երևույթները:

Իսկ ինչպես են մոտիվացիայի մեջ արտացոլվում հանցագործության պատճառներն ու պայմանները:

Նախ՝ մոտիվացիայի յուրաքանչյուր տարր (պահանջումները, դիրքորոշումը, արժեքային կողմնորոշումները, նպատակը, նպատակին հասնելու միջոցներն ու եղանակները, կանխատեսումը, վճռի ընդունումը) ինքնին, ինչպես նաև ողջ մոտիվացիան, որպես համակարգ, կարելի է դիտել որպես հանցավորի կյանքի և գործունեության արտացոլման յուրահատուկ միավոր:

Մոտիվացիան համալիր, համակարգային, ամբողջական երևույթ է, մինչդեռ օբյեկտիվ իրականության մեջ մենք չենք կարող այնպիսի ամբողջական երևույթ գտնել, որը մոտիվացիայի կրկնությունն է: Միևնույն ժամանակ, մոտիվացիայի առանձին տարրերը օբյեկտիվ իրականությունում կարող են ունենալ իրենց կրկնօրինակները: Կրիմինոլոգները վաղուց հաստատել են այն հանգամանքը, որ հանցագործության պատճառներն ու պայմանները տարալուծված են օբյեկտիվ իրականության մեջ: Ժամանակի ընթացքում դրանք արտացոլվում են անձի գիտակցության կողմից և հետզհետե ընտրողաբար սինթեզվում, ընդհանրացվում ու ընդգրկվում են հիշողության մեջ: Որոշակի փուլում, երբ դրանց մասին ինֆորմացիան հասնում է կրիտիկական աստիճանի, արտաքին իրադրության ազդեցության ներքո այդ կցկտուր կրիմինոգեն կազմավորումները վեր են ածվում ապագա հանցագործության քիչ թե շատ ամբողջական

սուբյեկտիվ պատկերի⁴⁵:

Իսկ ինչպիսի մեխանիզմով է իրագործվում արտացոլումը: Հիմք ընդունելով փիլիսոփայության մեջ մշակված դրույթները կարելի է հավաստել, որ արտացոլումն ընթանում է հետևյալ կանոններով՝

1. ոչ թե անմիջապես, այլ ժամանակի ընթացքում, հետզհետե և դիսկրետ. արտացոլողը հետ է մնում արտացոլվողից թե տարածության, թե ժամանակի տեսանկյունից,

2. ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված ձևով. արտացոլվող օբյեկտի և արտացոլող սուբյեկտի միջև առկա են բազմաթիվ երևույթներ, այդ թվում, բարոյական, իրավական, փիլիսոփայական, կրոնական, գեղագիտական հասկացությունները և պատկերացումները, հասարակական կարծիքը, ռեֆերենտային խմբի կարծիքը և այլն,

3. ոչ թե ամբողջապես, այլ հետզհետե և մասնակի, որովհետև իրականացվում է ընտրողաբար, արտացոլողի անձնական դիրքորոշումներից ելնելով,

4. ոչ թե պասիվ, այլ ակտիվ և ինքնուրույն՝ արտացոլվող օբյեկտի վրա ունեցած հետադարձ ազդեցությամբ, որի շնորհիվ օբյեկտն ու սուբյեկտը համագործակցում են,

5. ոչ թե լիովին նույնական արտատպման ձևով, այլ ձևափոխված, խեղաթյուրված, որոշակի շեղումներով,

6. ոչ թե միանշանակ, այլ փոփոխական. սուբյեկտիվ արտացոլումը չի կարող փոփոխական չլինել, որովհետև արտացոլումն իրականացվում է անձի նորմատիվ, արժեքային դիրքորոշումներից ելնելով, սուբյեկտիվորեն, որով էլ պայմանավորված է արտացոլման ոչ լրիվությունը, մասնակիությունը⁴⁶,

7. ոչ թե մակերեսորեն, այլ ըստ էության: Դրա համար էլ արտացոլումը իր բովանդակությամբ շատ խորն է, իմացաբանական և ընդհանրացնող նշանակություն ունի: Այդ է պատճառը, որ արտացոլման ընթացքում անձի կողմից դուրս է մղվում այն ամենը, ինչը նրան ավելորդ և ոչ էական է թվում: Բայց այդ թվացյալությունը կարող է սխալ լինել:

⁴⁵ Ст' у Лунеев В. В. Уշվ. աշխ., էջ 160:

⁴⁶ Ст' у Ломов Б. Е. Методологические и теоретические проблемы психологии. М., 1984, էջ 108:

Արտացոլման այս մեխանիզմի բարդությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ արտացոլող սուբյեկտը, ունենալով իրականությունը խորությամբ և ըստ էության ճանաչելու հնարավորություն, ունի նաև սխալվելու, ինքն իրեն մոլորության մեջ զցելու բազում «հնարավորություններ»: Այդ մոլորություններից ու սխալներից շատերը, կրիմինոզեն երևույթների հետ ամբողջություն կազմելով, կարող են նպաստել նպատակին հասնելու միջոցների ու եղանակների, կանխատեսման և վճռի ընդունման մեջ սխալների ձևավորմանը:

Իսկ որոնք են սուբյեկտիվիզմի պատճառները: Հոգեբանների և կրիմինոլոգների մեծ մասը այդ պատճառները տեսնում է արտացոլող սուբյեկտի առանձնահատկությունների մեջ:

Հանցանք կատարող անձի կողմից իրականության արտացոլումը իրականացվում է իր պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեության ընթացքում: Հետևաբար յուրաքանչյուր արտացոլում, բեկվելով նրա գիտակցության միջով, անպայման մոտիվացիոն զտում է անցնում, իսկ մոտիվացիայի հիերարխիկ կառուցվածքն էլ իր իմաստային կնիքն է դնում արտացոլվող երևույթների վրա:

Բայց, պետք է նկատի ունենալ, որ մոտիվացիոն կառուցվածքը, արտացոլելով պահանջմունքների հիերարխիկ կառուցվածքը, սուբյեկտի դերերի, կապերի, հասարակական հարաբերությունների հիերարխիկության արտացոլումն է: Այլ կերպ ասած, արտացոլման սուբյեկտիվության պատճառները, վերջին հաշվով, սոցիալական միջավայրի նախորդ ազդեցությունների մեջ են:

Իսկ ինչպիսի սոցիալական երևույթներ են արտացոլվում հանցավոր վարքագծի մոտիվացիայում:

Հանցավոր վարքագծի մոտիվացիայում կարող են արտացոլվել ինչպես բազիսային այնպես էլ վերնաշենքային երևույթներն ու գործընթացները, անմիջական, մոտակա սոցիալական միջավայրը, հենց իր` հանցանք կատարողի անձնավորությունը, նրա անցյալը, ներկան, ապագան: Նշված երևույթներում առկա բացասական, հակասական գործընթացներն են, որ կարող են կրիմինոզեն մշանակություն ունենալ և արտացոլվել հանցավոր վարքագծի մոտիվացիայում (այստեղ հարկ չենք համարում անդրադառնալ այդ երևույթների քննարկմանը, որովհետև հանցավորության սոցիալ-

տնտեսական, իրավական, կազմակերպակառավարչական, գաղափարախոսական, մշակութային, սոցիալ-հոգեբանական պատճառներին և պայմաններին, ինչպես նաև եզակի հանցագործության պատճառներին և պայմաններին արդեն ծանոթ ենք կրիմինալոգիա դասընթացից):

ԹԵՄԱ 5. ԿՐԻՄԻՆԱԼ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ներկայումս կրիմինոլոգիայում ընդունված է կրիմինալ մոտիվացիան դասակարգել հետևյալ տեսակների՝ 1) շահադիտական մոտիվացիա, 2) բռնության (բռնի-ագրեսիվ, եսասիրական) մոտիվացիա, 3) անարխիստական-անհատապաշտական մոտիվացիա, 4) թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիա:

1. Շահադիտական մոտիվացիա. Այս մոտիվացիայով են կատարվում հանցագործությունների 65-ից 75%-ը: Վերջին տարիներին նկատվում է շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների անընդհատ աճ, ինչը հատուկ է ոչ միայն նոր զարգացող այլ նաև զարգացած շուկայական տնտեսություն ունեցող պետությունների մեծ մասին:

Չարկ է նշել, որ շահադիտական մոտիվացիան միատարր չէ: Կրիմինոլոգիայում առանձնացնում են շահադիտական մոտիվացիայի հետևյալ դրսևորումները՝ 1) նյութական արժեքների, փողի կուտակման ձգտում, ազահություն, 2) նյութական բարեկեցության, կոմֆորտի ապահովման ցանկություն, 3) ալկոհոլ, թմրանյութ օգտագործելու, ցոփ ու շվայտ կյանք վարելու ցանկություն, 4) ծառայողական նյութական կարիք՝ վերադասին կաշառելու, անհրաժեշտ գործարար կապեր ստեղծելու ցանկություն, 5) անձնական նյութական կարիք:

1.1. Շահադիտական մոտիվացիայի արտաքին պայմանները: Շահադիտական մոտիվացիայի ձևավորման և գոյության հիմնական արտաքին պատճառներն են՝ 1) սոցիալ-տնտեսական անհավասարությունը, 2) աղքատությունն ու կարիքը, 3) ապրանքների, ծառայությունների և փողի դեֆիցիտը: Բացի նշվածներից, շահադիտական մոտիվացիայի ձևավորման վրա ազդում են այնպիսի գործոններ ինչպիսիք են 1) անտնտեսվարությունը, 2) նյութական արժեքների բախշման, հաշվառման, պահպանության թերությունները, 3) շրջապատի անտարբերությունը և այլն: Այս գործոններն արդեն ուսումնասիրվել են կրիմինալոգիա դասընթացի շրջանակներում: Նշենք միայն, որ սոցիալ-տնտեսական անհավասարությունը շահա-

դիտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների հիմնական պատճառներից է: Սա բացահայտվել է բազմաթիվ հետազոտություններով: Աղքատությունը շատ ավելի ցավազին է ընկալվում մարդու կողմից, երբ նրա և մյուս մարդկանց նյութական բարեկեցության մակարդակների միջև տարբերությունը զգալի չափերի է հասնում: Մարդը միշտ իրեն համեմատում է մյուսների հետ և դա նրան ինֆորմացիա է տրամադրում նպատակաուղղված, այդ թվում՝ հանցավոր վարքագծի համար⁴⁷: Սակայն սոցիալ-տնտեսական անհավասարությունը մոտիվացնում է ոչ միայն աղքատության մեջ գտնվող մարդու, այլ նաև նյութական բարեկեցության տանելի մակարդակ ունեցողի վարքագիծը: Նյութական արժեքների, փողի կուտակման ձգտումը, ազահությունը, նյութական բարեկեցության, կոմֆորտի ապահովման ցանկությունը ոչ այլ ինչ են, եթե ոչ նյութական բարեկեցության ավելի բարձր մակարդակի հասնելու ձգտում, որը պայմանավորված է արդեն գոյություն ունեցող անհավասարությամբ:

1.2. Շահադիտական մոտիվացիայի ներքին պայմանները: Չարկ է նշել, որ շահադիտական մոտիվացիայով հանցանք կատարողների զանգվածը խիստ խայտաբղետ է:

Յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահմամբ հափշտակություններ կատարողները, կաշառակերները իրենց անձնային առանձնահատկություններով էականորեն տարբերվում են այլ հանցանքներ կատարողներից և գրեթե չեն տարբերվում օրինապահ քաղաքացիներից: Սրանց մեծ մասը աչքի է ընկնում բարձր կրթական մակարդակով, դրական են բնութագրվում, ավելի ադապտացված են սոցիալական միջավայրին, լավ են կողմնորոշվում սոցիալական իրականությունում:

Այլ է վիճակը ավազակություն, կողոպուտ, գողություն կատարած անձանց կապակցությամբ: Սրանք աչքի են ընկնում ցածր կրթական մակարդակով, դաժանությամբ, բացասական են բնու-

⁴⁷ Ст'у Наумова Н. Ф. Социологические и психологические аспекты целенаправленного поведения., М., 1988, էջ 18-19:

թագրվում և այլն⁴⁸:

Բայց գոյություն ունի մի հիմնական հատկություն, որը հատուկ է շահադիտական մոտիվացիայով հանցանք կատարող բոլոր անձանց՝ այս անձանց մոտիվացիոն կառուցվածքն աչքի է ընկնում միատարրությամբ, որը հանգում է նյութական արժեքների գերակա դիրքին: Փողը և այլ նյութական բարիքները այս անձանց համար հիմնական արժեքներն են: Բացի այդ, փողը, նյութական բարիքները անհրաժեշտ են այլ պահանջմունքները բավարարելու համար: Մոտիվացիայի որոշ շեղումներ (կուտակելու ձգտումը, ալկոհոլամոլությունը, ցոփ ու շվայտ կյանք վարելը) խեղաթյուրված բնույթ ունեն:

Շահադիտական մոտիվացիայով հանցանք կատարողների մոտիվացիոն ոլորտը այլ տեսակի հանցանքներ կատարողների համեմատ ընդհանուր առմամբ հիերարխիկության ավելի բարձր աստիճան ունի և կայուն է: Սակայն պետք է նշել, որ տարիքի, զբաղեցրած պաշտոնի, հանցագործության եղանակի, նյութական բարեկեցության մակարդակի հետ կապված, հիերարխիկության կայունությունը փոխվում է: Այն դեպքերում, երբ հանցագործությունը այլ պահանջմունքները բավարարելու համար է կատարվում (զվարճանալ, թմրամիջոց կամ ալկոհոլ հայթայթել և այլն), մոտիվացիոն ոլորտը կարող է հիերարխիկության բարձր աստիճան չունենալ և բազմաշերտ լինել: Նման անձանց մոտիվացիոն ոլորտում փողը և նյութական այլ բարիքները կարող են և գերակա դիրք չունենալ:

Կրիմինալոգիական գրականության մեջ նշվում է, որ շահադիտական հանցանքներ կատարողները աչքի են ընկնում նյութական պահանջմունքների՝ սոցիալական ստանդարտից շեղվող բարձր, գերաճած մակարդակով⁴⁹: Պետք է նշել, սակայն, որ պահանջմունքները հնարավոր չէ նորմավորել և շատ դժվար է գտնել այդ սոցիալական ստանդարտը: Ուստ կարելի է համաձայնել Վ. Վ. Լուսենկի հետ այն հարցում, որ գերաճած պահանջմունքների մասին խոսելիս

պետք է հաշվի առնել անձի հանրագուտ աշխատանքի, դրա փաստական արդյունքների և պահանջմունքների միջև համամասնությունը: Պահանջմունքների նորմալ մակարդակն այդ դեպքում կհամարվի այն, որն ապահովվում է կոնկրետ անձի հանրագուտ աշխատանքով⁵⁰:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ հաճախ հակասություն է առաջանում որոշ պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների, անձի պահանջմունքների և նրա եկամուտների միջև: Շատերը գտնում են, որ չի կարելի անբնական և ոչ բանական համարել այն պահանջմունքները, որոնց բավարարման անհրաժեշտ միջոցները տվյալ հասարակությունում սահմանափակ են: Սրա հետ կապված պարզապես անհրաժեշտ է բանական պահանջմունքները սահմանազատել բանական սպառումից: Բանական սպառումն այն է, որը համապատասխանում է անձի աշխատանքային ներդրմանը⁵¹:

Չետևաբար, շահադիտական մոտիվացիայով հանցանք կատարող անձանց հիմնական մոտիվացիոն շեղումը հանգում է նրան, որ նրանք չեն կարող և չեն ցանկանում իրենց նյութական պահանջմունքները համամասնության մեջ դնել իրենց աշխատանքային ներդրումների հետ, ինչը վկայում է այս անձանց սպառողական դիրքորոշման մասին: Գերաճած և խեղաթյուրված նյութական հավակնությունները, որոնք ակնհայտորեն հակասում են անձի հնարավորություններին, սպառողական և շահադիտական մոտիվացիայի ձևավորման հիմքն են:

1. 3. Շահադիտական մոտիվացիայի տարրերը: Շահադիտական հանցագործությունների դրոպապատճառների բովանդակությունը համապատասխանում է այս հանցանքները կատարողների մոտիվացիոն ոլորտում առկա շեղումներին, նյութական բարիքները որպես հիմնական սոցիալական արժեք համարելու նրանց դիրքորոշմանը: Շահադիտական հանցագործությունների նպատակները առարկայական, ռացիոնալ նպատակներ են: Կապված այն հանգամանքի հետ, որ շահադիտական պահանջմունքները կարող են բա-

⁴⁸ Ավելի մանրամասն տե՛ս Маркарян А.Р. Криминологическая характеристика корыстно-насильственной преступности. Дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук. Ер., 2003:

⁴⁹ Տե՛ս Левыкин И. Т. Теоретические и методологические проблемы социальной психологии. М., 1975, էջ 123:

⁵⁰ Лунеев В. В. Նշվ. աշխ., էջ 220:

⁵¹ Տե՛ս Блувштейн Ю. Д. Криминологические аспекты теории малых социальных групп // Изучение и предупреждение преступлений. Вильнюс, 1971, էջ 74:

վարարվել ամենաբազմազան առարկաների միջոցով, դրանց նպատակները նույնպես խիստ բազմազան են: Բացի այդ, կարելի է ասել, որ այս հանցագործությունների գերակշիռ մասին հատուկ են նաև հեռանկարային նպատակները (համենայն դեպս դրանք այդպիսին են թվում հանցանք կատարողին): Հանցագործությունների եղանակներն ու միջոցները էլ ավելի բազմազան են քան նպատակները (մոտ 200 եղանակ): Այս եղանակներից յուրաքանչյուրն իր հերթին կարող է իրագործվել հանցավոր վարքագծի տարբեր դրսևորումներով: Հանցագործության եղանակների և միջոցների ընտրության գործընթացին հատուկ են նույն օրինաչափությունները ինչ որ ընդհանրապես հանցավոր վարքագծին. այդ ընտրությունը պայմանավորված է անձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորություններով: Ընդհանուր օրինաչափությունը հետևյալն է. որքան քիչ են օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունները, այնքան պարզունակ են շահադիտական նպատակներին հասնելու եղանակներն ու միջոցները:

Կանխատեսման և վճռի ընդունման փուլերում թույլ տրվող հիմնական սխալը հանգում է պատժից խուսափելու հույսին, որը պայմանավորված է այս հանցագործությունների լատենտայնության բարձր մակարդակով, բացահայտման դժվարություններով:

2. Բռնության մոտիվացիա: Հանցավորության կառուցվածքում բռնության մոտիվացիայով կատարվող հանցանքների տեսակարար կշիռը տատանվում է 9-ից 16 %-ի շրջանակներում (այս ցուցանիշները տարբեր ժամանակներում և տարբեր պետություններում կարող են տարբերվել): Վերջին տարիներին նկատվում է այս հանցագործությունների տեսակարար կշռի նվազում ինչը պայմանավորված է շահադիտական և թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայով կատարվող հանցանքների աճով:

Գրականության մեջ այս հանցագործությունները առանձնացնելու հիմնական չափանիշ է համարվում բռնության կամ սպառնալիքի գործադրումը: Այս տեսանկյունից բռնության մոտիվացիայով կատարվող հանցագործություններին կարելի է դասել նաև քաղաքական, շահադիտական դրդապատճառներով կատարվող հանցանքները: Սակայն պետք է նշել, որ կրիմինալոգիական տեսանկյունից դա այդքան էլ ճիշտ չէ, որովհետև նման դեպքերում բռնությունը ոչ թե ինքնանպատակ է գործադրվում, այլ հանդիսանում է

նպատակներին հասնելու միջոց, եղանակ: Սակայն, չի բացառվում, որ օրինակ, ավազակությունների, բանդիտիզմի, ահաբեկչության որոշ դեպքերում քաղաքական կամ շահադիտական մոտիվացիան զուգակցվի բռնության, ինքնահաստատման մոտիվացիայի հետ: Պատահական չէ, որ գրականության մեջ ավազակությունները, բանդիտիզմը, բռնությամբ զուգորդված կողոպուտը, շորթումը անվանում են բռնի-շահադիտական մոտիվացիայով կատարվող հանցանքներ: Միևնույն ժամանակ այնքան էլ ճիշտ չէ ասել, թե բառիս բուն իմաստով բռնության մոտիվացիայի դեպքում բռնությունը գործադրվում է հանուն բռնության. նման դեպքերում սուբյեկտը բռնությունը գործադրում է իրեն բնորոշ հոգեբանական կոնֆլիկտերը լուծելու, ինքնահաստատվելու համար, անգիտակցականի կամ ենթագիտակցության մեջ առկա մղումները իրագործելու համար:

Բռնության մոտիվացիայում ընդգրկվում են խուլիգանական, սեռական մղումները, աստելությունը, վրեժը, դժգոհությունը, խանդը և այլն: Բոլոր այս դրդապատճառները ձևավորվում են մշանձմային՝ հիմնականում կոնֆլիկտային հարաբերությունների ընթացքում, բայց ոչ միայն հանցավոր-տուժող հարաբերություններում: Հանցագործությունների դրդապատճառների մեջ արտացոլվում են ինչպես տուժողի, այնպես էլ այն անձանց հետ նախկին հարաբերությունները, որոնք կարող են տուժողի նկատմամբ տեղակալման ազդեցիկ պատճառ դառնալ:

Խուլիգանական մղումները կոնկրետ դրսևորում են ստանում փաթերակության, ինքնահաստատվելու ձգտման, շրջապատի նկատմամբ բացահայտ արհամարհանք ցուցադրելու, հանդուժողությունը, ուժը, ուրիշների նկատմամբ գերազանցությունը ցույց տալու դրդապատճառների մեջ⁵²: Այս բոլոր դրդապատճառները վերջին հաշվով արտահայտվում են ինքնահաստատման պահանջումը բավարարելու, սեփական «ես»-ը գռհիկ, խեղաթյուրված ձևով հաստատելու ձգտման մեջ, որը պայմանավորված է անձի ներքին կոնֆլիկտներով, ինքնահաստատման պահանջումը սոցիալապես օգտակար ձևերով բավարարելու օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավոր

⁵² St' u Алимов С. Б. Субъективные причины хулиганства и их преломление в конкретном преступном поведении // Вопросы борьбы с преступностью. М., 1972, էջ 103:

րությունների սահմանափակվածությամբ: Դրա համար էլ խուլիզանական մղումները ոչ թե հասարակության նկատմամբ անհարգալից, արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկություն են, այլ այդ եղանակով ինքնահաստատվելու ձգտումը⁵³:

Այս կամ այն անձի գործունեությունը, վարքագծից դժգոհությունը մղում է կառավարման կարգի, զինվորական ծառայության սահմանված կարգի, մարդու դեմ ուղղված հանցանքների կատարման: Շատ դեպքերում սա ռացիոնալ դրդապատճառ է, բացառությամբ այն դեպքերի, երբ դժգոհությունը շոջապատի նկատմամբ ընդհանուր չարացածության հետևանք է: Այս դրդապատճառը, որը հիմնականում պայմանավորվում է տուժողի պրովոկացնող վարքագծով, ի տարբերություն խուլիզանական դրդապատճառի, ոչ թե ներքին, այլ արտաքին կոնֆլիկտի հետևանք է:

Վրեժի դրդապատճառը, ի տարբերություն դժգոհության, հաճախ ձևավորվում է քիչ թե շատ երկար ժամանակի ընթացքում՝ հանցավորի և տուժողի միջև տարբեր փոխհարաբերությունների հետևանքով: Կարելի է ասել, որ վրեժի դրդապատճառը դժգոհության հետագա փուլն է, աստիճանը: Ուստի, եթե դժգոհության պարագայում դրդապատճառի ծագումը անմիջապես հետևում է կոնկրետ իրադրությանը, ապա վրեժի դեպքում այն հաջորդում է արդեն ձևավորված դրդապատճառին: Ըստ էության իրադրությունն այստեղ դրդապատճառի արդիականացմանը և հանցանքի կատարմանը դրդող ուժի դեր է կատարում: Վրեժի զգացողությունը հոգեբանական տեսանկյունից շատ ավելի կայուն է, խոր և իմաստավորված, իսկ քրեաիրավական առումով՝ ավելի վտանգավոր:

Խանդը սովորաբար բնորոշվում է որպես ինչ որ անձի հավատարմության կամ սիրո վերաբերյալ տանջալից կասկած: Խանդն ըստ էության շատ նման է իրական կամ կարծեցյալ անհավատարմության համար սիրելի մարդուց վրեժ լուծելուն:

Սեռական մղումները որոշակիորեն տարբերվում են մյուս դրդապատճառներից: Սրանք անձի սեռական պահանջմունքները այլոց սեռական ազատության կամ անձեռնմխելիությանը հակադրելու դրսևորումներ են: Բռնության մոտիվացիային սրանք հարում են այնքանով, որ իրագործվում են բռնություն գործադրելով, դաժան

⁵³ Ст' u Ковалев М. И. Мотивы поведения и деятельность. М., 1988, էջ 50:

եղանակներով և արտացոլում են անձի խիստ եսապաշտական դիրքորոշումը: Սակայն պետք է նշել նաև, որ շատ դեպքերում սեռական հանցագործությունները կարող են ազդեսիայի, կուտակված չարացածությունը դուրս բերելու ակտ լինել: Այդ մասին են վկայում տարբեր հետազոտություններ, որոնք հավաստում են այն փաստը, որ շատ դեպքերում սեռական հանցանք կատարողը ձգտում է բավարարել ոչ թե իր սեռական պահանջմունքները, այլ ինքնահաստատվել, ձերբազատվել բացասական հույզերից, վերացնել այդպիսի հույզեր պատճառող օբյեկտը, նույնականացվել տղամարդու կերպարի հետ և այլն⁵⁴:

2.1. Բռնության մոտիվացիայի արտաքին պայմանները: Եսասիրությունն ու ազդեսիան, որպես բռնության մոտիվացիայի ելակետային տարրեր, պատմականորեն առաջացել են սոցիալական անարդարությունից: Բայց, եթե ազդեսիան ու բռնությունը քննարկվող մոտիվացիայի բացարձակ հատկանիշներն են, ապա եսասիրությունը՝ հարաբերական: Անձի կողմից ինքնահաստատման գռեհիկ, հանցավոր ձևերի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալապես ընդունելի, օգտակար ձևերի չիմացությամբ (դրանք կարող են նաև հայտնի լինել անձին) այլ նաև նրանով, որ սոցիալապես ընդունելի այդ ձևերը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտի պատճառներով ներքին համոզմունք, պահանջմունք չեն դարձել նրա համար:

Եսասիրությունը, որոշակի պայմաններում, ինքնահաստատման ձևերից մեկն է: Այն ենթադրում է անձնական պահանջմունքների բավարարումը հասարակության և ուրիշների հաշվին: Իրագործվելով բռնության գործադրմամբ՝ եսասիրությունը դառնում է անձնականը հասարակականին հակադրելու ամենավայրագ ձևը:

Անարդարությունը հատուկ դեր է կատարում բռնության մոտիվացիայի ձևավորման մեջ: Սոցիալական անարդարությունը, որը մեր երկրում տարիներ շարունակ դրսևորվել է մարդկանց նկատմամբ, դժգոհություն է ձևավորել հասարակության, կյանքի, այլ անձանց, իշխանությունների նկատմամբ՝ կոնկրետ իրադրություններում խնդիրը բռնությամբ լուծելու դրդապատճառ է դառնում:

⁵⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Антонян Ю. М. Психологическое отчуждение личности и преступное поведение. Ереван, 1987, Антонян Ю. М. Криминальная сексология. М., 1999, Фокс В. Введение в криминологию, М., 1980:

2.2. Բռնության մոտիվացիայի ներքին պայմանները: Բռնությանը հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտը աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով. խիստ սահմանափակվածություն, պրիմիտիվ պահանջմունքների գերակայություն, բռնությամբ ուրիշների վրա իշխելու հակում, խուլիզանական, որոշ դեպքերում սադիստական և սեռական մղումներ, մոտիվացիոն ոլորտի հիերարխիկության անկայունություն, ինչը դեպքերի մեծ մասում այս անձանց դարձնում է իրադրության «գերին» (պետք է նշել, սակայն, որ բռնությամբ հանցանք կատարողների մի զգալի մասին հատուկ է մոտիվացիոն ոլորտի կայուն հիերարխիկություն, որն արտահայտում է արդեն ձևավորված, սովորական դարձած և դժվարությամբ բարելավման ենթարկվող կարծրատիպային վարքագիծը): Բռնությամբ հանցանք կատարող անձանց կարելի է բնութագրել հետևյալ առանձնահատկություններով. 1) եսասիրական միտումների գերակայություն, զուգորդված հասարակական կարգի, այլ անձանց կյանքի, առողջության նկատմամբ արհամարհական վերաբերմունքի հետ, 2) հետաքրքրությունների պրիմիտիվություն, կուլտուրայի ցածր մակարդակ, սեփական ցանկությունների նկատմամբ ոչ քննադատական վերաբերմունք, 3) ինքնահաստատման և նպատակներին հասնելու համար կոպիտ ֆիզիկական ուժի գործադրման հակվածություն, 4) ագրեսիվ, աֆեկտիվ վարքագծի թաքնված կամ բացահայտ դիրքորոշում, 5) նախահանցավոր ագրեսիվ վարքագծի փորձ, 6) հոգևոր ձգտումների լրիվ կամ նշանակալից բացակայություն, 7) կենսական կարևորության այլ հետաքրքրությունների բացակայություն, 8) հոգեֆիզիոլոգիական որոշակի առանձնահատկություններ (մասնավորապես, անհավասարակշռվածություն, գրգռման գործընթացի գերակայություն արգելակման գործընթացի նկատմամբ, խուլերիկ խառնվածքի տիպ, հոգեկան որոշակի շեղումներ և այլն): Բռնությամբ հանցանք կատարողների կարևորագույն հատկանիշներից է նաև այն, որ վերջիններս միշտ շրջապատից սպասում են իրենց նկատմամբ ագրեսիվ, անարդարացի վերաբերմունք (սա վկայում է անբարենպաստ ընտանեկան սոցիալիզացիայի մասին), իրենց համարում են չհասկացված, չգնահատված ինչը նրանց մեջ բողոքի զգացում է առաջացնում և հանգեցնում է անհանգստության, անբավարարվածության, ագրեսիայի: Այս պայմաններում բռնությունը դառնում է պաշտպանվելու եղանակ, սեփական

ներքին կոնֆլիկտները շրջապատի վրա պրոեկտելու միջոց⁵⁵:

2.3. Բռնության մոտիվացիայի տարրերը: Բռնության մոտիվացիայի ելակետային պահանջմունքները, հիմնականում ինքնահաստատման պահանջմունքը և դրա հետ կապված բացասական հույզերը, իրենց կնիքն են դնում մոտիվացիայի հետզա փուլերի վրա: Մասնավորապես, պահանջմունքը տվյալ պահին բավարարելու անկարողությունը հանգեցնում է բացասական հույզի (զայրույթ, կատաղություն), ինչը մեծ կրիմինոգեն նշանակություն ունի, որովհետև կտրուկ մեծացնում է անձի ակտիվությունը: Հուզական այս ֆոնը որով ուղեկցվում են նշված հանցագործությունները, իր կնիքն է թողնում հանցագործության նպատակների վրա. դրանք հիմնականում ոչ ռացիոնալ, պրոցեսուալ նպատակներ են: Բացառություն են կազմում «կանխամտածված մոտիվացիայի» դեպքերը: Խուլիզանությունների նպատակները հիմնականում պրոցեսուալ նպատակներ են, երբ բռնությունը գործադրվում է հանուն բռնության: Նման դեպքերում հենց իրենք հանցանք կատարողները դժվարանում են բացատրել բռնություն գործադրելու պատճառը: Այսպիսի նպատակադրումը հատուկ է նաև սուր կոնֆլիկտային իրադրություններում կամ հարբածության վիճակում բռնություն գործադրած անձանց: Այլ անձի արարքներից դժգոհության դրդապատճառով բռնություն գործադրած անձանց հատուկ է «արդարության վերականգնման» նպատակը: Այս նպատակադրումը հատուկ է նաև վրեժի կամ խանդի դրդապատճառով հանցանք կատարողներին:

Քննարկվող հանցագործությունների միջոցներն ու եղանակները հիմնականում աչքի են ընկնում պրիմիտիվությամբ, հանգում են կոպիտ ֆիզիկական ուժի գործադրմանը: Քանի որ հանցագործության իրադրությունը էքստրեմալ է, անձն էլ հաճախ հարբած, ապա միջոցների ու եղանակների ընտրության, կանխատեսման, վճռի ընդունման փուլերը լիովին չեն գիտակցվում, իսկ իրադրությունն էլ ադեկվատ չի գնահատվում:

3. Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիա: Անարխիստական անհատապաշտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների թվին կարելի է դասել այն դիտավորյալ

⁵⁵ Բռնությամբ հանցանք կատարողների առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Аракелян С. В. Преступное насилие. Ереван, 2013, էջ 55-72:

հանցագործությունները, որոնցում իրական տուժող չկա և բացակայում են ուղղակի վտանգավոր հետևանքները⁵⁶: Դեռ ավելին, հանցավորը հաճախ ձգտում է խուսափել դրանցից: Այսպիսի հանցագործությունների մոտիվացիայի միջուկը հանցավորի կողմից այն քրեաիրավական նորմի բացառումն է, որի պահանջները ինքը համարում է չարդարացված, անհարկի, ավելորդ: Որոշ դեպքերում անձի նման վերաբերմունքը նույնիսկ արդարացված է: Եթե թվարկենք այս մոտիվացիայով կատարվող որոշ հանցագործություններ, ապա պարզ կդառնա, որ սրանց մեծ մասը կապված է մարդկանց նկատմամբ կոշտ սոցիալական հսկողություն իրականացնելու հետ, ինչը ոչ միշտ է արդարացված (օրինակ՝ իսկական զինվորական ծառայությունից խուսափելու, ինքնազուլու բացակայության և մի շարք այլ արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանելն արդարացված է, բայց, ոչնչով արդարացված չի կարող համարվել քրեական պատասխանատվություն նախատեսելը անձնագրային ռեժիմի կանոնները խախտելու, պորտաբույծ կյանք վարելու և այլ արարքների համար, որն առկա էր ԽՍՀՄ տարիներին):

Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայով կատարվող հանցագործությունների մոտիվացիայի բովանդակության վրա էական ազդեցություն է ունենում այն հանգամանքը, որ նշված հանցագործություններում բացակայում են իրական տուժողն ու ուղղակի վտանգավոր հետևանքները: Նախ՝ այս հանցագործությունների ելակետային դրդապատճառներն ու պահանջմունքները խիստ բազմազան են: Բացի այդ, մոտիվացիան հիմնվում է անձի այն հանդուժանքի վրա, որ իր արարքը ոչ մի վնաս չի հասցում, իսկ վերացական հասարակական հարաբերություններին հասցված վնասը անձը, բնականաբար, չի տեսնում: Սոցիալական արժեքների նկատմամբ անձի վերաբերմունքի էությունը իր արդիականացված պահանջմունքներին հակասող պարտականությունների ու վարքագծի նորմերի արհամարումն է: Պարտականությունները և սահմանված նորմերը անձին թվում են որպես արտաքին, չարդարացված սահմանափակումներ, որոնք խանգարում են արդիականացված պահանջ-

մունքների բավարարմանը, այն էլ այն դեպքում, երբ դա ոչ մեկին չի վնասում: Եսասիրական այս դիրքորոշումը զուգակցվում է անարխիզմի հետ (հեղինակությունների, կարգուկանոնի, կարգապահության արհամարհում)⁵⁷:

Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայով հանցագործությունների դրդապատճառները տարբերվում են շահադիտական և բռնության մոտիվացիայի դրդապատճառներից նաև իրենց բովանդակությամբ, սոցիալ-հոգեբանական կառուցվածքով: Եթե շահադիտական մոտիվացիայի դրդապատճառները կապված են նյութական պահանջմունքների հետ, իսկ բռնության մոտիվացիայի դրդապատճառները՝ հույզերի, ապա քննարկվող մոտիվացիայով հանցագործությունները մոտիվացվում են գործի շահերով, հարազատների հետ շփվելու, զվարճանալու ցանկությամբ, կենցաղային կարիքներով և այլն:

3.1. Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայի արտաքին պայմանները: Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայի ձևավորման վրա ազդեցություն են ունենում հետևյալ երևույթները՝

1) քրեաիրավական արգելքների սոցիալական ուղղվածությունը, դրանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը համամարդկային արժեքներին և մարդկանց նորմալ պահանջմունքներին, դրանց հասարակական անհրաժեշտության աստիճանը և գործնականում կատարելու հնարավորության աստիճանը: Շատ դեպքերում քրեաիրավական արգելքը անձին կանգնեցնում է բարոյական կոնֆլիկտի առջև, երբ արգելքին հետևելը հակասում է նրա բարոյական հայացքներին, իսկ արգելքը խախտելը քրեական պատասխանատվության է հանգեցնում (օրինակ՝ հանցագործության մասին իմանալ չհայտնելը, նախապես չխոստացված պարտակումը):

2) ընդհանուր և իրավական մշակույթի ցածր մակարդակը, որը իրավունքի, օրենքի, իրավակարգի, կարգապահության նկատմամբ միհիլիստական, արհամարհական վերաբերմունքի պատճառ է: Սա է պատճառը, որ հաճախ այս անձինք չեն գիտակցում իրենց պարտականությունները կատարելու անհրաժեշտությունը և պարտադիր

⁵⁶ Ст' у Кудрявцев В. Н., Стручков Н. А. Борьба с умышленными нарушениями должностных, профессиональных обязанностей // Сов. юстиция, 1972 N 1, էջ 8 -10:

⁵⁷ Ст' у Лунеев В. В. Նշվ. աշխ. էջ 255-256:

չեն համարում դա,

3) պաշտոնատար անձանց խոսքի և գործի միջև եղած հակասությունը, այն իրադրությունը, երբ իրավական պահանջները չեն ամրապնդվում իրականում գոյություն ունեցող իրերի դրությամբ: Վիճակն ավելի է բարդանում այն դեպքերում, երբ անձի իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ընդ որում, երբ նա ակամատես է լինում համանման իրադրություններում այլ անձանց նկատմամբ դրսևորած բոլորովին այլ վերաբերմունքի (օրինակ՝ զորանասը ինքնագլուխ լքած զինծառայողին պատժում են, մինչդեռ դրանից առաջ նույն արարքը կատարած մեկ այլ զինծառայողի նկատմամբ տարբեր պատճառներով որևէ հարկադրանք չի իրագործվում): Նման դեպքերում անձը համոզված է լինում, որ իր կողմից հանցանքի կատարումը արդարության վերականգնում է,

4) պաշտոնատար անձանց կողմից անձանց իրավունքների ոտնահարումը,

5) այս կամ այն քաղաքացիների նկատմամբ իրավաչափ հսկողության բացակայությունը, ամենաթողությունը, անպատժելիությունը:

3.2. Անարխիստական անհատապաշտական մոտիվացիայի ներքին պայմանները:

Կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ քննարկվող մոտիվացիան հատուկ է որոշակի անձանց: Այս մոտիվացիայով հանցանք կատարող անձանց մեծ մասը բացասական է բնութագրվում. մինչև հանցանքի կատարումը սրանք աչքի են ընկնում ապաստոցիալական վարքագծով: Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայով հանցանք կատարող անձանց հատուկ է արհամարհական, բացասական վերաբերմունքը սահմանված կարգի, կարգապահության, քաղաքացիական պարտականությունների նկատմամբ: Անձի այս ուղղվածությունն արտահայտվում է նրանում, որ այս անձինք չեն ցանկանում հաշվի նստել բոլորի համար սահմանված կանոնների հետ: Եվ եթե շահադիտական կամ բռնի-ազդեհիվ մոտիվացիան ուղղված են առարկայան աշխարհին, ապա անարխիստական-անհատապաշտական մոտիվացիան բազմադեմ է⁵⁸: Անձի շահերն ու ազատությունները սահմանափակող,

⁵⁸ Ст' у Лунеев В. В. Նշվ. աշխ. էջ 266:

դրանց իրագործմանը խոչընդոտող յուրաքանչյուր արգելք կամ նորմ կարող են այս հանցագործությունների օբյեկտ դառնալ: Դրա համար էլ շրջապատող աշխարհի նկատմամբ անարխիստական-անհատապաշտական վերաբերմունքը դրսևորվում է հանցավոր վարքագծին նախորդող վաղ ժամանակաշրջանում և արտահայտվում է անկարգապահության ու այլ շեղվող արարքների ձևով:

3.3. Անարխիստական-անհատապաշտական մոտիվացիայի տարրերի առանձնահատկությունները: Քննարկվող մոտիվացիայի հիմքում ընկած են տարբեր պահանջմունքներ. հաճույք ստանալու, զվարճանալու, ոգելից խմիչքների, որոշակի ապրելակերպի, կենցաղային և այլն: Հանցագործությունների նպատակները նույնպես բազմազան են. շփվել հարազատների հետ, նեղություն չտալ իրեն, զվարճանալ և այլն: Ըստ էության սրանք այնպիսի նպատակներ են, որոնց կարելի է հասնել նաև իրավահպատակ վարքագծի միջոցով: Ուստի այս հանցագործությունների հակասոցիալական բնույթը բացահայտվում է պահանջմունքների բավարարման և նպատակներից հասնելու համար անձի կողմից ընտրված եղանակների ու միջոցների մեջ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին՝ ինքնական դադարեցնել ընդհանուր կամ հատուկ պարտականությունների կատարումը: Եղանակների ու միջոցների կոնկրետ դրսևորումները բազմազան են և կախված են անձի առանձնահատկություններից, նրա գիտելիքներից, ունակություններից, օբյեկտիվ հնարավորություններից: Կանխատեսման փուլն ունի հետևյալ յուրահատկությունը. նման հանցանքներ կատարող բոլոր անձիք համոզված են լինում, որ կարողանալու են խուսափել քրեական պատասխանատվությունից: Այդ համոզմունքն ունի իր օբյեկտիվ պատճառները. նշված անձիք բազմիցս ականատես են լինում պարտական, անվերահսկելիության, ամենաթողության, անպատժելիության դեպքերի: Բացի այդ, հաճախ հանցանքը կատարվում է ի պատասխան վերադասի կամ պետի ապօրինի արարքների, ինչն էլ հույս է ներշնչում, թե պատասխանատվության հարցը լուծելիս այդ հանգամանքը կարող է հաշվի առնվել և պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ: Պահանջմունքի արդիականացվածությունը, նպատակների մեծ մասի կենցաղային բնույթը, սեփական պարտակա-

նությունների նկատմամբ անարխիստական վերաբերմունքը այն երևույթներն են, որոնք պայմանավորում են սխալ վճռի ընդունումը:

4. Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիա: Այս մոտիվացիան հատուկ է անզգուշությամբ կատարվող հանցագործությունների: Անզգուշությամբ կատարվող հանցանքների դրդապատճառները բազմազան են: Դրանց բովանդակությունը առավել բազմազան է քան մոտիվացիայի մյուս տեսակների դեպքում: Այսպիսի բազմազանության պայմաններում, նշված դրդապատճառների միավորումը մեկ կրիմինոլոգիական խմբում պայմանավորված է մոտիվացիայի մյուս տարրերի ընդհանրությամբ, որոնցում հստակ արտացոլվում է սուբյեկտի վերաբերմունքը անվտանգության գրված և չգրված կանոնների, շրջապատող միջավայրի և իր արարքների հնարավոր հետևանքների նկատմամբ: Ինքնավստահությամբ հանցանք կատարելու դեպքերում այդ վերաբերմունքը կարելի է բնութագրել որպես թեթևամիտ. սուբյեկտն իր նպատակներին հասնելու համար ընտրում է ռիսկի հետ կապված կամ ուղղակիորեն հակաօրինական միջոցներ ու եղանակներ: Ընդ որում, նախատեսելով հետևանքների առաջացման հնարավորությունը, անձը կանխատեսողական սխալ է թույլ տալիս: Մոտիվացիայի ամբողջ գործընթացի վրա իր կնիքն է թողնում սուբյեկտի կողմից իրականության մակերեսային արտացոլումը, ապագա իրադարձությունների խեղաթյուրված կանխատեսումը: Անփութության դեպքում իրականության այդպիսի արտացոլումը ավելի է գերակայում, իսկ դրա հետ կապված ոչ լրիվ և խեղաթյուրված ինֆորմացիան ընկալվում է որպես արարքը կատարելու համար բավարար: Նշված հանգամանքների ուժով անձը ընտրում է նպատակին հասնելու եղանակներն ու միջոցները, կանխատեսում է իր արարքն ու դրա հետևանքները՝ առանց իրականության զարգացման բոլոր օրինաչափություններն ու կապերը բավարար չափով հաշվի առնելու, չնայած, օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն ունենում է այդ հնարավորությունը: Սրանում էլ հենց դրսևորվում է անձի անպատասխանատու վերաբերմունքը (գրականության մեջ նշվում է, որ գոյություն ունի ընտրողական անպատասխանատվություն, երբ անձը պատասխանատու վերաբերմունք է դրսևորում որոշ կենսական իրադրություններում և անպատասխանատու՝ մյուսների դեպքում: Սա վկայում է այն մասին, որ տվյալ անձի համար հասա-

րակական որոշ արժեքներ ընդունելի են, իսկ մյուսները՝ ոչ)⁵⁹: Ինքնավստահության և անփութության այս սահմանազատումը խիստ պայմանական է, որովհետև թեթևամտությունը կարող է բնորոշ լինել նաև անփութությանը, իսկ անպատասխանատվությունը՝ ինքնավստահությանը:

Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայով կատարվող հանցանքների դրդապատճառները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1) տրանսպորտի երթևեկության անվտանգության և տրանսպորտային միջոցների ու այլ մեխանիզմների շահագործման կանոնների հետ կապված դրդապատճառներ: Այս դրդապատճառները բազմազան են: Հիմնականում դրանք կապված են բարդ ճանապարհատրանսպորտային իրադրության ոչ ճիշտ գնահատման հետ: Բացի դրանից, գոյություն ունեն, այսպես կոչված, շեղման դրդապատճառներ, երբ արտաքին կամ ներքին ազդակները շեղում են անձի ուշադրությունը (գրույց, քնկոտություն, ինչ որ բանի մասին մտածումը, ինչ որ իրադարձություն): Նման դեպքերում անձի մեջ բացակայում է տրանսպորտային միջոցը կամ այլ մեխանիզմը կառավարելու մոտիվացիան, որովհետև մյուս դրդապատճառներն առավել արդիական են դառնում: Որոշ դրդապատճառներ կապված են ծառայողական գործութեության հետ (առաջադրանքը ժամանակին կամ ժամանակից շուտ կատարելու ցանկություն և այլն),

2) շինարարական կամ այլ աշխատանքների կանոնների խախտման հետ կապված դրդապատճառներ: Սրանք հիմնականում «արտադրական» բնույթ են կրում. օբյեկտը ժամանակին կամ ժամկետից շուտ շահագործման հանձնելու ցանկություն, աշխատանքը ավելի թեթև դարձնելու ցանկություն, ծախսերից խուսափելու ցանկություն և այլն,

3) զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետ կապված դրդապատճառներ: Սրանք դրսևորվում են հանդգնություն ու քաջություն ցուցադրելու, վարպետությունը ցուցադրելու, կատակելու, զվարճանալու ցանկություններով և այլն,

4) անվտանգության այլ կանոնների խախտման դրդապատճառները խիստ բազմազան են, որոնց թվարկումն անհիմաստ է:

⁵⁹ Ст' у Мыздыбаев К. Психология ответственности. Л., 1983, էջ 26:

4.1. Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայի արտաքին պայմանները: Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայի արտաքին պայմաններ են հասարակական հարաբերություններում և մարդկանց գիտակցության մեջ առկա բացասական երևույթները, գիտատեխնիկական առաջընթացը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ երևույթներ: Եթե քննարկենք առավել տարածված անզգուշությամբ կատարվող հանցանքների՝ տրանսպորտային հանցագործությունների մոտիվացիայի անմիջական պատճառները, ապա դրանք պետք է փնտրենք մարդ-մեքենա-ճանապարհ երեք տարրերի մեջ (մարդ-գործիք-իրադրություն տարրերի մեջ են նաև այլ անզգուշությամբ կատարվող հանցանքների մոտիվացիայի անմիջական պատճառները): Ընդ որում, հարկ է նշել, որ գործիքը և իրադրությունը համարվում են նպաստող պայմաններ: Բայց, անհրաժեշտ է իմանալ, որ անզգուշությամբ կատարվող հանցանքներում սրանց դերը շատ ավելի էական է, քան դիտավորությամբ կատարվող հանցանքների մոտիվացիայում: Սրա մասին է վկայում օրինակ Ճապոնական «հրաշքը»: Ճապոնիայում 1970-1980 թթ. ավտոմեքենաների քանակը մոտ երկու անգամ ավելացավ իսկ տրանսպորտային պատահարները տուժածների թիվը երկու անգամ պակասեց: Սա անվտանգության նոր տեխնիկական միջոցների ներդրման և ճանապարհների բարեկարգման հետևանքն էր⁶⁰: Այնուամենայնիվ, թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայով հանցագործություններում նույնպես, հիմնական անմիջական պատճառը անձի առանձնահատկություններն են: Այս անձանց կրիմինոգեն առանձնահատկությունները որոշվում են նրանց ընդհանուր և տեխնիկական ու մասնագիտական մշակույթի մակարդակով, հատուկ գիտելիքների ու ընդունակությունների մակարդակով, հոգեֆիզիոլոգիական և խառնվածքային հատկություններով: Անձնային որոշակի հատկությունների ընդհանրությունն էլ անձին դարձնում է կոնկրետ իրադրության պահանջների նկատմամբ անպատրաստ:

4.2. Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայի ներքին պայմանները: Այս մոտիվացիայով հանցանք կատարող անձիք ավելի դրական են բնութագրվում քան մոտիվացիայի մյուս տեսակները:

⁶⁰ Ст'ю Жулев В. И. Предупреждение дорожно-транспортных происшествий. М., 1989, էջ 14-15:

րով հանցանքներ կատարողները: Բացասական բնութագիրը, նախկին դատվածությունը, վարչական պատասխանատվության փաստերը, անբարենպաստ ընտանիքներում սոցիալիզացիայի փաստերը այստեղ 2-4 անգամ պակաս են քան մյուս հանցագործությունների դեպքերում: Բայց չի կարելի ասել, թե այս անձիք չեն տարբերվում օրինապահ քաղաքացիներից: Առանձնահատկությունները, որոնցով աչքի են ընկնում նշված անձիք հանգում են հետևյալին: Սրանց հատուկ է խիստ ինքնավստահությունը, թեթևամտությունը, անշրջահայացությունը, իրադրությունում ճիշտ կողմնորոշվելու անկարողությունը:

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող մոտիվացիայում էական դեր է կատարում սուբյեկտի թույլ տված կանխատեսողական սխալը: Այս սխալը իրականության վերաճելու գործում կարևոր նախապայման են դառնում հետևյալ գործոնները՝ 1) անվտանգության կանոններն արհամարելը, 2) օբյեկտիվ իրականության մակերեսային արտացոլումը, 3) իրականությանը ոչ ադեկվատ եղանակների կամ միջոցների կիրառում, 4) օրգանիզմի հոգնածությունը, 5) հարբածությունը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ նշված անձանց մոտիվացիոն ոլորտի հիմնական գիծը ոչ թե հակասոցիալական դիրքորոշումն է, ինչը արձանագրվում է մյուս դեպքերում, այլ անհրաժեշտ դրական դիրքորոշման բացակայությունը: Փաստորեն, կրիմինոգեն դեր է կատարում ոչ թե անձի արդիականացած պահանջմունքը, այլ այն հանգամանքը, որ դրական, տվյալ պահին անհրաժեշտ դրդապատճառները արտամղվում են, ճնշվում են արդիականացված պահանջմունքի կողմից:

Քննարկվող մոտիվացիայի մեջ էական դեր են կատարում նաև հոգեֆիզիոլոգիական հատկությունները. ընկալման ճշտությունն ու արագությունը, մտածողության օպերատիվությունը, ռեակցիայի արագությունը, ուշադրության ծավալը, կայունությունը և այլն:

4.3. Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիայի տարրերի առանձնահատկությունները: Պահանջմունքները, որոնք արարքի կատարման մղիչի դեր են կատարում խիստ բազմազան են: Բոլոր այդ պահանջմունքները, կապված լինելով անձի գործունեության առարկայի հետ, փաստորեն արգելակում են այն հարբերությունների նորմալ զարգացումը, որոնց ոլորտում իրականացվում է անձի գոր-

ծունեությունը: Նպատակադրումը նույնպես իրականացվում է կոնկրետ առարկայական գործունեության ոլորտում: Ընդ որում, նպատակների գերակշիռ մասին հնարավոր է հասնել օրինական եղանակներով: Մեծ մասամբ ըստ էության օգտակար նպատակներ լինելով, դրանք իրագործվում են անվտանգության կանոնների խախտման միջոցով, ինչի հետ կապված էլ հակասոցիալական բնույթ են ձեռք բերում: Նպատակներին հասնելու եղանակներն ու միջոցները համակարգման չեն ենթարկվում, բայց դրանց միավորում է մեկ հանգամանք. դրանք միշտ էլ հակահրավակական են: Կանխատեսման բովանդակությունը անզուլույթամբ կատարվող հանցանքների հիմնական առանձնահատկությունն է: Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիան աչքի է ընկնում հենց կանխատեսման հարյուր տոկոսանոց խեղաթյուրմամբ: Թեթևամիտ-անպատասխանատու մոտիվացիան հիմնականում իրադրության բնույթ ունի: Հաճախ այն ընթանում է էքստրեմալ պայմաններում, ժամանակի և ինֆորմացիայի դեֆիցիտի պայմաններում, ինչը իր կնիքն է թողնում կանխատեսման վրա: Այստեղ մեծ դեր է կատարում ապերցեպցիայի երևույթը. իրադրության ընկալման կախվածությունը անձի նախկին փորձից: Վճռի ընդունման փուլը քննարկվող հանցագործություններում հաճախ չի առանձնանում կոնկրետ ժամանակային փուլով. երբեմն այն ընթանում է կանխատեսման փուլի հետ միաժամանակ և անմիջապես իրականացվում որոշակի մարմնաշարժումների, մեխանիզմների ու սարքավորումների կառավարման գործընթացների միջոցով: Դրա համար էլ վճռի ընդունումը հաճախ կատարվում է առանց այդ գործընթացի մեջ գիտակցության լրիվ ընդգրկման: Այստեղ իր բացասական դերն է կատարում նաև ապերցեպցիայի արդեն նշված երևույթը: Բացասական փորձը, դրա հիման վրա ձևավորված ստերեոտիպային վարքագիծը քննարկվող մոտիվացիայի էական առանձնահատկություններն են (ասվածի ապացույց է այն հանգամանքը, որ տրանսպորտային հանցագործությունների մեծ մասը, որպես կանոն, բաժին է ընկնում փորձառու վարորդներին, մինչդեռ անփորձները զգուշություն են դրսևորում և ավելի հաճախ են խուսափում տհաճ իրադրություններից):

ԹԵՄԱ 6. ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

1. Անձի ապագա վարքագծի կանխատեսումը անչափ կարևոր է հանցագործությունների վաղ կանխման համար:

Հանցավոր վարքագծի մոտիվացիայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հանցավոր վարքագծին հատուկ առանձնահատկությունները բաշխված են դրա տարբեր տարրերում և մակարդակներում: Այդ առանձնահատկություններն իրենցից ներկայացնում են կրիմինալ շեղումներ, որոնցով հանցավոր վարքագիծը տարբերվում է սոցիալապես օգտակար վարքագծի ձևերից: Տիպիկ շեղումներն իմանալը և դրանք հանցավոր վարքագծի մոտիվացիայի, անձի կենսագործունեության ապագա պայմանների հետ համադրելը թույլ է տալիս որոշակի հավանականությամբ կանխատեսելու նրա վարքագիծը (կրիմինոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ կանխատեսումը իրականանում է դեպքերի մոտ 70%-ում)⁶¹:

Ընդ որում, կանխատեսման արդյունավետությունը կախված է հետևյալ հանգամանքներից՝

- 1) անձի անցյալ և ներկա վարքագծի դիտարկման խորությունից,
- 2) անցյալում և ներկայում անձի դրսևորած վարքագծի սոցիալական ուղղվածությունից,
- 3) անձի անցյալ և ներկա վարքագիծը պայմանավորող կրիմինոգեն և հակակրիմինոգեն հանգամանքների ամբողջությունից,
- 4) արդեն հայտնի կրիմինոգեն և հակակրիմինոգեն այն երևույթների զարգացման օրինաչափությունների իմացությունից, որոնք գործելու են կանխատեսվող ապագայում:

Պետք է իմանալ, որ կանխատեսումն այնուամենայնիվ հավանական բնույթ է կրում, ուստի անձի կողմից ապագայում հանցանք կատարելու հնարավորության վերաբերյալ ենթադրություն անելու համար բավարար հիմքեր ունենալու դեպքում կանխատեսումը մնում է ենթադրության դաշտում, որը կարող է և չարդարանալ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ անհատի հանցավոր վարքագծի

⁶¹ St u Криминология и уголовная политика. М., 1985, էջ 138:

հավանական կանխատեսումը ավելի օպտիմալ է այն դեպքում, երբ կիրառվում է դեդուկտիվ մեթոդը, այսինքն՝ անհատի հանցավոր վարքագծի հավանական կանխատեսումն իրականացվում է հանցավոր վարքագծի այս կամ այն տեսակն արդեն կատարած անձանց կրիմինալոգիական առումով նշանակալից առանձնահատկությունների վիճակագրական տվյալների ուսումնասիրության հիման վրա⁶²: Այդ ընդհանրացված վիճակագրական տվյալների իմացությունը թույլ է տալիս հանցագործության այս կամ այն տեսակը կատարած անձանց առանձնահատկությունները համեմատել կոնկրետ անհատի առանձնահատկությունների հետ, ինչը ավելի արդյունավետ է դարձնում կանխատեսումը: Բայց նույնիսկ այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ անհատն ունի իր յուրահատկությունները, ուստի նրա հնարավոր հանցավոր վարքագծի վերաբերյալ կանխատեսումը հավանական բնույթ է կրում:

Հանցավոր վարքագծի կանխատեսումն իրականացնելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել մոտիվացիայի երեք ենթահամակարգերը՝ 1) մոտիվացիայի արտաքին պայմաններ, 2) մոտիվացիայի ներքին պայմաններ, 3) տվյալ անձի համար տիպական մոտիվացիա:

2. Մոտիվացիայի արտաքին պայմանները, որոնք իրենց մեջ ընդգրկում են անձի կյանքի սոցիալական, օբյեկտիվ պայմանների ամբողջությունը, նրա դաստիարակության, ուսուցման, աշխատանքի, ծառայության, կենցաղի և հանգստի պայմանները, որոշիչ դեր են կատարում ոչ միայն հանցագործության պատճառական մեխանիզմում այլև հանցավոր վարքագծի կանխատեսման գործում: Անցյալի սոցիալական միջավայրում է ընթանում անձի, նրա մոտիվացիոն ոլորտի ձևավորումը: Ներկա սոցիալական միջավայրը համագործակցելով արդեն ձևավորված անձի հետ որոշում է նրա գործունեության ներկայիս դրդապատճառները, որոնք շարունակում են անձի մոտիվացիոն ոլորտի ձևավորման գործընթացը: Ապագայի սոցիալական միջավայրը, համագործակցելով անձի հետ, պայմանավորում է նրա ապագա դրդապատճառները և փատորեն ապագա վարքագիծը: Հետևաբար անձի անցյալ, ներկա և ապագա միջավայրի ուսումնասիրությունը հանցավոր վարքագծի կանխատեսման ա-

ռաջին և ամենակարևոր պայմանն է: Բայց, անհրաժեշտ է իմանալ, որ այսպիսի ուսումնասիրությունը կապված է որոշակի բարդությունների հետ: Նախ՝ անձի սոցիալական միջավայրը ժամանակային առումով հստակ սահմաններ չունի (երբվանի՞ց, ո՞ր պահից կարող էին ի հայտ գալ կրիմինոգեն հանգամանքները, անցյալի որ՞ պահից պետք է սկսել ուսումնասիրությունը): Երկրորդ՝ յուրաքանչյուր անձի սոցիալական միջավայրը նշանակալից չափով հարաբերականորեն դրական է. կրիմինոգեն հանգամանքները ժամանակային և տարածքային տեսանկյունից տարալուծված են դրական միջավայրում և ոչ միշտ է, որ գերակշռում են: Երրորդ՝ քանի որ անձը ընտրողաբար է արտացոլում և ինտերիորիզացիայի ենթարկում (արտաքինի փոխակերպումը ներքինի, ներքին համոզման) արտաքին միջավայրի ազդեցությունները, ապա շատ կրիմինոգեն հանգամանքներ կարող են և նրա վրա բացասական ազդեցություն չունենալ: Չորրորդ՝ իրականության քննադատական վերաթեքվորումը հատուկ է յուրաքանչյուր անձի, ինչի պատճառով անցյալի և ներկայի կրիմինոգեն հանգամանքների մոտիվացնող դերը կարող է փոխվել, չեզոքացվել: Հինգերորդ՝ անցյալի շատ կրիմինոգեն հանգամանքներ կարող են և չննալ անձի գիտակցության մեջ, անցնել ենթագիտակցականի ոլորտ, ինչը դժվարացնում է դրանց բացահայտումը:

Նշված դժվարությունները հաղթահարելու ուղին հանգուցային կրիմինոգեն ցուցանիշների առանձնացումն է, որոնք թույլ են տալիս ընդհանրացնելու կանխատեսման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Մոտիվացիայի արտաքին պայմանների ենթահամակարգին վերաբերող հանգուցային գործոնների ամբողջությունը կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ խմբերի 1) սոցիալ-տնտեսական, 2) ժողովրդագրական և սոցիալ-հոգեբանական, 3) կազմակերպարական:

Սոցիալ-տնտեսական գործոնների խմբին են դասվում անձի և նրա ընտանիքի սոցիալական ստատուսը, եկամուտների աղբյուրները, նյութական ապահովածության մակարդակը, մշակութային զարգացման և սպասարկման նյութական հնարավորությունները, բնակարանային պայմանները, նյութական դժվարությունների առկայությունը և այլն: Որպես հիմք ընդունելով մեկ շնչին ընկնող ապրուստի միջին մակարդակը կամ այլ նորմատիվներ, նշված գործոն-

⁶² Ст' у Лунеев В. В. Նշվ. աշխ. էջ 294:

ներից որոշները կարելի է չափել սանդղակային ձևով՝ ցածր, միջին, բարձր: Առավել կրիմինոգեն են նյութական ապահովվածության ցածր մակարդակը (կարիքի, սոցիալական անարդարության դրդապատճառ) և բարձր մակարդակը (սպառողական հոգեբանություն, կուտակելու ձգտում և այլն): Մեծ կրիմինոգեն նշանակություն ունի ընտանիքում անօրինական եկամուտների առկայությունը: Նույն կերպ կարելի է գնահատել նաև մյուս հանգուցային գործոնները:

3. Մոտիվացիայի ներքին պայմանների ենթահամակարգը իրենից ներկայացնում է անձի մոտիվացիոն ոլորտն ու անձնական այլ առանձնահատկությունները:

Մոտիվացիայի ներքին պայմանները, որոնք ընդգրկում են նաև մոտիվացիայի կենսաբանական, հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական մակարդակները, իրենց վրա կրում են ողջ նախորդ սոցիալական և սոցիալ-հոգեբանական այն ազդեցությունների կնիքը, որոնք ինտերիորիզացվել են անձի կողմից: Նախորդ կրիմինոգեն ազդեցությունների ճիշտ գնահատումը հնարավոր է միայն անձի մոտիվացիոն ոլորտի պրիզմայի միջոցով գնահատելիս: Հաճախ նախորդ կրիմինոգեն ազդեցությունների բովանդակությունը չի բացահայտվում, բայց անձի մոտիվացիոն ոլորտում դրանք այս կամ այն կերպ արտացոլվում են: Հանցավոր վարքագծի կանխատեսման համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ ցուցանիշները՝ 1) մոտիվացիոն ոլորտի լայնություն, 2) գերակա պահանջմունքների բովանդակություն, 3) պահանջմունքների և դրդապատճառների հիերարխիկության աստիճան, 4) այլ անձնական առանձնահատկություններ:

4. Տվյալ անձի համար տիպական մոտիվացիայում արտացոլվում են՝ 1) մոտիվացիայի արտաքին և ներքին ենթահամակարգերի փոխներգործությունը՝ կանխատեսողին հետաքրքրող տիպական վարքագծի ակտերում, 2) այդ վարքագծի մոտիվացիայի դինամիկական առանձնահատկությունները, 3) վարքագծի այդ ակտերի սոցիալական ուղղվածությունը:

Ուսումնասիրելով անձի սոցիալական միջավայրը և նրա մոտիվացիոն ոլորտը, ցանկալի է իմանալ, թե ինչպես է իրեն դրսևորում անձը տիպական կենսական իրադրություններում: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է ընտրել մեկ-երկու այնպիսի իրադրություն, որոնք բնութագրական են տվյալ անձի համար: Այդպիսի ընտ-

րություն կատարելու համար առնվազն պետք է իմանալ անձի մոտիվացիոն ոլորտում գերակա դիրք գրավող պահանջմունքներն ու դրդապատճառները: Օրինակ՝ նյութական պահանջմունքների գերակայության դեպքում կարելի է ուսումնասիրել անձի վարքագիծը նյութական արժեքներին տիրանալու հնարավորություն ընձեռող իրադրություններում: Իսկ էզոիստական մղումների, հավակնությունների բարձր կամ ցածր մակարդակի, բացասական հուզական ռեակցիաների առկայության դեպքում նպատակահարմար է ուսումնասիրել անձի վարքագիծը կոնֆլիկտային իրադրություններում:

Անձի տիպիկ մոտիվացիան տիպական իրադրություններում նպատակահարմար է ուսումնասիրել ըստ մոտիվացիայի տարրերի՝ 1) գերակա պահանջմունքների բովանդակություն, 2) հիմնական նպատակներ, 3) նպատակին հասնելու եղանակների ու միջոցների առանձնահատկություններ, 4) անձի կանխատեսողական հնարավորություններ, 5) իրադրությանը համապատասխան վճիռ ընդունելու կարողություն, 6) իր արարքները ղեկավարելու հնարավորություն, 7) իր արարքի հետևանքները վերլուծելու և քննադատաբար գնահատելու կարողություն, 8) իր արարքների սխալակամությունը գիտակցելու և դրանից ճիշտ եզրակացության հանգելու հնարավորությունը: Մոտիվացիայի յուրաքանչյուր տարրի մեջ գրանցվում են այն շեղումները, որոնք հատկանշական են հանցավոր վարքագծի համար: Որքան հաճախ են գրանցվում հանցավոր վարքագծի հատուկ շեղումները, այնքան մեծ է տվյալ անձի կողմից տիպական իրադրություններում հանցանք կատարելու հավանականությունը:

5. Կանխատեսման մեթոդները: Հանցավոր վարքագծի կանխատեսման մեթոդներն են՝ 1) արտամիջարկման, 2) փորձագիտական գնահատականների, 3) մոդելավորման:

Արտամիջարկման էությունը կայանում է հետևյալում. անձի նախկինում և ներկայում դրսևորած վարքագծի առանձնահատկությունները պրոյեկտվում են ապագայի վրա: Պարզ ասած, եթե անձը, օրինակ, նախկինում երկու-երեք անգամ խախտել է ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները, ապա կանխատեսվում է, որ ապագայում էլ այդ անձի կողմից նման խախտումներ թույլ տալու հավանականությունը մեծ է: Այստեղ գործում է այն գիտական դրույթը, համաձայն որի՝ մարդը ոչ այլ ինչ է, եթե ոչ իր մի շարք արարքները: Իսկ քանի որ մարդու արարքները նրա ներքին

ծգտումների և մղումների հետևանք են, ապա վարքագծի մոտիվացիայի կանխատեսումը, որը կառուցվում է անձի նախկին արարքների և նրա մոտիվացիոն ոլորտի ուսումնասիրության հիման վրա, բավականաչափ հուսալի կարող է լինել: Բանն այն է, որ բազմաթիվ լոնգիթյուդային հետազոտություններ ցույց են տալիս, որ առկա է ամբողջ կյանքի ընթացքում մարդու կայունության բավականաչափ բարձր աստիճան⁶³:

Փորձագիտական գնահատականների էությունն այն է, որ հարցման են ենթարկվում պաշտոնատար կամ այլ անձինք, ովքեր պարտավոր են ուսումնասիրել և գիտեն անձի գործարար, բարոյական, հոգեբանական առանձնահատկությունները, նրա անցյալի, ներկայի և ապագա կյանքի ու գործունեության պայմանները: Նշված տեղեկությունների հիման վրա հարցման ենթարկվողները տալիս են իրենց կանխատեսումը: Արդյունքներն ամփոփվում են հետազոտողի կողմից:

Մոդելավորման էությունն այն է, որ հետազոտողը կառուցում է ուսումնասիրվող օբյեկտի ապագայի մտապատկերը: Կանխատեսողական մոդել ասելով հասկանում ենք կանխատեսվող օբյեկտի մոդելը, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս տեղեկություններ ստանալու այդ օբյեկտի ապագա վիճակի մասին: Հանցավոր վարքագծի մոդելի կառուցումն ունի այն առանձնահատկությունը, որ այստեղ մոդելը ոչ թե նյութականացված, առարկայական դրսևորում ունի, այլ հանդես է գալիս մաթեմատիկական կամ տրամաբանական մոդելի, բանաձևերի, սխեմաների տեսքով:

Տրամաբանական մոդելավորման համար հիմք է մոտիվացիայի կառուցվածքային սխեման, համապատասխան ենթահամակարգերի տեսքով, որոնց մեջ ընդգրկվում են յուրաքանչյուր ենթահամակարգին հատուկ քանակական-որակական ցուցանիշները: Այսպիսի մոդելների տարատեսակ են շահադիտական, բռնի-ագրեսիվ և այլ մոտիվացիաների մոդելները: Հանդիսանալով հանցավոր վարքագծի անալոզներ, այս մոդելները կարող են կիրառվել տարբեր կերպ: Առավել տարածված ձևը դրանց օգտագործումն է որպես համեմատության հիմք: Նշված մոդելների հետ համեմատելով այն անձի մո-

տիվացիան, որի վարքագիծը կանխատեսվում է, և հայտնաբերելով դրանցում առկա նմանությունները կամ տարբերությունները, կարելի է պատկերացում կազմել անձի հակասոցիալական ուղղվածության խորության, արտաքին պայմանների կրիմինոգենության և ապագայում դրանց փոխկապակցված զարգացման մասին:

Տրամաբանական մոդելավորման թերությունն այն է, որ որակական ցուցանիշներով արտահայտված մոդելը դժվար է համադրել ուսումնասիրվող օբյեկտի հետ: Այս թերությունը կարելի է վերացնել տրամաբանական մոդելավորումից մաթեմատիկական մոդելավորման անցնելով, որը թույլ է տալիս «չափել» որակական ցուցանիշները: Ներկայումս գոյություն ունեն մաթեմատիկական մոդելավորման տարբեր ձևեր: Առավել տարածված ձևերից մեկը բալային համակարգի կիրառումն է, որի ժամանակ յուրաքանչյուր կրիմինոգեն կամ հակակրիմինոգեն գործոնին որոշակի բալ է տրվում: Ընդ որում, կրիմինոգեն ցուցանիշները նշվում են «+» իսկ հակակրիմինոգեն ցուցանիշները «-» նշանով: Եթե բալերի գումարը «-10»-ից պակաս է ստացվում, ապա հանցավոր վարքագիծ կանխատեսելու հիմքը բացակայում է, եթե գումարը ստացվում է «-10»-ից «+30»-ի սահմաններում, ապա հնարավոր չէ միանշանակ կանխատեսում կատարել և ահնրաժեշտ են հետագա հետազոտություններ, եթե գումարը «+30»-ից ավելի է, ապա պետք է ապագայում հանցավոր վարքագիծ սպասել⁶⁴:

⁶³ St' u Коh И. С. Постоянство и изменчивость личности. // Псих. журнал, 1987, N 4, էջ 130-132:

⁶⁴ St' u Закалюк А. П. Прогнозирование и предупреждение индивидуального преступного поведения. М., 1986, 1 էջ 86:

ԹԵՄԱ 7.
ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՎ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄԸ

1. Հանցավոր վարքագծի մոտիվացիայի ուսումնասիրությունը և դրա հիման վրա իրականացված կանխատեսումը ինքնանպատակ չեն: Հանցավոր վարքագծի մոտիվացիայի առանձնահատկությունների իմացությունը և անձի ապագա վարքագծի հավանական կանխատեսումը թույլ են տալիս ճիշտ կազմակերպելու անհատական կանխումը: Դեռ ավելին, մոտիվացիոն առանձնահատկությունների իմացությունը թույլ է տալիս մշակելու կանխման ընդհանուր սոցիալական միջոցառումներ:

Կոնկրետ անձանց ապագա վարքագծում կրիմինալ շեղումների դրսևորման հավանականությունը կանխատեսելը թույլ է տալիս ճիշտ որոշելու այն անձանց, որոնց հետ պետք է կանխարգելիչ աշխատանքներ իրականացվեն, իսկ հանցավոր վարքագծի մոտիվացիայի առանձնահատկությունների իմացությունը, թույլ է տալիս որոշելու անձի վրա կանխարգելիչ ներգործության օպտիմալ տարբերակները:

Կանխարգելիչ ներգործությունն առաջին հերթին պետք է իրականացվի այն անձանց նկատմամբ, ովքեր դեռևս հանցանք չեն կատարել, բայց որոնց վարքագիծը հանցագործության վերածվելու միտում է դրսևորում: Երկրորդ հերթին կանխարգելիչ ներգործություն պետք է իրականացվի այն անձանց նկատմամբ, որոնք արդեն հանցանք են կատարել: Այս դեպքում խոսքը ռեցիդիվի կանխման մասին է:

Այն դեպքերում, երբ անձը իրավահպատակ վարքագիծ է դրսևորում, սակայն նրա առանձին արարքների սոցիալական ուղղվածությունը, մոտիվացիոն առանձնահատկությունները բնութագրական են իրավախախտներին, կանխարգելիչ միջոցառումները պետք է հանգեն անձի հետ դաստիարակչական միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև նրա անմիջական սոցիալական միջավայրի կրիմինոգեն ազդեցության չեզոքացմանը կամ վերացմանը: Նախահանցածին իրադրություններում, երբ անձը հակաբարոյական կամ

իրավախախտ վարքագիծ է դրսևորում, կարգապահական կամ վարչական զանցանքներ է կատարում, կանխարգելիչ միջոցառումները չպետք է սահմանափակվեն միայն համոզման մեթոդներ կիրառելով: Ընդհանուր դեպքերում անհրաժեշտ է կիրառել նաև հարկադրանքի մեթոդները՝ կարգապահական կամ վարչական պատասխանատվություն: Հանցանք կատարելու դեպքում անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության, և այս դեպքում ռեցիդիվի կանխմանն են ուղղված քրեադատավարական և քրեաիրավական միջոցառումները, որոնք ուղղված են անձի վերասոցիալականացմանը, ուղղմանը: Հետահանցավոր իրադրության դեպքում, երբ անձն արդեն պատիժ է կրել, կիրառվում են համոզման և հարկադրանքի օրենքով նախատեսված բոլոր հնարավոր միջոցները:

Հարկ է իմանալ, որ ընդհանրապես հանցագործությունների կանխումը չի կարող արդյունավետ լինել, որովհետև հանցավոր վարքագիծը կոնկրետ դրսևորումներ ունի: Դրա համար էլ առավել արդյունավետ է հանցագործությունների այն կանխումը, որը հիմնված է անձի մոտիվացիոն առանձնահատկությունների, գերակա պահանջումների ու դրդապատճառների, անձի սոցիալական ստատուսի, մոտիվացիայի արտաքին և ներքին պայմանների հաշվառման վրա: Ըստ այդմ էլ, հանցավոր վարքագծի կանխումը պետք է ուղղված լինի՝ 1) մոտիվացիայի արտաքին պայմանների չեզոքացմանը կամ վերացմանը, 2) մոտիվացիայի ներքին պայմանների չեզոքացմանը կամ վերացմանը:

2. Մոտիվացիայի արտաքին պայմանների չեզոքացմանը կամ վերացմանը ուղղված միջոցառումներ: Խոսքը անձի անմիջական սոցիալական միջավայրում առկա կրիմինոգեն երևույթների վերացման կամ չեզոքացման մասին է: Կոնկրետ անձի կապակցությամբ այդ միջոցառումները կարող են հանգել նրա կայնքի պայմանների առողջացմանը, նրա գործունեության, կենցաղի, ժամանցի պայմանների բարելավմանը, իրենց արարքների համար քաղաքացիների սոցիալական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի անշեղ կիրառմանը և այլն: Հարկ է իմանալ, որ հանցավոր վարքագծի մոտիվացիայի արտաքին պայմանների կտրուկ և էական փոփոխությունը հնարավոր է միայն ընդհանուր սոցիալական միջոցառումների իրականացմամբ: Հանդիսանալով սոցիալ-տնտեսական, կազմակերպակառավարչական, մշակութային, իրա-

վական միջոցառումների համակարգ, ընդհանուր սոցիալական միջոցառումներն ուղղված են հասարակության կարևոր խնդիրների լուծմանը: Այդ խնդիրների հետևողական լուծումը նպաստում է նաև հանցավորության դեմ պայքարին: Մարդկանց կյանքի պայմանների բարելավումը, կենսամակարդակի բարձրացումը, հանգստի և ժամանցի պայմանների բարելավումը, մարդու բարոյական ձևավորման համար անբարենպաստ պայմանների վերացումը կամ չեզոքացումը նպաստում են հանցավոր վարքագծի մոտիվացիայի ձևավորման վրա ազդող պայմանների չեզոքացմանը: Կարելի է փաստել, որ անհատական կանխումը ընդհանուր սոցիալական մակարդակում իրենից ներկայացնում է վաղ կանխում, քանի որ ընդհանուր սոցիալական միջոցառումները ոչ թե խափանում են հանցավոր վարքագիծը, այլ վերացնում են դրա հնարավորությունը⁶⁵: Բայց ընդհանուր սոցիալական միջոցառումները անմիջականորեն ուղղված չեն կոնկրետ հանցագործության կանխմանը. դրանք անդեմ են և հիմնված չեն կոնկրետ անձի մոտիվացիոն առանձնահատկությունների ու ապագա վարքագծի կանխատեսման վրա: Դրա համար էլ կոնկրետ հանցագործության կանխման արդյունավետությունը կախված է կոնկրետ անձի մոտիվացիոն առանձնահատկությունների իմացությունից և ապագա վարքագծի հավանական կանխատեսումից: Իսկ վերջիններս կախված են կոնկրետ անձին շրջապատող սոցիալական միջավայրի կրիմինոգեն և հակակրիմինոգեն երևույթների, այդ անձի կենսագործունեության, կենցաղի, ժամանցի առանձնահատկությունների իմացությունից:

3. Մոտիվացիայի ներքին պայմանների դրական փոփոխությանն ուղղված միջոցառումներ:

Հանցավոր վարքագծի պատճառներին հատուկ է որոշակի «ուշացումը»: Խոսքն այն մասին է, որ հանցավոր վարքագիծը պայմանավորված է անցյալի բացասական, կրիմինոգեն երևույթներով: Կյանքի և գործունեության անբարենպաստ հանգամանքները պայմանավորում են հանցավոր վարքագիծը անձի բացասական սոցիալական փորձի, հակահասարակական հայացքների, սովորությունների, դիրքորոշումների միջոցով: Եվ չնայած անցյալը չի կարելի վերացնել, բայց անձի բացասական հատկանիշները կարող են ար-

⁶⁵ Ст' у Лунеев В. В. С. 24. աշխ. էջ 340:

տամղվել, չեզոքացվել, թուլացվել՝ նրա մեջ դրական փորձ, սովորություններ ու դիրքորոշումներ ձևավորելով: Իսկ դա հնարավոր է միայն կայնքի ու գործունեության բարենպաստ պայմանների ամրապնդման դեպքում: Այդ է պատճառը, որ հանցավոր վարքագծի կանխման արդյունավետության համար անհրաժեշտ է միաժամանակ ներգործել սոցիալական միջավայրի և անձի վրա:

Հանցավոր վարքագծի կանխմանն ուղղված գործունեությունը իր մեջ պետք է ընդգրկի անձի նկատմամբ այնպիսի ներգործության միջոցներ, որոնք ուղղված են երկու հիմնական խնդրի՝ 1) տիպական իրադրություններում անձի տիպական մոտիվացիայի դրական փոփոխությանը (տակտիկական խնդիր), 2) անձի մոտիվացիոն ուղրտի կառուցվածքաբովանդակային վերափոխմանը (ստրատեգիական խնդիր)⁶⁶:

Առաջին խումբ միջոցառումները սահմանափակվում են անձին հանցանքի կատարումից հետ պահելու նպատակով: Ըստ այդմ էլ այս միջոցառումները սահմանափակվում են անձի նկատմամբ կոնկրետ իրադրությունում ներգործելով (նախնական հանցավոր գործունեություն, կոնֆլիկտային իրադրություն և այլն): Այս փուլում հիմնական խնդիրները հանգում են հետևյալին. բացահայտել անձին 1) իր արարքների իրական դրդապատճառները, դրանց ցածր մակարդակը, հակադրությունը այլ անձանց շահերին, 2) արարքի նպատակների ոչ ռացիոնալ, անհեռանկարային, փուլ բնույթը, 3) նպատակին հասնելու միջոցների ու եղանակների հակաիրավակա-նությունը, օրինական միջոցներով այդ նպատակներին հասնելու հնարավորությունը, 4) իր կանխատեսողական եզրակացությունների սխալականությունը, ունեցած ինֆորմացիայի խեղաթյուրվածությունը, 5) այն վճիռների սխալականությունը, որ նա կարող է ընդունել գերակա դրդումների, իրականության ոչ աղեկվատ արտացոլման և իր իրական շահերը չգիտակցելու հետևանքով, 6) իր արարքների և դրանց հետևանքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլ բացասական հետևանքների առաջացման հնարավորությունը:

Հանցավոր վարքագծի կանխման համար շատ կարևոր նշանակություն ունի հասարակական կարծիքի ստերեոտիպների սխալա-

⁶⁶ Նույն տեղում, էջ 347:

կանության բացահայտումը (օրինակ, այն ստերեոտիպը, ըստ որի, հանցագործությունների մեծ մասը չեն բացահայտվում և շատ հեշտությանը կարելի է խուսափել պատասխանատվությունից):

Կանխման տակտիկական խնդիրների լուծման համար կիրառվող միջոցառումները հիմնվում են համոզման և հարկադրանքի մեթոդների վրա: Այդ մեթոդները հանգում են հետևյալին՝ 1) համոզում խոսքով և գործով, 2) անձի վարքաքժի կազմակերպումը նրան առաջադրանքներ տալով, նրա նկատմամբ որոշակի պահանջներ ներկայացնելով, 3) իրավաչափ վարքագիծ խթանելով, որը կարող է իրականացվել անձի նկատմամբ վստահություն ցուցաբերելով, մրցույթներ կազմակերպելով, պարզևատրելով, 4) անձի նկատմամբ բարոյական ճնշում գործադրելով, կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին նրան զգուշացնելով, իրական կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելով:

Անձին իր նպատակների և դրանց հասնելու եղանակների հակաիրավականության ու անհեռանկարության մեջ համոզելը, կրիմինոգեն իրադրություններում իրավաչափ վճիռներ կայացնելու ընդունակություն ձևավորելը, անձի սոցիալապես օգտակար հետաքրքրությունների խրախուսումը, գերակա կրիմինալ դրողումները վերափոխելու մեջ անձին օգնություն ցույց տալը, անձի ջանքերի ուղղորդումը դեպի սոցիալապես օգտակար գործունեություն, բացասական սովորություններից հրաժարվելու գործում նրան օգնություն ցույց տալը, հարկադրանքի միջոցների գործադրումը, պետք է իրականացվեն ստեղծագործաբար, կոնկրետ անձի և իրադրության առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հանցավոր վարքագծի կանխման համար անչափ կարևոր նշանակություն կարող է ունենալ անձի նկատմամբ հոգեբանական ներգործության միջոցների կիրառումը. մասնավորապես, կոնֆլիկտային հարաբերությունների շտկումը, անձի մեջ համապատասխան իրավագիտակցության, կամային հատկանիշների ձևավորումը, հոգեբանական լարվածության թուլացումը և այլն:

Շատ կարևոր նշանակություն կարող է ունենալ անձին կյանքի դժվարությունների ու պրոբլեմների նկատմամբ իմաստուն վերաբերմունքի տարրական սկզբունքներին սովորեցնելը՝ 1) գլխավորը երկրորդականից սահմանազատելու կարողություն, 2) ներքին

հանգստություն, 3) հուզական կայունություն, 4) իր հնարավորությունները ճիշտ գնահատելու կարողություն, 5) անսպասելի իրադարձություններին պատրաստ լինելու կարողություն, 6) ինքնադիտարկման հնարքների տիրապետում, 7) ուրիշներին հասկանալու և նրանց ապրումակցելու ձգտում, 8) իր սխալները վերլուծելու, դրանցից դասեր առնելու, իր փորձից դրական եզրակացությունների հանգելու կարողություն և այլն⁶⁷:

Անձի մոտիվացիոն ոլորտի կառուցվածքաբովանդակային վերափոխմանն ուղղված միջոցառումները հիմնվում են տակտիկական միջոցառումների արդյունքների վրա: Եթե տակտիկական խնդիրը լուծված չէ, ստրատեգիականն անհնար է իրականացնել: Բայց, պետք չէ կարծել թե տակտիկական և ստրատեգիական խնդիրները ժամանակային առումով սահմանազատված են. դրանք իրագործվում են միաժամանակ: Այլ հարց է, որ ստրատեգիական խնդիրները հանգում են արդեն ձեռք բերված արդյունքների ամրապնդմանը: Անձի մոտիվացիոն ոլորտի ձևափոխմանն ուղղված միջոցառումների նպատակը ոչ թե անձին հանցանքի կատարումից հետ պահելն է, այլ նրան ակտիվ, դրական սոցիալական ուղղվածություն ունեցող քաղաքացու վերածելը:

Մոտիվացիոն ոլորտի ձևափոխմանն ուղղված միջոցառումները պետք է հիմնվեն մոտիվացիայի երկրորդ ենթահամակարգի (մոտիվացիայի ներքին պայմաններ) խոր իմացության վրա: Հանցանք կատարող անձանց մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններին համապատասխան՝ նշված միջոցառումները պետք է ուղղված լինեն՝ 1) անձի դրական կապերի ու հարաբերությունների ընդլայնմանը, 2) այդ կապերի ու հարաբերությունների հիերարխիկության ու կայունության ամրապնդմանը, 3) գերակա դրդապատճառների դրական սոցիալական ուղղվածության ձևավորմանը: Այս փուլում կիրառվում են համոզման և հարկադրանքի այն նույն մեթոդները ինչ որ տակտիկական խնդրի լուծման ժամանակ: Փոխվում են միայն շեշտադրումները. հիմնականում կիրառվում են համոզման և խրախուսանքի մեթոդները:

Անձի կապերի ու հարաբերությունների ընդլայնումը (մոտիվացիոն ոլորտի հարստացում) իրականացվում է նրան նախկինում ան-

⁶⁷ Ст' у Гримак Л. П. Резервы человеческой психики. М., 1999, էջ 182-185:

հայտ արժեքներին հաղորդակից դարձնելու միջոցով (արվեստ, սպորտ, դրական ավանդույթներ ու սովորույթներ), նրան հնարավորություն տալով տիրապետելու որևէ մասնագիտության, նրա սոցիալական միջավայրը փոխելով և հաղորդակից դարձնելով այլ, դրական ուղղվածություն ունեցող սոցիալական խմբերի գործունեությանն ու ապրելակերպին, նրա սոցիալապես օգտակար գործունեությունը կազմակերպելով: Այս ամենը հնարավորություն է տալիս արդիականացնել այն դրական պոտենցիալ պահանջումները, որոնք արդեն իսկ առկա էին անձի մոտ, բայց անբարենպաստ սոցիալիզացիայի պատճառով արդիականացված չէին: Բացի այդ, նշված միջոցառումները և, որ ամենակարևորն է անձի սոցիալական ակտիվության բարձրացումը, թույլ են տալիս անձին զգալու իր նշանակալից դերը սոցիալական կյանքում: Իսկ դա իր հերթին թույլ է տալիս անձին սոցիալապես օգտակար ձևերով իրագործելու իր ինքնահաստատման պահանջումները, ինչը շատ մեծ հակակրիմինոգեն պոտենցիալ է պարունակում:

Անձի մեջ նշված սոցիալապես օգտակար հատկությունների ձևավորումը հետագա ամրապնդման կարիք է զգում, որն իրականացվում է անձի սոցիալական դրական ակտիվությունն անընդհատ խրախուսելու, իրավական նորմերի նկատմամբ խոր հարգանք սերմանելու, պատասխանատվության զգացում ձևավորելու, իր պահանջումները հասարակության շահերի հետ փոխհամաձայնեցնելու կարողություն ձևավորելու, ինքնակատարելագործման և ինքնադաստիարակության ներքին մղում ձևավորելու միջոցներով:

Հարկ է իմանալ, որ անձի մոտիվացիոն ոլորտի վերափոխումը խիստ բարդ և երկարատև ջանքեր պահանջող գործընթաց է (ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրական վերափոխման հնարավոր է լինում հասնել դեպքերի մոտ 30-ից 40 %-ում), որը անպայման պետք է համալիր բնույթ կրի: Նույնիսկ մեկ-երկու միջոցառման բացթողումը կարող է ետպես խանգարել գործին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Антонян Ю.М. Психологическое отчуждение личности и преступное поведение. Ереван, 1987.
2. Антонян Ю.М. Жестокость в нашей жизни. М., 1995
3. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996.
4. Аракелян С. В. Преступное насилие, Ереван, 2013
5. Бартол К. Психология криминального поведения. СПб., 2004.
6. Биологическое и социальное развитие человека. М., 1997.
7. Виллонас В.К. Основные проблемы психологической теории эмоций // Психология эмоций. М., 1982.
8. Волков Б.С. Мотивы преступлений. Казань, 1982.
9. Габузян А.А. Проблемы преступности в Армении в переходный период. Ереван, 2007.
10. Джекебаев У.С. О социально-психологических аспектах преступного поведения. М., 1971.
11. Дубинин Н.П., Карпец И.И., Кудрявцев В.Н. Генетика. Поведение. Ответственность. М., 1982.
12. Живкович Л. Теория социального отражения. М., 1969.
13. Игошев К.Е. Типология личности преступника и мотивация преступного поведения. Горький, 1974.
14. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб., 2000.
15. Квашис В.Е. Преступная неосторожность. Владивосток, 1986.
16. Криминальная мотивация. М., 1986.
17. Кудрявцев В.Н. Борьба мотивов в преступном поведении. М., 2007
18. Кудрявцев В.Н. Преступность и нравы переходного периода. М., 2002
19. Литвинов А.Н. Предупреждение преступлений и правонарушений. М., 2004
20. Лунеев В.В. Мотивация преступного поведения. М., 1991.

21. Механизм преступного поведения. М., 1981.
22. Муздыбаев К. Психология ответственности. Л., 1983.
23. Ратинов А.Р., Ефремова Г.Х. Правовая психология и преступное поведение. Красноярск, 1988.
24. Тузов А.П. Мотивация противоправного поведения несовершеннолетних. Киев, 1982.
25. Фокс В. Введение в криминологию. М., 1980.
26. Шестаков Д.А. Криминология. СПб, 2008
27. Шнайдер Г.Й. Криминология. М., 1994.
28. Шульгин А.В. Психология преступного поведения и личности преступника. М., 2011.
29. Якобсон П.М. Психологические проблемы мотивации поведения человека. М., 1969.
30. Яковлев А.М. Теория криминологии и социальная практика. М., 1985.
31. Donald Shoemaker. Theories of Delinquency. Sixth Edition. Oxford University Press, 2010.
32. Michael Levi. Fraud: Organization, motivation and control. Ashgate 1999.
33. Volkan Topalli. Offender decision-making and motivation. Oxford University Press, 2011.
34. Luca Malatesti, John McMillan. Responsibility and psychopathy: interfacing law, psychiatry and philosophy. Oxford University Press, 2010.
35. Charles T. Stewart. Dire emotions and lethal behaviors: eclipse of the life instinct. Routledge, 2008.
36. Charles R. Tittle; Raymond Paternoster. Social deviance and crime: an organizational and theoretical approach. Oxford University Press, 2007.